



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



85 | F223 - J3
V-27 | except ~~facey~~
Spfeney uf

19 NOV 2010
31 MAY 2008

Գ. ԱՐԵՎԵԴԵՑՑ

ՅԻՒԱՆԴ ՍԵՐ

Ա. Թ. Ա. Զ. Ա. Պ. Ո. Հ. Յ. Կ. Ն. Վ. Ե. Պ.

— աշխատակից —

Յ. ա ա ա գ ը ս ւ թ ի ւ ն

Թարգմ. Ա. Գ. Գ. Ե.



Համբուրգով. Տպարան „Զեմելիկ“

1905
(24)

ՏԱՐԱՆ 13

8105

ՀՀ
Մ-27

ՆԻԿԻ

ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ

ԵՒ

ԵՐԻՑԵՍՈԲՐԴՆԵՐԻՆ

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻՑ.

Дозволено Цензурою. Тифлисъ, 2 Декабря 1904

2233 ԱՄՆՀԱՅԻ

Ե Բ Կ Ո Ւ Խ Խ Ո Ս Ա Գ

Հասարակական ազմատայած բազմաթիւ տիտերի դէմ մաքառել և նոցա, որքան կարելի է, հիմնի վեր տապալել, դա այժմեան փրկարար դիտութեան զրադեցնող խնդիրներից մէկն է:

Կուել անդադրում մարդկութեան կամ ազգի թէ սգեկան և թէ ֆիզիքական ուժերը ջլատող, քայլայող տիտերի դէմ, դա իւրաքանչիւր ազգի մտածող, հոգատար գտակարգի առօրեայ զբաղմունքներից մէկն է այսօր:

Գիտութեան բոլոր ոյժը այսօր ուղղւած է իսկապէս մարդկանց փշացած, նեխւած, միանդամայն ձևափոխւած բարքերը բարելաւել, նոցա, զուրս հանելով այդ ընկած դրութիւնից, դնել մի այնպիսի փրկարար ճանապարհի վերայ, որը տանում է գէպի անհատի, հետեապէս և հասարակութեան երջանկութիւնը:

Աւելրոդ կը լինի մեզ մի առ մի թւել՝ թէ ինչպիսի ախտեր են նեղում ներկայումս մարդկութեանը ընդհաններապէս, կամ ո՞ր ազգի մէջ դորա ո՞ր տեսակ-



7223 - 7

ներն են տարածւած, և վերջապէս, որոնք են այն աշքի ընկնող ականաւոր գործիչները, որոնք իրանց ամբողջ գորութիւնը ուղղել են դէպի հասարակութեան բարքերը լաւացնող, փրկող միջոցների գործադրութիւնը:

Յաւական է յիշել միայն մեր հասարակութիւնը իւր արդի գորութեամբ և քննել նորան ամեն կողմից, հետազօտել խիստ վիրաբուժական միջոցներով. ձեռքում բռնած սուր վիրահատը մօտենալ անխնայ և անդամահատել նորան, քննել նորան ուշի ուշով, զննել նորա մարմնի խաւերի իւրաքանչիւր մասը, իւրաքանչիւր թելր և տեսնել, արդեօք կարելի՞ է գտնել նորանում մի որեւէ առողջ կառու:

Հաւատացած եղէ՝ հետեանքը խիստ ախուր, աննախանձելի և գրեթէ յուսահատական կը լինի. . . : Ճշմարիտ է, գուք կը գանէք նրանում և շատ առողջ մասեր, բայց հիւանդուները, փաած, փշացած, նեխւածները կը գերակռնեն առողջներին: Իսկ մի մարմին, որը կազմւած է անթիւ ոչ առողջ, հիւանդու անդամներից, փատառողջ, փտած մասերից, կարգ՝ է արդեօք կեսանքի ուղին կանոնաւոր շարունակել . . .

Բժշկականութիւնը այդ հարցին բացասական պատասխան է տալիս:

Նոյն ուղղութիւնն է բռնել այժմ մեղանում գիտութիւնը, թէև ոչ այն լայն ծաւալով, ինչպէս այդ կայ ուրիշ, մեզանից դարձացմամբ բարձր, աղգերի մէջ: Նոյն ինդիրն է զբաղեցնում այժմ մեր հասկացող, հասարակութեան ցաւերով տանջւող, անձնաւորութիւն-

ներին. այդ իսկ տեսակ քայլայող ախտերի դէմ է մաքառում այժմ մեր ինտելիգենցիան իւր ամենաթոյլ անդամից սկսած մինչև ամենաուժեղը. և դոցանից իւրաքանչիւրի կէտ նպատակին է հասկացնել հասարակութեանը, ամբոխին իւր վտանգաւոր ուղղութիւնը, նորա երեսովը տալ իւր թոյլ կողմերը, նորա աշքի առաջ պատկերացնել այն ախուր տեսարանները, որոնք առաջ են գալիս հասարակական ընդհանրացած կործանիչ ախտերից:

Այդ սրտաճմիկ տեսարաններից մէկը ահա մնեք առաջարկում ենք հասարակութեանը: Այդ պատկերը բոլորովին իրական է, և վերցրած հէնց իւրա ժողովրդի միջից. այդ փշաքաղող պատկերը ծնունդ է ժողովրդի անմտածած, շշռած քայլի, խելացի գասազութիւնից սպրդնած գործունէութեան:

Թէ ինչ ախուր հետեանքներ կարող են յառաջ գալ անզգոյշ ամուսնութիւնից, անհամապատասխան զոյգերի միաւորւելուց, այդ յայանի է քիշ թէ շատ հասկացող, մտածող ամեն մի անհատի. և թէ որքան ծանրակիցն երկիւղածութեամբ պէտք է մօտենալ ամուսնութեան սուրբ սեամին, այդ պէտք է հասկանայ ամեն մի մարդ. որ իւրան հասարակութեան սրտացաւ անդամ է համարում:

Իսկ այդ սուրբ վայրից, ամուսնութեան որբազան սեղանից, պէտք է միանգամայն հեռու կինան այն անձինք, որոնք տառապում են հոգեկան, ջղային և վեներական հիւանդութիւններով. որոնց կեսանքը անց է կենում մի շաբթ տանջանքների ու դառնութիւնների

մէջ, որոնք հեծում են այդ տեսակ ժառանգական հիւանդութիւններով և որոնց սպասում է անողոք մահի հատու գերանդին, շարշարանքներով լի վախճանը, որը գուցէ վրայ է համնելու շատ շուտ, զեռ ևս կեանքի յոյսերով լի նորաբօղոջ գարեան ժամանակ:

Սյդպիսիները ամուսնանալով իրենց անբուժելի հիւանդութիւնը, ինչպէս մի սուրբ աւանդ, կաւանդին իրանց զաւակներին, սոքա փոխագարձաբար հրկորդ սերնդին. և այն՝ ամուսնութեան սուրբ կապի միջոցաւ: Եւ ահա մենք կունենանք մի սերոնդ, կարճատե կեանքով, որոնք վարակւած վասնգաւոր հիւանդութեամբ, անընդունակ միանգամայն համայնական գործունէութեան, աշխարհ են գալիս կարծես միայն նրա համար, որ իւրաքանչիւր տանջանքի վայրկեանին անէծք կարդան իրանց հիւանդութ ծնողներին. նոքա, այդ վորբիկ արարածները, միմեանց յետեից, երկար տանջանքներից յետոյ, կը թառամեն, ինչպէս լոյսից ու չերմութիւնից զուրկ ծաղիկ, ինչպէս անժամանակ բացւած վարդի կոկոն, որի արմատից սննդաղար ոյժը, կենսական հիւթը անկուշա սրթերն են յափում:

Սյդպիսիները ամուրի պիտի մեռնեն, եթէ չեն ուզում զաւաճանել դէպի հասարակութիւնն ունեցած իրենց սուրբ պարտականութիւնները, պարտականութիւն, որը՝ իմ կարծիքով, բարձր է ամեն որբութիւնից. . .

Թարգմանելով Գլորենցիայի համալսարանի Անգրապօլօգիայի պրօֆեսոր Պայօլ Մանտեգացզայի «Հիւանդ Սէր» առողջապահական վեպը, մեր նպատակն

է եղել հայ համարակութեան ուշադրութիւնը գրաւել այն սրտամմիթիկ աղէտների վերայ, որ յառաջանում է հիւանդութ (ջղային ու ոգեկան) անհատների ամուսնալուց. տալ նրան մի թշւառ ընտանիքի պատկեր, որտեղ ակար հօր հիւանդութեան թոյնի չնպահի, նրա յառաջացրած սերունդը, զեռ ևս ծաղիկ հառակում թառամում է անողոք հիւանդութիւնից. որպէս զի կարգարով այդ դժբաղդ ամուսնութեան հիւտկանիքների ճշգրիտ նկարագիրը, զգուշանան ուրիշների թշւառութեան և վաղահաս մահան պատճառ լինելուց:

Ե. ՆԱԼՅԱՆԴԵԱՆ

1893 թ. 15 Կոյեմբ.
Աղելսանըրայով.

Ա

ԺԱՎԻ ՎԵՐԱՅ.

185. Ճւի յուկիսի Զ-ին, առաւօտեան մօտ
11 Ճամփն, Մառւոհիմտօն նաւահանգստում
նստեցի մի փոքրիկ շոգենաւ, որը պէտք է հաս-
ցնէր ինձ պօստային «Թէմզա» շոգենաւին: Նա,
լցւած գոլորշիով և վերցրած խարիսխով, ան-
համբել սպասում էր Բրազիլեա և Բիօ-պլ-լա-
Պլադա զնացող ճանապարհոգներին: Փորրիկ
շոգենաւի վրայ գտնւում էր մարդկանց խուռն
բազմութիւն: Ես հազիւ կաբոզանում էի շար-
ժւել ամբոխի մէջ: Ազգականները և բարեկամ-
ները խմբւում էին զնացովների շուրջը համ-
բուրւում, միմեանց ձեռք սեզմում և լալիս էին:
Ի՞նչ զգացմունքներ ասես չէին վիզովում այս
խուռն բազմութեանը: Ո՞քան անկեղծ վիշտ,
տանջանք և յոյս կար այստեղ: Եւ այս տմէնք

այտայտուում էր բոլորսին ազատ: Ոչ ոք
ամենափոքր ուշադրութիւն անգամ չեր դար-
ձնում այս ու այն կողմ ընած նաւաստիների
վերայ, որոնք յօդնել էին զիշերւայ հսկումից:
Քաղցր խօսակցութիւնները, գառն հառաջանք-
ները, սիրային քշփոցը, այս բոլորն անհետա-
նում էին ընդհանուր զգրգոցի և մերենայի աղ-
մուկի մէջ, որին ըստ երեսյթին, ամեննեին չեր
շարժում այս բոպէի բանաստեղծութիւնը: Նրա
համար բոլորովին օտար էին մարգիային զգաց-
մունքների ամենաշերմ արտահոսումը և նա,
արձակելով ծուխի ոհ բուլաներ, մաթեմաթի-
րական ճշտութեամբ պտտուում էր իւր անիւ-
ներսի:

Եյս աղմուկի և հրհրոցի մէջ, ևս դրժ-
ւարութեամբ գտայ մի փորբիկ վայր, խա-
րիսխի շղթաներից և արկղներից կազմած
բուրգի մէջ: Տեղաւորելով այդտեղ, ևս սկսեցի
դիտել տիք, ևս ցանկանում էի վերջին հրա-
ժեշտու տալ Եւրոպային, ուր քոզնում էի խիստ
շատ մօտ և թանկագին բաներ ինձ համար: Ես
հրաժեշտ էի տալիս Ա, Միքայէլի զմբէթին,
Ընդլիային, որը շուտով ոլորտ, անհետանար
աշքիցս և, որը ես թաղեկու էի մի բանի տարով:

Եյն մարգը, որը սովոր է իւր ամբողջ կեանքը
անցնել կանոնաւոր, օրէցօր, ժամէ ժամ, բոպէ
առ բոպէ, մի ուրիշ տեսակ գրութեան մէջ է
ընկնում, երբ իւր կեանքի սովորական թելլ
ընդհատում է և նա իրան յանձնում է մի
այնպիսի անկայուն, փոփոխող տարրի, որպի-
սին է ջուրը: Նրա համար գծւար է, բայց,
գրա հետ միասին, նրան կերում է մի տեսակ
ախորժելի վրգովմունք: Նա գւարճանում է այն
բալէներով, երբ ստիպւած է թողնել ամենա-
թանկագին սովորութիւնները. իսկ մարգկանց,
հանդամանքների և առհասարակ, բոլոր շրջա-
պատովների արագ փոփոխութիւնը ներկայա-
ցնումէ անհատին իրեն, իւր աշբերի տուաց: Նա
կարծես զգում է թէ նոր ծնկել է մի անհուն
անապատում: Եյս հազւագիւտ վայրկեաններում
մարդս առանձին ուշադրութեամբ դիտում է և
աշրի է անցնում այն ամենը, ինչ որ թողնում
է, և անհետացող երեսյթի վերջին պատկերը
տպաւորւում է նրա սրտում յաւիտեանս յաւի-
տենից:

Նոյնը զգում էի և ես, այդ, ինձ համար
անմոռանալի, առաւտեան: Ընկեղծ սիրով ես
նայում էի զէպի տիք և ուղարկում էի վերջին

հրաժեշտի ողջոյնս այդ մշուշի և բարածու-
խի երկրին, գեղեցիկ, կանաչազարդ գտշտերին
և անթիւ ծխացագ խրճիթներին, փոքրիկ մոխ-
րագոյն տնակներին և, եկեղեցու պէս բարձր
գործարանների ծխնելոյներին։ Ես հրաժեշտ էի
տալիս այն երկրին, ուր չէին լուսում երաժշտու-
թեան մեղեղիները, որովհետև երաժշտութիւնը
պատահմամբ այդտեղ ընկնելսվ, անկարող եղաւ
հաշտւել մերենաների անընդհատ աղազակի և
ամրոխի վայրենի շփոթի հետ, և հեռացաւ
ընդմիշտ։ Ես հրաժեշտ էի տալիս այն երկրին,
ուր մարդիկ թէի կոպիտ են, բայց անխօնջ ու
գործունեայ. ուր նոքա զբազւած են այն ամե-
նով, ինչ որ միայն պահանջում է եռանդը և
գիտութիւնը. այն երկրին, ուր իւրաքանչիւր
անհատ ինքնուրոյն է, իւրաքանչիւր միտք կա-
տարելապէս ըմբռնւում է։ Խորասուլված լի-
նելով մտածմունքի մէջ, ևս չը նկատեցի, թէ
ինչպէս մեր շողենաւը մօտեցաւ «Թէմզային»
և կատեց այդ հսկային, որը կարծես խոհարհ-
ուում էր մեղ իւր գիրկը առնելու։ Այժմ մեր
շողենաւի բոլոր ճանապարհորդները պէտքէ տե-
ղափոխէին մեծ նաւը։ Մրածմի՛կ տեսարան։
Բայց ահա հասաւ վերջին բոպին։ Բարեկամ-

ները և ազգականները թողմում էին «Թէմզան»
և վերջին անգամ բաժանւում էին իրենց մտե-
րիմներից։ Ուրքան վիշտ և տանշանք կայ մարդ-
կային կեանքի մէջ։ Ի՞նչպէս թուժում է սիր-
ուը, դառնութեամբ ծծւած սպունգի այդ
կտորը։

Կապիտանը և շոգենաւի աստիճանաւոր-
ները խնդրում էին բարեկամներին և ազգական-
ներին շուտով հեռանալ շոգենաւից, իսկ նա-
ւաստիները ուղղակի հրում էին նոցա աստի-
ճաններից ցած։ Ուզեկցողները մի բանի
բայլ հեռանում էին, բայց կրկին թարուն յետ
էին գալիս արկղների և պարանների լաբիւրին-
թոսը, նորից սկսում հրաժարական ողջոյնը և
ամուր զրկւելով, համբուրւում էին վերջին ան-
գամ։ Եւ «Թէմզայի» աստիճանների վրայ
կաղմեց մի ամբողջ շղթայ, ուղեկցողների ձեռ-
քերից և մարմիններից, որոնք գործադրում էին
գերմարդկային ոյժ միմեանցից զատւելու հա-
մար։ Սյս շղթան երբեմն խորտակւում էր նա-
ւաստիների սաստիկ ճնշումից և երբեմն էլ
նորից միաւորւում։ Վերջապէս անսղոր զան-
գակը շարժւելու նշան տուեց և «Թէմզան»,
կարծես թէ դայրանալով տիրող բառուց և

անկարգութիւնից, առաջ շարժւեց և վերջ
տւեց բաժանման դասն բոլէներին: Երկու՝ մեծ
ութեամբ միմեանցից այդքան տարբեր և գեռ
և իրար մօտ կանգնած շոգենաւերի վրայ բար-
ձրացաւ թաշկինակների մի ամբողջ ամպ, ի
նշան փոխադարձ ողջունի և միասին լուսում էին
հազար ու մի արտաստալի հրաժեշտներ, սի-
րալիր խօսրեր և բարի ցանկութիւններ:

Փոքր շոգենաւը մեզ ուղեկցեց մի քիչ
տեղ: Արտասուրիները, ճոճող ձեռքերը և քըն-
քոյշ հրաժարականները կարծես կրկնապատկում
էին նրա արագութիւնը և նա սահում էր այն
կանաչ փրփրած ակոսի միջով, որ կազմում էր
մեծ շոգենաւը: Իհարկէ առաջինը չէր կարող
հասնել այս վերջինին, բայց միայն կարելի էր
որոշել սիրելի գէմքերը, այդ խուռն բազմու-
թեան մէջ միայն սրտով կարելի էր դուշակել
ծածանուող թաշկինակը: Թզուկը ուղեկցում էր
հոկային, ապա պառյտ ահելով նա յետ դար-
ձաւ: Մի անգամ ևս վերջին ձայնը խուլ կեր-
պով լսեց, որը կորչում էր, ծովի յորձաները
պատառող, անիւների ազմուկի մէջ:

Թախիծը ինձ պատեց: Ես ընկայ մտած-
մուների մէջ: Ճանապարհողները, տւած հրա-

մանի համաձայն, բաժանւեցին երկու խմբի.
ոմանը՝ մեծամտոնութիւնը, մնացին շոգենաւի
զեկի մօտ, իսկ միւսները գնացին ցոռվի կող-
մը: Առաջիները՝ խմբւելով զեկի հինց ծայրին,
ոչ մի կերպ չէին կարողանում աշքերը հեռա-
ցնել զեռ ևս երեացող երկրից: Նոքա, մինչև
վերջին վայրկեանը, ագահարաբ որսում էին
ձայները և ներշնչում էին հայրենիքի քաղցրա-
սիր օվը, ուր թողնում էին իրանց անձնական
«Եսի» մեծ մասը: Գորք իսկական տակալուկ-
ներ էին. նոցա համար գժւար էր հայրենի
երկրից բաժանւել, ուր թողնում էին հօր գե-
րեզմանը, կամ մանկան օրօրոցը և կամ այն
կաղնին, որի հովանու տակ նոցա սիրոյ առա-
ջին համբոյրի շրջպայն էր լսել, նոքա դառն
ողբում և ցնցւելով կոտրատում էին իրանց
ձեռքերը: Իսկ շոգենաւի ցոռվի մօտ հաւար-
ւել էին երջանիկները: Նոցա շրթունքների
վրայ խաղում էր ժպիտը՝ լի ուրախութիւնով
և յուսով: Նոքա նայում էին հեռուն, Ամերիկայի
ուղղութեամբ, որին մօտենում էին անիւի իւ-
րաքանչիւր պտոյտով: Այնտեղ նոցա ծննդա-
վայրն էր և գիտում էին նրան: Նոքա մտցով
արգէն տեսնում էին թրանց տունը, լսում էին
չիւանգ ուր.

Բըազիլիայի և Թիօ-պլ-լա-Պլատիայի նաւառ-
տիների խօսակցութիւնը: Կարծես տեսնում էին
նոցա, որոնք անհամբեր սպասում էին իրանց,
տեսնում էին թէ ինչպէս նորա բնդառաջ են
վազում:

Սակայն կային և այնպիսիները, որոնք
ամեննեին հայրենիք չունեն և կամ անիծում են
նրան և համարձակ ընկնում են նոր երկրներ
ոսկի, փառք և արկածներ որոնելու: Նորա
իրանց յետից թողնում են վիշտ, ձանձրոյթ
և հիասթափութիւն: Եւ ծովի արձաթափայլ
անհուն հեռաւորութիւնը, որ տարածւում էր
նոցա գիմացը, պայծառ գոյնով նկարում էր
նոցա առաջ նոր վարդագոյն յոյսեր:

Եեկի վրայի արտասուզները բաժանւած էին
ցուուկի մօտ ուրախացողներից հազիւ մի քանի
մետր հեռաւորութեամք, բայց միևնուն ժամա-
նակ գոցա մէջ կար մի անյատակ անդունդ,
ժարդկային սրտի մի ամբողջ պատմութիւն . . .

Իսկ ես, որ կարող էի զսպել սրտիս յուզ-
մուները, կարողանում էի ստիպել նրան լոել և
կամ թոյլ տալ նրան բարախել խիստ և ուժ-
գին, կանգնած էի խորասուգւած մարերի մէջ.
բայց շուտով ուշադրութիւնո զրաւեց մի ճա-

նասլարհորդ: Նա որոշ տարբերում էր իւր գե-
ղեցիկ և վէճ գէմքով սովորական հասարակ
ամբոխից, որը կարելի է տեսնել ամեն տեղ,
ուր կը ժողովին մի քանի մարդիկ:

Դա անկառկած անգլիացի էր չը նայելով
ոհ մազերին և փայլուն աշքերին: Նորա ան-
գլուխարսոնական ծագումից լինելու պարզ ապա-
ցոյցն էր նուրբ, վարդագոյն բիթը և յատկա-
պէս ոչ գեղեցիկ, բայց համարձակ շրթունք-
ները, որոնցով օժաւած են միմիայն անգլի-
ացիք, այս շրթունքները, կարծես, ստեղծւած
էին նրա համար, որ անվիթար առաջնորդէին թէ
իրան թէ ուրիշներին. նորա հանգչում էին
երկաթեայ կզակի վրայ և, կարծես, որոնում
էին մի յենարսն, այն պատճառով, որ աւելի
համարձակ ոտք գնեն կեանքի ասպարիզում.
անգլիացու շրթունքներին զրոշմւած է հա-
տատակամութեան անխղելի և տոկուն գործու-
նէութեան կնիքը:

Այս գեղեցիկ և կայտառ երիտասարդը
ունէր նոյնպիսի շրթունքներ: Ես երբէք չէի
տեսել ուրախութեան աւելի պարզ արտայայ-
տութիւն այդպիսի մի գեղեցիկ գէմքի վրայ:

Նրա ուրախութիւնը վկայ էր մի ինչ ոք

անպատմելի բարձր յոյսի, որովհետև, նա, ի
հարկէ եսական չէր, բայց և այնպէս իւր եր-
ջանկութիւնը չէր թագցնում այն ժամանակ,
երբ շուրջը ամենը բարտասում և կոկծում
էին:

Զեռքով թեթևակի յենելով առագաստա-
կալի պարանին, շոգենաւի հանդարտ օրօրով
կարծես հրճում էր և, ներքին աշխարհոց ան-
ջատւելով, սլանում էր եթերում, յափշտակ-
ւած անմենելի ուրախութեամբ: Աշրեը լայն
բացել էր, դէմքի վրայ փայլում էր ներքին
ծանր յուղմունը, կուրծք ըանդադար բարձրա-
նում և իջնում էր. նա աշրեսով ուտում էր
ծովը, որտեղից իւր երջանկութիւնն էր սպա-
սում, և զգալով ծովային աղի և բուրիչ ըա-
մին, իւր ուրախութիւնն արտայայտում էր
հանդարտ և խորը չնշառութեամբ: Երեխ վա-
կուց իրան այգպէս չէր զգացել:

Ես զիմեցի սենեակս և զբաղւած էի շո-
րերո կարգի բերելով, երբ հնչեց նախաճաշի
զանդակը. ես ամենից ուշ մօտեցայ սեղանին: :
Բարկութիւնս եկաւ, երբ չկարողացայ ուղածիս
համաձայն հարեան ընտրել և ստիպւած էի
բաց տեղով բաւականանալ: Որրան մեծ էր

զարմանքս, երբ տեղս սեղանի մէջ տեղն ըն-
կաւ: Առաջին անգամ աշրիս ընկան երկու
մարդիկ, որոնք երեխ մի տեսակ հակակրու-
թիւն էին զգացել մէկմէկուց և իրանց մէջ զա-
տարկ աթոռ էին թողել:

Տեղս բանելով, նախ գիտեցի երկու հա-
րեաններիս, հետաքրքրւած այդպիսի բարյայ-
կան-էլէրտրական երկոյթով: Նոյանից մէկը,
որը ինձ շատ ուրախացրեց, նոյն, իմ ուշագրու-
թիւնը գրաւող, անզիխացին էր, իսկ միւսը
պատկանում էր այն մարդիկների թւին, Թրոնց
կարելի է զեղեցիկ կերպով ուսումնասիրել մի
ժամում: Եւ իրաւի, նախաճաշից յետոյ ես խ-
կայն կարողացայ նրան մոցնել իմ systema հօ-
տինս-ի մէջ, այսպիսի համառօտ բնախօսա-
կան օրոշումնիվ:

«Համբուղի վաճառական, 55 տարեկան,
32 առողջակազմ ատամներով և առողջ ստա-
մորսով, կարող է մարսել 320 տամների աշ-
խատութեան արդիւնքը. չէ, կարմիր, հաստիկ,
պսպղուն: Նա շարունակ ծիծագում է, միշտ
ոոված և նախաճաշի ու ճաշի մէջ եղած մի-
ջոցը երկար է համարում»:

Բայց հս չկարողացայ թափանցել Համ-

բուրգի ճարպէ զանգւածի հոգու մէջ ոչ միայն հիեց այդ օրը, այլ և մնացած ամբողջ ժամանակը, մինչև Բախոն հասնելը: Որքան նրանք ըննեցի, ինչ կերպով առես աշխատեցի ուսումնասիրել նրա բնաւորութիւնը, ուրիշ ոչինչ չկտայ նրա մէջ, բացի ճարպից և անսահման ինքնագութիւնից:

Այս պատճառով դիմեցի միւս հարեւնիս: Բայց նա այդ օրը լուս էր և լնկված էր անբացառքելի բաղդաւորութեան մէջ: Ես վախենում էի խանգարել նորա հոգեկան այդ գրութիւնը: Նա շատ ցրւած էր, այնպէս որ երբ աղ խնդրեցի, ինձ գինի տւեց, երբ միւս հարեւնը սօսւս խնդրեց, նա հաց տւեց: Մի ինչ որ գերիսերոյ չփոթութիւն, որը յատուկ է միմիայն խոկական բաղդաւորներին, ինչպէս մի անթափանց զրահ, գրկել էր նորան և անշատում էր շրջապատով աշխարհից:

Ճաշից յետոյ ծովը սաստիկ ալեկոծւեց և նաւորգները ցրւեցան խրեանց խցերը, ազաւելու սարսափելի գիրից՝ ծովային հիւանդութիւնից: Խոկ ես մինչև գիշեր մնացի տախտակամածի վերայ և ուշագրութեամբ հետեւմ էի անզիացուն, որը ամբողջ ժամանակ գտնում

էր յուռեկի մօտ: Ես նկատեցի, թէ ինչպէս նա, մի տեղի վրայ յառած աշրերով, շարունակ նայում էր առաջ և լնգերեկար պահպանում էր նոյն անշարժ գիրը, նա չէր կարսգանում պոկ զալ այդտեղից, բայտ երեսով ին աշխատում էր հեռանալ, բայց մի բանի բայլ անելով, արագ յետ էր գառնում և կրկին անթարթ նայում էր առաջը տարածւող իւր բազգի հորիզոնին, որին գիշերային խաւարը նոյն իսկ անզօր էր թաղցնել նրանից:

Երբեմն մարդուն տիրում է տենդային, մի տեսակ անբնկճելի, յանկարծ բորբոքող հետարբըրութիւն: Այդպէս էր և իմ, այդ երջանիկի հետ ծանօթանալու ցանկութիւնը, որը օժտած էր անզիացու բերանով և խտալցու գլխով: Նախազգացումն ինձ ասում էր, որ գա կլինի իմ բարեկամը: Այդ ժամանակ ես 22 տարեկան էի և այդ երիտասարդութեան հասկում ինձ շափազանց զրաւում էր այն բոլորը, ինչ որ խորհրդաւոր և երկակայական էր:

Հետեհայ օրը մինչև նախաճաշ ես արդէն գիտէի, որ այդ անզիացու անունն է Վիլեամ Բ. և մանկական պարզամտութեամբ կարծում էի, թէ շատ բանի արգլն հասնէ նմ: Ինչ և

իցէ, ոչ նախաճաշին, ոչ էլ նրանից յետոյ, այն ցանկալի ժամերին, որոնք յաճախ իրար են մօտեցնում ճանապարհորդներին, դարձնելով նոցա մի ընտանիք, ես չկարողացայ Վիլետմի հետ խօսքի բռնւել: Ճշմարիտն ասած, նա ճանապարհորդներից չէր խօրշում, բայց ի ինքը նոցա չէր գիմում, բոլոր հարցերին այնքան կրցկտուր էր պատասխանում, որ ամենաշատ տապտկացնող լիրքն անվամ ստիպւած կլինէր հեռանալ նրանից: Նա շարունակ ժպտում էր, ինչպէս բոլոր երջանիկ մարդիկը, բայց խօսքերը սառչում էին նորա շրթունքների վրայ:

Երբեմն նրա բերնին կարելի էր նկատել սիկար, բայց չէր ծխում, ձեռքը գիրք էր առնում, բայց չէր կարգում. մի խօսքով նա խորառուգլած էր անսահման երջանկութեան հեշտասուր ծովում:

Համարեա պատահմամբ ձեռքս ընկաւ գագտնիրի բանալին, որը պատճառ էր այդպիսի բազգի, և ես այս բանը համարում եմ իրքի վարձ իմ ծառայութեան: Լիուարօն հասանը յունիսի 14-ին և նոյն օրը երեկոյեան ճանապարհ ընկանը: Հետեւալ օրը ես վերկացայ շատ վաղ և դաւրս ելայ տախտակմածի վրայ

առաւտեան թարմ օվկ չնշելու: Վիլեամը արդին ոտքի վրայ էր և շրջում էր յետ ու առաջ, ձեռքը գրապանի մէջ:

Չուզենալով խանգարել նորա բազգը միայնութիւնը, ես սկսեցի շրջել միւս կողմում առանց աշքերս նրանից հեռացնելու և սկսեցի ուսումնապիրել նրան: Յանկարծ նկատեցի որ նա հռանդով թօթւեց ձեռքը նման մի մարդու, որը աներկիւդ վճռում է, մի որիէ գործ, և մօտենալով զեկավարին, խօսեց նրա հետ:

Մօռանալով անվստահութիւնս և բազրավարութեան ամենատարրական կանոնները, ինքնաբարաբար մօտեցայ զեկին և սկսեցի ականջ դնել այդ երկու անձնաւորութեանց խօսակցութեանը, որոնք ծնւել և մնել էին բոլորովին տարբեր պայմանների մէջ և մօտեցան իրար միայն այդ բովածին:

• Ուրեմն ձեր կարծիքով երկու օրից յետոյ Մագիրայում կը լինինք»:

— Այս պարսն, միայն՝ եթէ ծովը կը լինի հանգիստ տյնպէս, ինչովէս այժմ:

«Նշանակում է 48 ժամից յետոյ Մագիրայում կը լինինք» ասաց Վիլեամը բարձրաձայն: Լաւ, շատ բարի, բարեկամս, աւելացրեց նա

ուրախութեամբ ձեռները տրորելով և դէմքի
գւարծ արտայատութեամբ։ Ուրեմն այդ կզիին
կատարեալ դրախտ ալէտք է լինիր։

Եյժմ կտորիածի այլնս ոչինչ չ'կար, որ
այդ խորհրդաւոր մարդու անձեական «եռի»
մի մասը գտնվում էր Մագերա կղզում:

Ահա թէ ինչու նրա սիրտը ուրախ բարա-
խում էր մի ինչ որ կախարդիշ ոյժի ազգեցու-
թեան տակ և նրա կրակոտ հայեացըլ, որ յա-
ռած էր դէպի առաւօտեան մօխրագոյն մշուշը,
երկար ժամանակ հոգեզմայլ որոնում էր Մա-
գերա կզկին:

Եթզանիկ մարդը միշտ ուշագրութիւն է պարձեռում ուրիշներին, մտածեցի ես, և մի կողմ թողինելով ամօթխածութիւնը, զեկավարի փոխարէն Վիլհամի հարցին պատասխանեցի.

—իրաւացի է, Մագերան կատարեալ
պախուած է:

Վիլեամը արտկ դէպ ինձ դարձաւ և մի-
այն այժմ նկատելով, ասադ.

«Միթէ այստեղ եղել էր»:

— Աշ, բայց մտադիր լինելով կետնքիս մի նար այնտեղ անցկացնել, ես ուսումնասիրեցի այդ կղզին շատ մանրամասն, և այժմ ինձ

այնպէս է թում թէ արդէն մի քանի անգամ
եղել եմ այստեղ:

«Իրաւ, ուրեմն պատմեցէք մի բան այն-
տեղի մասին»։ Վիլեամը բազարավարութեամբ
չնորհակալութիւն մատոյց այն նաւաստինն, որը
նրան բաղդաւորեցրեց, մօտեցաւ ինձ և մենքը
սկսեցինք միասին գրօննել։ Հէնց դուռ այն
հանգամանքը, որ ես սովորականից մի ժամ
առաջ արթնացայ և այդ բոսէին նաւի զեկի
մօտ գտնւեցի, մօտեցրեց ինձ այն մարդուն,
որի հետ ծանօթանալու այլ հայոց չունէի։ Ես
պատմեցի նրան, որ բաւական ժամանակից
ինձ տանջում էր Ծորախտը և այդ աշրի առաջ
ունենալով մանրամասն ուսումնասիրեցի Մա-
գերայի կլիման և, որ այդ գրախտը իմ ա-
ռողջանալու վերջին յոյժն է կամ գերեզմանո՞
զարդարւած ծաղիկներով։ Նոր բարեկամիս
ուրախութեանը շափ շ'կար երբ լսեց, որ ես
բժիշկ եմ և Մագերա կղզու կլիմայի հետ
ծանօթ։ Եթէ նրա առողջ գէմքը շը լինէր,
ապա ես կը կարծէի թէ նա զնում է Մագերա
անձնական առողջութիւնը վերականգնելու։
բայց պարզ էր, որ նա ամենին առողջանա-
լու համար օդախոխութեան կարիք չունէր։

Նախաճաշի ժամանակ էր, բայց մենք զեռ
խորասուզւած էինք Մագերայի մասին եղած
խօսակցութեամբ. ես թափում էի իմ հաւարած
բոլոր տեղեկութիւնները այդ կզզու մասին և
ուրախ էի, որ ուսումնասիրել էի:

Երկու օրւայ մէջ Վիլեամը իմ ամենամօտ
բարեկամը գարձաւ. բայց չնայելով գրան, ես
չէի համարձակում հարցնել նորա ճանապար-
հորդութեան նպատակը: Նրա մօտ ես զգում
էի այն հոգեզմայլութիւնը, որը ինձ վրայ աղ-
զում էին երկաթի կամք և զարգացած ինք-
նաճանաշութիւն ունեցող մարգիկ. ես զգում
էի այն հօր աղդեցութիւնը, որպիսին գոր-
ծում էին բուռն կրթերը: Ինձ համար խորհր-
դաւոր մնաց Վիլեամի ներքին կեանքը, բայց ես
համոզւած էի, որ նրա կիրքը այն մրրկայոյդ
զգացմունքներից մէկն էր, որոնք ամրոգութին
կլանում են մարդու սիրտը և, որոնք կարող են
մի ժամանակ լնթացքում մարդուն դարձնել Աստ-
ուած կամ Հրեշտակ, երանութեան դրախտ,
կամ շարշարանքի դժոխք:

II.

ՊԻ ՕԲ ՄԷԴԻ ՔՐԵՅ

Ելբար Մագերա հասանք, Վիլեամի արա-
խութիւնը կարծես սաստկացաւ: Առ հասարակ
նա հիացած էր, խօսում էր կարծ նախազա-
սութիւններով, անդադար նայում էր Ժամա-
ցոյցին, հարիւր անդամ առանձնանում էր իր
խցում և գարձեալ զուրս էր զալիս տախտա-
կամածի վրայ: Նա ճաշում էր հասարակաց
սեղանատանը և հաւանական է չէր կարսող ասել
թէ ում հետ կերաւ և խմից: Նա ամբողջ գիշերը
անցկացրեց տախտակամածի վրայ:

Յոմիսի 17-ին՝ առաւտեան բոլոր նա-
ւորդները արդէն ստրի էին կանգնած, բոլորը
սրտատրոփ սպասում էին տեսնել երկիրը և

շուտ աղատւել բալորին յազիթող անվերջ
ձանձրոյթից: Վիրեամը նրանց մէջ չէր: Ես դի-
տէի նրա բացակայութեան պատճառը, թէի
լաւ չէի ճանաչում նրան: Նա ևս, իհարկէ, ոչ
պակաս անյագ աշըքերով որոնում էր ցամաքը
և բաւականանում էր նայելով իւր սենեակի
լուսամուտից, չեայելով, որ այգտեղից նրա ա-
ռաջ այն լայն հօրիզոնը չէր տարածւում, որ-
պիսին տախտակամածից. բայց և այնպէս նա
մենակ էր, չէր լսում անտարեր ամբոխի զայ-
րացնող աղմօւէր և նրա զաղնիքներին անձա-
նօթների դատարկաբանութիւնը չէր խանդա-
րում նրա սրտի ներդաշնակութիւնը:

Ըուացին տպաւորութեան տակ Մաղերան,
այդ գրախտը, աւելի շուտ նմանում էր Դան-
տէի գժողորի մի պատկերին: Բազայդի հոկալ-
ական ու կոյտերը, տձե, իրար վրայ թափ-
թը փաւած ժայռերը առանց բուսականութեան,
առանց բնակութեան, զառիքեր բարձրանում
էին ծովից. Նրանց ստորոտում աղմուկով ոչըն-
շանում էին փրփրագէզ ալիքները: Սփին՝ այս-
տեղ և այնտեղ երկում էին կղզեալներ նոյն-
պէս ու ինչպէս ժայռերը, առանց ծառերի և
ծաղիկների, ալիքներից փորփրւած և կրակից

կործանեած, անլայտ աշխարհի աւերակների
նման թափթփւած: Մենք անցանք Պօրտօ-Սան-
գօյի մօտից, ձախ կողմը թողնելով երեք կղզի-
ներ, որոնց անախորժ և տխուր պատմութիւնը
ցոյց էր տալիս հինգ նոցա անունի „Deserta“
(ամայի) և շուտով հասանք բազայդեայ ամե-
նամեծ հրւանդանին—Գարաջօյին: Դա դրախ-
տի սահմանն էր:

Նոր էինք անցել Գարաջօ հրւանդանը և
ահա, ինչպէս մի ծակող այգուց, անուշ բուր-
մունքով վշեց թարմ ցամաքային քամին, իսկ
մեր աշըքերի առաջ բացւեց բուն զրախտը ծաղ-
կահիւս, մշտածիծաղ ծածկւած պարտէզներով և
վիլլաններով, կանաչազարդ մարդագետիններով
և ֆանտաստիքական անտառներով, մի խօսքով,
գա իսկապէս ուրախ կեաների թագաւորութիւն
էր: Մի բանի բոպէ ևս՝ մենք արդէն կրպու զլիսա-
ւոր բազարի՝ Փունգալոյի դիմացն էինք, որը,
ինչպէս օրօրոցում, պառկած էր շաբարեղէպիի
պլանտացիաների և կանաչ դաշտերի մէջ, շըր-
ջապատւած եւրոպական ծառերի մութ պու-
րակներով և բանանի հրաշալի անտառներով:
Նրա շորո կողմը անփիթէատրի նման բար-
ձրանում էին վիթխարի լեռները, իսկ իրք

ընդհանուր շրջանակ այդ ամբողջ պատկերի, գուցէ և շատ լայն այդ սիրոյ դրախտի համար, ծառայում էին երկու անսահման տարածութիւններ՝ ովկեանուն ու երկնակամարը: Եւ իսկապէս դժւար էր վճռել, թէ այդ բոլէին որը նոցանից աւելի մօտենում էր երկնագոյնին կամ սովիէրին:

Երեք անգամ ես անցել եմ Մաղերայով և ամեն անգամ ես լսում էի ինչպէս մշտական նաւորդներն անգամ հիացմամբ բացականչում էին. «Ո՞՛Տ, երանի ես մի փոքրիկ խրճիթ ունենայի այդ զբախտում»: Կեանքի մէջ ամենամեծ վայելչութիւններն ունենում են մի և նոյն ընաւորութիւնը. յանկարծակի երեալով նորա մի ակնաթարժում մեզ արբեցնում են, ինչպէս մատազ կնոջ կրծքից ընկած մի ծաղիկ, իսկ դրանից յետոյ դարձեալ անյայտանում են և անկարող ենք նոցա կանգնեցնել կամ վերագրածնել. նորա հեռանում են մեզանից անսահման տիեզերում ոչնչանալու, ինչպէս այն ամպերը, որոնք կոչւում են երկնակամարի անհուն տարածութեան մէջ:

Մեր հիացմունքը երկար շտենց: Հակարչիւնդ ուր:

բաւոր ձայների ազաղակիները, փորթուգալական կոպիտ հայհոյաներների կարկուտը ովթափեցրին մեզ: Ափ գուրս եկողների հմամար առաջարկւում էին նաւակիներ, որոնք ազմուկով և յանդգնաբար խփւում էին «Թէ՛Հմզային»: Հազիւ, այդ ձայներից և ազմուկով աղատւած, ոտք էի գրել հաստատուն հոգի վրայ, երբ ընկայ խիտ ամբոխի մէջ և ստիպւած էի ոժով ինձ համար ճանապարհ բանալ: Ելդուկ կային կիսամերկ մարդիկ, որոնք ինձ առաջարկում էին ձիեր, պիջակ հագածներ, որոնք անւանում էին իրանց հիւրանոցը, ձեռնափայտ և կրուժեկոյ ծախողներ. տղամարդկանց և կանանց շրջմոլիկներից կազմւած մի ամբողջ խումբ, որոնք երբեմն լաւ փորթուգալերէնով, երբեմն ամենավատ ֆրանսերէնով, երբեմն էլ կոտրտած անզլիկնով ինձանից ինչ որ բան էին պահանջում, թէե ես նոցանից ոչ մէկի վրայ ուշագրութիւն չէի դարձնում: Անցաւ հիացման առաջին բռնչն, բայց նաև անջնջելի և խորը տպաւորւեց իմ սրտում:

Ես տուող ու գւարժ էի զգում ինձ և տամնեութ օրւայ ծովալին ճանապարհորդութեան փոխարէն լիսին վարձատրւած էի Մաղերայի

հրաշալի տեսարանով. ինկ այժմ իրականութիւնն ինձ կանչում էր իւր մօտ. ուրեմն հարկաւոր էր գէպքից օգուտ քաղել և գործնականորին ուսումնասիրել Փունգալօն: Կհանրի պօէզիան տեղի տւեց պրօդային:

Վիլեամը մեզ հետ դուրս չեկաւ:

Քաղաքում նախաճաշին ես մեծ գւարճութեամբ խմեցի մի բաժակ մաղերեսն հինգինի, որը այն ժամանակ վերջանում էր և մեծ գժւարութեամբ կարելի էր ձեռք բերել, այն էլ միայն մի բանի բազգաւորներից, որոնք պահում էին իրանց հինաւուրց մառաններում և ապա մի բաժակ սուրճ: Պէտք է խոստովանել, որ ես երբէր այդպիսի սուրճ չեմ խմել ոչ Եւրոպայում, ոչ Աֆրիկայում և ոչ էլ Ամերիկայում:

Յիշում եմ, խմելիս ես մտածում էի բազարակիթութեան մեծ ոյժի վրայ: Այդ սուրճը ոչ Մոկիայից և ոչ Պօրտորիկօյից էր բերւած: Նա բաւականին լու բունում էր նոյն այն պարոնի պարտիզում, որի մօտ ես սիրալիք հիւրասիրութիւն գտայ: Տէրը աւշի ուշով հետեւմ էր ամեն մի հատիկի աճելուն, և ամեն մի հատիկը ժողովում էր առանձին առանձին

երր յարմար էր համարում իւր շինական ոսկեգածք բաժակին:

Նախաճաշից քիչ յետոյ, թողնելսկ իմ փելիսոփայական խօրհրդածութիւններն այն ամենալոր շկօլայի մասին, որը ընդունակ է ամեն բան լաւացնել աշխարհիս երեսին, ես ձի նըստած միացայ «Թէմզայի» նաւորիների այն մեծ խմբին, որը ուզում էր զրոնիկ Պալիսէյրօ-դաս-Ֆերէյրօյում, և կոմս Կարլվալսալի ազարակում: Դա փորձուգալացի այն նշանաւոր պատրիկն էր, որ առաջին անգամ գնրա բերեց Մագերա: Դժբաղդ կզգի: Մինչի այդ ժամանուկ ու գեռ չունել և ոչ մի հատ այդ արարածներից:

Զիերը և ձիաւորները անհամբերութեամբ շտապում էին հեռանեալ քաղաքի փողոցներից, բայց ես, որքան էլ հրամուրուծ էի զաշտերի բուրմունքից, այնուամենային չէի կարող անցնել առանց ուշադրութիւն գարճներու մի քանի գեղեցիկ խանութիւնների վրայ, ուր ձախուում էին ամեն տեսակ զործածական իրեր, և ուր խմբում էին մարզիկ, հաց, գինի և սւրիչ անհրաժեշտ պիտոյքներ զնելու: Այդ խանութները ամենայարմար տեղերն են Փանդալօյի հասարակ ժողովրդի կեաներն ուսամնասիրելու համար, այդ-

տեղ կարելի էր տեսնել Մագերացի պառաւներին, որոնք բոլորն էլ ծխում են և ծխախոտ գնելու համար խանութ գալով, անդադար խօսում են ծխի ամեն մի ներշնչումից յետոյ, այդտեղ կարելի էր տեսնել իշապահներին և զիւղացիներին, որոնք խանութ էին գալիս խմելու սովորական մի բաժակ օվին:

Խանութի ճակատին երեսում էին երեք խորհրդաւոր գլխատառեր. „P. A. V.“ որոնք արտայայտում են մարդկային կեանքի ամենաահնրաժեշտ պահանջները՝ Պած, Ազարդենե, Վինո (Հաց, օվի և զինի): Երբեմն հանդիպում էին և այսպիսի մակագրութիւններ. „Differentes hebidas“ (զանազան խմիչքներ):

Մենք շուտով անցանք Rua de Carreira և Փունկալոյի կորդոն և գուրս եկանք բազրից, որը իր 16,000 բնակիչներով այնքան էլ մեծ չէր կարող լինել: Քաղաքին կից ոկուում են այդիները, այնպէս, որ ամբողջ կողմին ներկայացնում է մի միապալալ պարտէզ: Ես գիտմամբ մի քանի բայլ յետ մնացի իմ ուղեկիցներից, սրպէսզի միայնութեան մէջ վայելամ հարսւոտ բնութեան անուշահոտ բուրմունքը: Աչա մենք բարձրանում ենք թեր ճանա-

պարհով, սրի երկու կողմբ տեղ տեղ շըշապատւած է բարէ պատով. անցնում ենք դաշտերի և արտերի միջավ, բայց այստեղ ևս տուատ ցորենի հետ երեսում էին և ծաղիկներ, այստեղ, այնտեղ արտերի մէջ աշրի էին ընկնում արեածաղկի, աղաւնակտուցի, յասմինի և վարդի մեծ թփեր, սրոնք կարծիս մի շրջապագեղ կեռջ ձեռքով ցանւած լինէին: Յանձախ մէնք անցնում էինք կտարիֆուլց և պասսիթօրից հիւտած կամարների տակից: Ես բարձրանում էի ասպանդակների վրայ և բազում էի անուշահոտ պտուղները, ապա թնրւելով աջ ու ձախ բազում էի վարդեր և գոյնզգոյն ծաղիկները: Եյդ բոլոր բարիքների տուատութեան մէջ ներելի էր ակամայ զօղութիւնը: Իմ ուղեկիցները և ուղեկցուհիները աւելի շատ էին յափշտակում, բայց հարուստ բնութիւնը զրանից ոչ մի վնաս չէր կրում: Եեր ձեռները արգէն լիբն էին ծաղիկներով, չէինք կարող պահել այդ աւարը և սկսում էինք իրար խփել ծաղիկներով. վարդերը բցում էինք մեխակների վերայ և մեծածաղկիներով ու յասմիկներով ծածկում էինք մեր տիկինների ծամերն և ուսերը: Ենուշահոտութիւնը արքե-

շնում էր մեզ: Ես ժամանակ առ ժամանակ ետ
էի դաննում և դէպի ծովը նայելով ծաղիկնե-
րի անուշահոտութեան հետ չնշում էի և ծո-
վային սուր հոտք:

Դէպի Պալխէլրօ ճանապարհի մեծ մասը
ծուռ ու մուռ էր և մենք ծանր էինք գնում:
Բայց հինգ, որ ճանապարհը լաւացաւ, ես ու-
զեցի խթել ձիուս, որպէսզի ոտով-զլխով ընկնեմ
այդ կախարդական բնութեան գիրկը, որպէսզի
խորառութեմ թաղցրութիւնների այդ ծովի մէջ և
ահա այդտեղ միայն նկատեցի, որ ձիապանո եր-
կու ձեռքով կախւած էր ձիուս պոչից, որը այդպի-
սով ամբողջ ճանապարհը նրան բաշ էր տալիս:

Ես սկսեցի ծիծաղել և իմ կողքից դնացող
տիկնոջ ուշագրութիւնը գարձրի այն բանի
վրայ, որ նրա ձին էլ առնում է մի այդպիսի
մարդանման բեռ: Ծիծաղից հազիւ կտրուկա-
նում էինք թամրերի վրայ մնալ. երկու ձիա-
պաններին էլ զլուխներին դրած իրենց ոովու-
րական շաբախ պիտիարկը, որը վրաից կապայտ
է, իսկ ներսից ծիրանեպոյն, երկար ուղիղ
փունջուզով և աներան վրար, որ հազիւ ծած-
կում է զագաթը (զլուխիր ծածկելու մի ծիծա-
ղելի ձև, ամենաանյարմարը արհապարձային

երկրներում), մնում էին իրանց պատւառը
տեղերում և թոյլ էին տալիս իրանց բաշկը-
տել, առանց ուշագրութիւն գարձնելու՝ հան-
գարտ եմ գնում թէ ձիս վաղեցնելով:

Բայց և այնպէս հետզետէ սկսում էի ան-
հանգստանալ այդ գրութիւնից և յայտնեցի
պաշից կախւած մարդուն, փոխելով իապահէն
խոսակցութիւնը որքան կարելի է փորթուգա-
լիրէնի, որ ես ցանկանում եմ միայնակ մնալ.
բայց նա կամ շնասկացաւ իմ առածը և կամ
շուզեց հասկանալ—հետեանքը միենանը մնաց:
Համբերութիւնո շկսրցրի և ամեն կերպ աշ-
խատեցի հասկացնել ձիապանին: Սակայն ի
զուր: Նա շփոխեց իւր գրութիւնը և շատ հան-
գիստ մնում էր կախւած ձիուս պոչից: Վեր-
ջապէս համբերութիւնո հատաւ փորթուգա-
լիրէն խոսակցութիւնը ինքնիրեն կտրեց և
մարուր իապահէնով հայնոյելով, ես զիմեցի
ընաշանբական լեզւին, այն լեզւին, որ բոլոր
մարդկանց եղբայրացնում է՝ միմիքային: Մըտ-
մարդկանց նկրայրացնում է՝ միմիքային: Մը-
տմարդկանց երկու-երեք անդամ խփեցի ձիապանի
բակավ երկու-երեք անդամ խփեցի ձիապանի
ձեռքին, որը իւր կարգին հայնոյելով, վեր-
ձեռքին, որը իւր կարգին հայնոյելով, վեր-

ձին:

0^o, ինչու այդպէս արի: Այդ ծիծաղելի և
ձիու համար աւելորդ կենգանի բեր որրան
հարկաւոր էր այդպիսի գէպքերում: Հազիւ ծի-
ապանը բաց էր թողել առչը, որ ձին, սանձը
կարելով, թռաւպատերի իրարէ կոյտերի մէջ ա-
ռանց մի բռպէ՞թողնելու ինձ, որ հանգոտացնեմ:

Դրութիւնս հետզիեաէ զժւարանում էր և
մինչե իսկ յուսահատական էր դառնում: Զին
առանց հնագանդւելու սանձին յանկարծ ուղ-
ղւեց գէպի մի զժւարանցանելի շաւիլ ան-
գունդի եղրով: Ոտներս կաշում էին բարէ պա-
տին, հայեացը կորչում էր հարիւր կանգուն
խորութեամբ մի փոսի մէջ, իսկ ձին, փրփու-
րով ծածկւած, խռմիալով թռչկոտում էր կա-
տագած: Այդ բոլորը կատարւեց մի վայրկեա-
նում, այժմ բոլոր ջանքերս ուղղած էին այն
նպատակին, թէ ինչպէս առանձին ինձ թամրի
վրայ: Բայց յանկարծ մի զարուքելի միտք
փայլեց զինումն, որը երբէք շեմ մոռնեալ:
Մասձում էի՞ թէ ինչ պէտք է զգամ, երբ իմ ոո-
կորները շուտով այդ անդունդի յատակում լի-
նեն: Զգացի մի սառը բլտինը, որը, ինչպէս
ծովային բամու յանկարծակի հարւած, թռ-
փանցեց ողջ մարմինս:

Մի վայրկեան հո՞ և ես արգէն դապել էի
ձիս. բայց ես շեղւել էի ճանապարհից ու կոր-
ցըրել ընկերներիս: Ես գտնուում էի մի շատ
սիրուն ճանապարհի վրայ, որը համեստ ձրգ-
ուում էր շաքարեղէգնի և աղարակների մի-
ջով:

Քրտինը առուի պէս թափուում էր ձիու
վրայից. ես էլ քրտնքակոլո էի եղել: Իմ զի-
մայու տարածւում էր ծովը, նա շատ մօտ էր
երեսում, կարծիս ոտներիս տակ լինէր, իսկ
նրա մակերեսոյթի վրայ, որը փայլում էր պայ-
ծառ կապոյտ գոյնով, հանգիստ և ուրախ օ-
րօրւում էր սպիտակ տուաղասուր:

Յանկարծ ճանապարհի ծայրին, հարիւր
բայլի վրայ տեսայ մի երիտասարդ կին մնան
ձիու վրայ: Ես երազ կարծեցի այդ: Զին ծա-
նրը էր զնում, կինը սանձը բաց թռկած թեր
էր բնիել լողնածի կտմ հիւանդի նման: Նա
հագիւ էր երկար երկնապոյն ամազօնկա,
որի շատ զեղեցիկ կերպով յարմարւում էր
նորա նիհար, բայց վայելուշ կազմածքին: Նո-
րա վլուխը բարակ վզով չնորհալի կերպով թեր-
ւած էր ուսի վրայ և թաւշեայ սկ զինարկի
տակից, որը զարդարւած էր փասեանի վե-

տուրներով, ուսերի վրայ թափթառած էին
խիտ սոկեզոյն մազերը:

Ես բաց թողի ձիռւս դլուխը, որպէսզի
համեմ այդ երկարայիշան տեսիլին. լայց ձիս
կրկին թռաւ սլաքի պէս, կարծես զգալով, որ
իւր կատաղութեանը դիմագրող ոչ մի էակ շը-
կայ, կայծակի արագութեամբ հասաւ կնոջը և
ես մօտից թռչելով հազիւ նկատեցի, որ նորա
ձին ևս յանկարծակի, նախանձից զրգւած,
թռաւ նոյնպէս կատաղած. Անծանօթ գեղեց-
կուհու տեղ ես վախեցայ. բայց որքան էլ
ցանկանում էի, ոչինչ չէի կարող անել, որով-
հետեւ կարծես դեմ թերի վրայ նստած թըլ-
շում էի:

Հէնց որ ամքող ուժովս կարողացայ
հանդարտեցնել այդ կատաղի ձիարշաւը, ես
յետես լոեցի ձիռւ տրոփին և ետ դառնա-
լով տեսայ, որ թամրի վրայ ոչ որ շկար: Այլ
ես առանց երկար մատելու ձիռւն գնացրի
վրայ, շտապով սանձր քաշեցի և յետ դարձրի
նրան. այդ ժամանակ միայն հեռուում՝ դաշտի
ծայրին նկատեցի գեղեցիկ կնոջը, անզգայ
գետին ընկած:

Բարեբաղաբար ոչ մի բար շկար այնտեղ,

ուր նա ընկել էր և զրա համար էլ խիստ
ջարդւած չէր լինի. ես արագութեամբ թռայց
ձիռւցս, վազեցի գէպի մօտակայ վտակը և ճա-
նապարհորդական կաշէ սրտակով ջուր թերե-
լով սրսկեցի ուշաթափ կնոջ գունատ երեսին:
Նա բարձրացրեց ձեռքը, որով բանել էր ար-
ծաթակով խարազանը, բայց չսթափեց:

Այդ բոպէին միտոս ընկաւ քանդել նորա շո-
րերը. բայց այդ ժամանակ հազիւ 22 տարե-
կան լինելով, սիրտս վրդովմունքից այնպէս
ուժեղ էր բարախում, որ ոչ մի կերպ չհամար-
ձակւեցի և նորից սրսկեցի մի բանի կաթիլ
նորա գեղեցիկ երեսին: Նա բարձրացրեց ար-
տիանունքները և ինձ տեսնելով՝ պայծառ կար-
մութիւնը ծածկեց նորա գունատ այտերը և
շնչաց՝ «Ճնորհակալ եմ. . . . և նորից աշ-
րերը վակեց:

Այդ կնոջ գեմքի վրայ գբոշմած էր թարմ
գեղեցիութիւն և խորին մելամազգոտութեան
կիրք: Նորա շազահակացոյն օսկի, մագերը խիտ
կանգութիւնը անկարգ թափւած էին պարա-
գանցի և կրծքի վրայ: Նա ուզգեց նրանց և յետ
քցեց. ինքն իւր վրայ արագ հայեցր քցելուց
յետոյ նկատեց, որ ընկելիս մի ոտք աւելի էր

բացւել, բան հարկաւոր էր և գիմքի տխուր
արտայայտութեամբ, որը աւելի շւտ ամօթխա-
ծութիւնից էր բան թէ իսկական տանջանքից,
նա ծածկեց ոտք: Խոնարհւելով գիսկի այդ
ասուածային էակը և ինձ բաղդաւոր զգալով,
որ կարող եմ նորան օգնել, ես մի բանի բոպէ
վեհ հրճանքով անցրի: Բայց յանկարծայն ճա-
նապարհից, որով ես եկայ, լուեց ձիու ոտնա-
ձայն:

Դա Վիլեամն էր, գունատ և սարսափ աղ-
ող գիմքով:

Նա ճանաչեց ինձ և ձին կանգնեցրեց: Հա-
զիւ գետին նայեց, որ ես լսեցի միաժամանակ
երկու ջերմագին: բացականչութիւններ, որպի-
սին կեանքումն երբէք չեմ լսել և հաւատա-
ցած եմ, որ չեմ էլ լսի երբէք՝

— «Վիլեամ», ոչ մմառ:

Որբան սէր, տանջակը, ուրախութիւն և
հրճանք կար այդ ձայների մէջ: Նորու արձա-
գանք գտան հոգուս մէջ և ես խորը զգացւած
թռայ ձիուս վրայ, ասելով Վիլեամին, «Օգ-
նիցէք այդ խեղճ հնոջը, իսկ ես կերթամ ձին
որոնելու»:

Հուտով հասայ ձին բռնեցի և բերի եր-

ջանիկ արարածների մօտ, որոնք ձեռք ձեռքի
տւած մէկ մէկու նայում և լալիս էին. բայց
արցունքների սիջից նրանց երեսին փայլում էր
բուռն զգացմոննը և անասելի բերկրութիւն:

Բայց միթէ պէտք է լիշեմ այն՝ ինչ որ
ասացին սիրահարները: Վիլեամը միայն մի բա-
նի խօսր ասաց յուզմունիցից կտրւած ձախով:
Յիշում եմ, նա ձեռքս սեղմեց և ինձ խր բա-
թիշում կոչեց. պարզ յիշում եմ, որ էմման էլ
բեկամ կոչեց: պարզ յիշում եմ, որ էմման սե-
ղովմեց ձեռքս: Ապա շտապեցի նոցա մենակ
թողնել, նամանաւանդ, որ էմման, ինչպէս
երեսում էր, ծանր չէր. վնասւել և իմ օգնու-
թեանը կարիք շոնէր:

Ես դարձայ Փունգալո խխոտ յուզւած,
կարծիս ներկայ էի եղել որեւ սոսկալի աղոտի,
բարձր զգացմունքների առատ հեղման կամ
ընդհանրապէս մի մուտ ախուր կամ ուրախ
գործի: Բայց և այնպէս դա ոչ այլ ինչ էր,
եթէ ոչ ճարգու և կնոջ հանդիպումն: Սակայն
միթէ աղօղիքի և անհատների կիանքի մէջ մեծ
երեսով չեն յառաջանաւմ հինգ այդ հասա-
կակ միացումով—տղամարդի և կնոջ հանդի-
պումով:

«Տէմզան» ուշ երեկօյեան խարիսխը վերցրեց։ Տղամարդիկ տարացած թունդ գինուց,
կահայք արբած ծափիկների բարձունքից և մա-
զերեան տռոյդ ձիերի վրայ նստելուց յոզնած
երգելով և ծիծափելով վերապարձան շոգնեաւը։
Նորա հետները բերժում էին յարդէ սիրուն կո-
պովներով հիանալի բանդակւած փայտեալ ի-
րեր և գեղեցիկ գործւածքներ։ Բոլորը զոհ էին
և ուրախ խօսակցում էին։

Միայն ես, մանելով խուցս, ուշադրու-
թեամբ զննում էի ավից եկող բոլոր նաւակ-
ները։ Կը զայ արտեօք Վիշամը։ Մարդուս
սիրտը անքննելի է։ Ես սրտանց ցանկանում էի
որ նա վերապահար շոգնեաւը նոյն խոկ առանց
իւր թանկագին էտիին։ Վախենում էի, որ նա
կզզում մնար, իսկ ես շատ էի ցանկանում, որ նա
հետո լրճէր, թէ զաւը մնակ և անբազգ։ Նոցա
համար ես օտար հաւելորդ եմ, մտածում էի,
բայց ես ես կարող եմ ջերմանալ նոցասիրոյ ճա-
ռագույթներից, ինչպէս մի շուն, որը, պառկած
առիւծի թաթերի մօտ սիրում է պաշտում էնթոն։

Բայց և այնպէս Վիշամը շվերապարձաւ։
Մութ գիշեր էր և ես տիրութեամբ փակեցի
խուցիս պատուհանիր։

ԵԵԵ

ԿՐԱՒՆ ԾՈՎԻ ՎՐԱՅ.

Ամբողջ գիշերը ես երազում տեսնում էի
Վիշամին և, խոստովանում եմ, նրանից աւե-
լի էմմային։ Որքան իմ նոր բարեկամը ներ-
կայանում էր խելքի, ոյժի և գեղեցկութեան
տիպար, այնքան շիկահերը երեսում էր իրու-
ինչ մարմնացած իդէալ, որին մի ալիսաթար-
թում տեսայ Մագերայում երկնքի և ծովի
մէջ։ Այդ ընքուշ արարածը, որը միայն մի
քանի բովէ ընկած էր իմ առաջ դիւթիշ կղզու
անուշահոտ խռաերի վրայ, լի էր այնտիսի ցան-
կութիւններով և շրջապատած այնպիսի պազ-
ուամ չէր կարաղ շհետաքրբուել։ Երեակայու-
կամ չէր կարաղ շհետաքրբուել։

թիւնո անհամբեր ձգտում էր լժափանցիլ այդ
գտղանիերների մէջ և շարունակ ինձ յուղում էին
անտանելի պատկերներ: Մի խօսքով, ես նա-
խանձում էի Վիլիամի սիրոյ վրայ: Հիմանալով
գեռ ես, թէ ի՞նչպէս է որոշւած նրա բաղզը,
ես ի սրտէ նախանձում էի նրան:

Հետեւալ օրը վերկացայ արշալյախն և
անմիջապէս տեղեկացայ ծառայից, թէ արգեօք
բոլոր նաւորդները վերադարձել են շոգենաւ:
«Յոլորը», պատասխանեց նա և տւելացրեց, որ
գեղեցիկ անգլիացին (այդպէս էին կոչում ծա-
ռայողները Վիլիամին) վերադարձաւ ուշ զիշե-
րին, երբ արգին խարիսխը վերցրած էր և
«Թէմզան» շարժում էր առաջ. նաւապետը
նրան նկատողութիւն արեց, բայց նա չնեղա-
ցաւ, նոյն խակ ոչինչ չպատասխանեց: Նա բո-
լորովին գժգոյն էր, սպասաւորը, որ լաւ գի-
տեց, կարծեց թէ նա հիւանդ է, կամ խելքը
դիմին չէ:

Երեր օր Վիլիամը խցից գուրս չէր գալիս:
Ճողենաւի սպասաւորը, բժիշկը և նուապետը
այցելում էին նրան, հարցնելով՝ թէ արգեօք
ոչինչ չէր ցանկանում: Նա չնորհակարութիւն
չիւանդ ուր:

Էր յայտնում բոլորին և առում, որ ոչ մի
բանի կարիք չունի:

Ամբողջ ժամանակը ես շրջում էի նրա խցի
մօտերը և ներսս պատերազմ էր մգլում այդ
աղիւ և գգբաղդ մարդուն մխիթարելու ցան-
կութեան և իմ գէսի նրա անշափ վշտերն ու-
նեցած պատկառանի մէջ: Յաճախ կանգնում
էի գոան առաջ և ձեռք էի բցում փականրին,
բայց սիրո չէի անում ներս մանել և վերա-
բայց աւելի հս շփոթւած: Ո՞վ
կարող է ասել, թէ ամենից լաւ ինչպէս կա-
րելի է վարւել այդպիսի հանգամանքներում:
Սակայն շորորդ օրը վճռեցի և մտայ նրա
սինեակը:

Հետեւալ մտքերը ինձ ներչնչեցին անվե-
հերութիւն և վատահութիւն: Եթէ իմ ներկա-
յութիւնը, մտածում էի ես, զուր չզայ նորան,
ապա ձեռքի մի շարժումով կամ խօսքով և
կամ եղանակով ինձ կհասկացնի, ես զուրու-
կում և նրա զայրայթը շուտով կիջնի: Ընդհա-
կառակը՝ եթէ ես նրան պիտանի եմ և ցան-
կանում է խօսել էմմայի մասին, այդ նա կա-
րող է խօսել միմիայն ինձ հիւ և ես նրան
միծ սփոփանը կը պատճառիմ:

Յածր, կարծես ներսպութիւն խնդրելով
հարցրի,

— «Վիլեամ, ոչինչ չէք ցանկանում: Զա-
փաղանց տանջւում էք. . . »

— Այս, սիրելիս, խիստ տանջւում եմ և
օգնութեանդ եմ կարօտ:

Այս ուրախութիւնը, որը ես զգացի այդ
վայրկեանին, անկարելի է նկարագրել: Ես նըս-
տայ նրա հանդէպ. նա պառկել էր առանց
բարձի՝ մահճակալի վրայ, նոյն զգեստով, որ
հագած էր Մազերայում: Մազերը զզզված,
աշքերը կարմիր, գեմքը դալկահար և լզարած
էր, կարծես ամբողջ մի ամիս հիւանդ լինէր:

Ես սեղմեցի նրա երկու ձեռքը. նա նոյն
կերպ պատասխանեց և սկսեց լալ: Զօրեղ ընա-
ւորութեան վերջին պարտութիւնն էր այդ: Վիշ-
տը գերազանցեց նրան: Պարզ էր, որ ճակա-
տագիրը ստիպեց խոնհարւել երկաթէ մարդիկ-
ներից մէկին, որի նմտնին կեանքում չէի հան-
դիպել: Հների գիշարանութիւնը՝ վիլիսովա-
յական բանաստեղծութեամբ լի, իրաւունք ու-
նէր ներկայացնել ճակատագիրը աստուծոյ կեր-
պարանքով:

Ամբողջ երեք ժամ անցրի Վիլեամի մօտ

և այդ ժամանակամիջոցում նա ինձ հազորդեց
իւր տանջաներների պատմութիւնը: Դորա սոս-
կալի տանջաներներ էին, որպիսին միայն մար-
դըս կարող է տանել. բայց զրա հետ միասին
զոքա այն վիճ տանջաներներն էին, որոնք
բարձրացնում են մարդուն և պարծենալու ի-
րաւունք տալիս: Պատմութեան էութիւնը շատ
հասարակ է, զա կրթի կույն է պարտականու-
թեան գէմ. նրա մէջ պարզ արտայայտեցին
մարդկային ոկարութիւնը և ամբողջ մեծու-
թիւնը:

Դորդը վերաբերում է այն ամենամեծ զրա-
մային, որը կատարւում է մարդու հոգու մէջ,
այդ երկրային արարածի, որը արժանի է
կարեկցութեան, էակի, որին բոլոր դաւանու-
թիւնների դիցարանութիւնները փառաբանում
են իրրի Սատած, երրեմն ինչպէս կիսաստած-
կիսակենդանի, որը յնտկուում է երկնքում և . . .
մահճում, որպէս կատարեալ երկակենցադ: Այդ
վայրկեանից գէպի Վիլեամն ունեցած բարե-
կամական զգացմունքը փոխւեցաւ աստածաց-
ման: Ես տւելի յարգում բան թէ ոիրում էի
նրան, և սիրում էի երիտասարդական բուռն
եռակույի և մարմնացած մտերմութեամբ, որը

յատուկ է մարդուն՝ միայնութեան և հայրենիքից հեռու եղած ժամանակ:

Ենուհեան մենք շարունակ միասին էինք: Եռ այլ ևս չէի մտածում այն մասին՝ թէ ինչը ստիպեց ինձ եւրոպայից հեռանալ և այն անյայտ ապագայի մասին, որը սպասում էր ինձ Ամերիկայում: Ես Վիլեամի արձագանքը դարձայ և մենք շարունակ խօսում էինք միևնույն նիւթի մասին: Նրա անցեալը, ապագան, բաղմակումանի զարգացած մարի բոլոր ոյժերը և անշափ հարուստ սիրտը տռչորւում էին մի սիրով, զահւում էին մի կոտ և այդ կինք արժանի էր նրան:

Թէի ես ամեն բանում՝ Վիլեամի պարզ արտացոլումն էի, բայց չէի շուղարովթում նորան, այլ օգնում էի հաստատ մնալ իւր սուրբ միտումների մէջ:

Մօտիկ ծանօթութիւնը այդ մարդու հետ, այդ անյօյս և անմիտթար վեհ սիրոյ հետ, իմ բնաւորութեանը ոյժ տուց, և ես զգացի իմ մէջ աւելի արխութիւն, բան երբ և իցէ մինչե այդ ժամանակ:

Երբ բարեկամիս վսկամ ապաւորութիւնները սկսում էին թուլանալ, երբ սիրոյ տնհուն

ծավը նոցա կրանում էր, ևս յիշեցնում էի իւր տւած խոստումը և այն վերջին խօսքերը, որոնք էմման, որ աւելի հաստատամիտ էր քան թէ նա, ասաց նորան Մազերայում, «Վիլեամ կրուիր և սպասիր»:

Նա տոմսակ էր վերցրել մինչե Մազերա, իսկ յետոյ կրկին մինչե Սան-Վիչենցո: Նա ցանկանում էր, իւր խօստան համաձայն շարունակել ճանապարհորդութիւնը, բայց, միենոյն ժամանակ, նորան ևս մօտիկ լինել: Սան-Վիչենցո հասնելուն պէս նորան սարսափեցըր-րին յերկ ափերը: Երեխ ոտորերկրեայ կրակը տարիների ընթացքում այնքան խախտել էր երկրի ստեղծիչ ոյժերը, որ նրա վրայ մի հատիկ խօս շէր բռնիկ: Այդ պատճառով մենք ուղիորդեցինք հեռու մինչե Պելմամբուկո:

Օրէցօր մենք աւելի և աւելի մտերմանում էինք և այժմ բաժանւելիք մեզ համար զժւար էր: Այսպիսով նա, տատանւելով սիրոյ և բարեկամութեան մէջ, հասաւ մինչե Բիօ-դը Փանէյրօ: Երկրի տատածային զեղեցկութիւնը յաղթեց նրա բոլոր տարակաւաներին և Վիլեամը վճռեց Բրազիլիայում մնալ: Ես նրա հետ մի շարաթ անցրի երկրագնախ այդ ամս-

Նազեղեցիկ վայրում, որի առաջ Նէապօլը և
Կ. Պօլիսը համեստութեամբ զինաթափ են լի-
նում, և մենք վերջապէս բաժանեցինք:

Ինձ համար շատ ցաւալի և տխրալի էր
երբեցիք բաժանել իմ բարեկամ Վիլեամից,
բայց զգում էի, որ թոյլ առողջութեամբո կա-
րող եմ կորչիլ հասարակածային տար կլիմայի
տակ: Նոյն իսկ, եթէ նրա հետ մի բանի օր
ևս մնայի Բիօ-դր Փանէլյոյում, այնուամե-
նայնիւ ես ստիպւած կը լինէի վերջ ի վերջոյ
բաժանել նրանից: Նա մտադիր էր անցնել
Քրազիլիայի խորքերը, մի ինչ որ լեռնային
ձեռնարկութեան գլուխ անցնելու, երկրագոր-
ծական գաղթականութիւններ հիմնելու. մի
խօսքով նա ձգտում էր իւր խացնող, մաշող
միտրը ենթարկել շատ բազմակողմանի գործու-
նէութեան և տենգային աշխատութեամբ կրկ-
նապատկել այն ջերմը, որը աւելի խիստ և
գտանկաւոր էր:

Մենք բաժանեցինք կրկին, վերստին տես-
նելու յուսով և այդ միտքը թեթեացրեց մեր
հրաժեշտը: Երկուսն էլ ջանէլ էինք, այն հա-
սակում, երբ յոյսը զօրեղ է լինում. Երկուսն
էլ պէտք է մի բանի տարի անցնէինք հարա-

ւային Ամերիկայում, ինչու, յիրաւի չենք կա-
րող շուտ շուտ տեսնել: Բայց պայծառ յոյսե-
րին իրագործւել չէ ենթարկւած: Մենք երբէք
չհանդիպեցինք միմեակց:

ՀՎ

ԵՐԵՔ ՏԵՐԻ ՅԵՍՈՅ

Երեք տարի Վիլեամից նամակ ստանում
էի, թէի ոչ յաճախ: Գուցէ նամակներից
շատերը կորչում էին և այդ զարմանալի չէ,
որովհետեւ մենք թափառում և շրջում էինք տ-
ւելի կամ պակաս վայրենի երկրներում:

Ես նամակ ստացայ Բիօ-դր-Փանէլյոյից,
Մինաս-Հերախայից և Մատո-Գրօգօյից. ապա
հետեւց բաւական երկար և տաղտկալի ընդ-
հառաւմ: Յետոյ անսպասելի կերպով նամակ
եկաւ Վալուարալյոյից, տար Կօրիայից, Լի-

մայիս և Գվայտկվիլից, վերջին նամակը Կիլտօյից էր:

Աշխարհագրական բարտէզը ձեռքս առած զծում էի դժբաղկ բարեկամիս արտասովոր ճանապարհորդութիւնը և Տետեռում էի նրա կանգ առած այն տեղերին, ուր նա մնացել և տանջւել էր:

Երկար թափառելը, տեղերի անգաղար փոփոխութիւնը և զբաղմունքները չեն կարողացել հանգիստ չնորհել նրա հոգուն, որը յուսահատութեամբ պաշարւած էր. կարծէս թէ ժամանակը մեծացնում էր նրա տանջանքները և նորոգում վէրքերը: Դա այնպիսի մի վիշտ էր, որով մարզիկ ապրում և մեռնում են մինչ իսկ եթէ կեանքը գարեր տեէր:

Նրա նամակներից մի բանիսը կրում էին այնպիսի յուսահատ ընաւորութիւն, որ կարելի էր մտածել, չինի թէ նորա ինքնասպանութեան նախկին օրն են զրւած: Սակայն խոստումը և դուցէ, ամենից աւելի, բազցը յոյսի որւականը, պահպանում էին Վիլհամի կեանքը:

1856 թւի ամառ՝ Կիլտօյից ստացած նամակից յիտոյ, ես ոչ մի տող շտացայ իմ բարեկամից: Նոյն իսկ ուրիշներից էլ չել կա-

րող տեղեկանալ նրա մասին: Կարծում էի թէ նա այլ ես կենգանի չէ, երբ յանկար ստոցայ մի ծրաբ Բուէնոս-Այրէոի անգլիական զեղպանութեան միջոցով: Բուըն յուզմամբ բայց արի ծրաբը: Ես Անգլիայում ոչ գործ ունիի, և ոչ էլ բարեկամ. լեզիս պատռեց երբ մտածեցի, որ այդ անպատճառ իմ Վիլհամից պէտք է լինի:

Ծրաբի մէջ կար մի բանի տող առանց թւահամարի.

Ի Մ Ր Ա Ր Ե Կ Ա Մ

«Այս ծրաբի մէջ կզտնէք մի բանի կնքը ւած նամակներ, ամենաթանկագինը, ինչ որունիմ այս աշխարհում: Պահէք զրանը 10 տարի ես. և եթէ այդ ժամանակամթջոցում ոչ որ չը ներկայանայ և իմ անունով չպահանջէ, պապա ի լոյս ընծայեցէք: Այդպէս է իմ էմմայի կամքը, որ ասաց ինձ. «Թող քո կեանքը իւրաքանչիւր գործը օգտակար լինի, և մեր տառապանքները թող ծառայեն յօգուտ մի որիէ

աձիւ: Ակրելի բարեկամ, կրկին չնոհակալ եմ
ձեզանից, որ դուք օգնեցիք էմմայիս Մազե-
րայուր, և այն բոլորի համար, որ դուք մինչ
այժմ ինձ համար արել էր»:

«Զեր Վիլեամ»:



Ն

Արևելքի եկ ԷՄՄՈԿՆԵՐԸ:*

Կատարէր պարտք տռանց տրտունչի:
Մարդու մեծութիւնը պարտքը կատա-
րելումն է:

Վիլեամը էմմային.

Լոնդոն, 12 Յունիարի 18. . թ.

Ներեցէր այն բանի համար, որ ես ձեզ
դրում եմ, կրկին ներողութիւն. համարեցէր

*) Իմ ձեռագրերի մէջ գտնւած էմմայի նա-
մակները գրւած են Վիլեամի ձեռքով, այդ իսկ պատ-
ճառով ներկայանում են իբրև պատճեն: Անկասկած
բարեկամս շէր կարող զրկել իւր ամենաթանկագին
գանձից և ես նրան լաւ ճանաշելով հաւատացած եմ,
որ իւր հետ գերեզման տարաւ:

Նամակների հետազոտութիւնից պարզ է, որ
սոքա ընարւած են Վիլեամի և էմմայի միմեանց
գրած նամակներից 18. . թւից մինչե 18. . թիւը:
Ինարկէ Վիլեամի համար հեշտ շէր հրատարակելը
բայց նա այդ արեց գրգւած դէպի էմման ունեցած
սիրուց, որպէսզի օգտաւէտ լինի մարդկանց:

թէ այս նամակը ստանում էք ոչ թէ առաջին,
այլ հարփերորդ կամ հազարերորդ անգամ:
Դրւած խօսքը աւելի անարատ է տոածից. սա
ճշմարտութիւն է և ես այդ ճշմարտութիւնը
երբէք այնքան պարզ չեմ զգացի, որքան այս
բայց կարծում եմ, որ իրաւունք ու-
նի՞մ յայտնելու իմ մտքերը այդպիսի ճանապար-
հով:

Արդին մի տարուց աւելի անցաւ այն ժա-
մանակից, երբ ես ձեզ առաջին անգամ տեսայ.
գուք գիտէք որտեղ և երբ: Այս տանջողանյայտու-
թեան մէջ, որ կրում եմ այժմ, ինձ միայն
միսիթարում է այն միտքը, որ զուք ես յիշում
էք այդ օրը, ժամը և բոպէն: Դուք գիտէք,
միսս էմմա, որ այնունետի ես միայն ձեր մա-
սին էի մտածում, միայն ձեզ էի որոնում և
միմիայն ձեր անունն էք զրոշմած իմ շրջուն-
րներին և ձեր պատկերը որտում: Ես սիրեցի
կապոյտը, պաշտում էի կապտագոյն երկինքը,
կապոյտ ժաղիկները, ժապաւնները և այդ բո-
լորը այն պատճառով, որովհետի ձեզ առա-
ջին անգամ սովորակ հազուուտով և կապտա-
գոյն զոտիով տեսայ: Ներեցէք երեխայութեա-
նըս, ես ակնածութեամբ էի վերաբերում այն

տառերին, որոնցից կազմւած էր ձեր անաւնը:
Անմելինելի յոյսերի և տանջանքների այս ամ-
բողջ տարւայ ընթացքում ես երազում էի նա-
պալեօն միծի գօրութիւնը, Բայրօնի հանճարը
և Ռուշիլդի հաբստութիւնը, որպէսզի արժանի
լինեմ ձեզ և իրաւունք ունենամ ձեր ստների
առաջ գնել զօրութիւնը, հանճարը, փողը և
ասել, բոլորը ձերն է, միայն մի ժպիտի փո-
խարէն, որը ինձ ասէ՝ «Ես քեզ սիրում եմ»:
Սմէն տեղ ես հետեւում էի ձեզ, Լոնգմոնում,
Բագում, Իտալիայում և վերջապէս կարողացայ
ձեր տունիր ընդունել. յարմարւեցի ձեր մօրա-
քրոջ հետ և լիտելացայ ձեր կեանքին, ա-
ռանց ձեզ կեանքը ինձ համար անհասկանալի
աներկակայելի էր: Բայց ես լուսմ էի: Երբեմն
ինձ վախեցնում էր այն միտքը, թէ ի՞նչպէս
համարձակւեցի ձեզ սիրել. Ես շափազանց ա-
մօթխած էի և լովիկ մնջիկ նայում էի ձեզ:

Դուք կարող էիր ձեր մի հայեացքով ա-
մենաանեբազգ մարդը դարձնել ինձ և յափտեան
հեռացնել ձեզանից. բայց զուք այդ շարեցիր
և թոյլ տւիր ինձ նայել ձեզ: Երբ իմ աշքե-
րում ակամալ տրտափալում էր բուռն սիրոյ,
ցանկութիւնների և մտքերի բացր, որոնք

զրադւած էին միմիայն ձեզանով, երբ աշքերս, ուղղւած դէպի ձեզ հոգեզմայլութեամբ, շափազանց աստւածացման սաստկութեամբ կարծես խօսում էին ձեր աշքերի հետ, յաճախ պատահում էր, որ ձեր զեմքից անհետանում էր խաղագ, մելամազգոտ հանզստութիւնը և ձեր աշքրում բորբորում էր կրակը, բայց դուք նոյն բոպէին սրոզում էիր ձեր արտասուրների տակ: Ո՞հ, մի ասէք, որ չէք սիրում ինձ, ես չեմ կարող հաւատալ: Ասացէք, որ ես յիմար եմ կամ յանդուզն, ծիծաղէք վրաս. արհամարհեցէք ինձ, բայց սուտ մի խօսէք: Եւ ինչու սուտ խօսել: Ինչըպն էլ մեծ լինէք կը թութութեամբ ձեռք բերած զարտնապահութիւնը, ինչըքն էլ մեծ լինէք կիզծութիւնը, որքան էլ նշանաւոր լինէք մարդկանց բաժանող լիզուների տարբերութիւնը սակայն այն պայծառ ճառագայթիք, որ Աստւած պարզեել է մեզ իւր զրախտից և, որը թափանցում է մեր աշքերի մէջ, ներկայանում է աւելի ուժեղ, քան այդ բոլոր խոշինգոտները: Մեր հայեցրը կայծակի արակութեամբ կարսդ է արտայայտել բարկութիւն, բոցակէզ ցանկութիւն և անսահման մէք, նա կարսդ է ատել, արհամարհել և յար-

զել. կարսդ է տարակուսել, հրամայել և հպատակիլ. կարսդ է և հարցնել ու պատասխանել, անհծել և օրհնել: Հայեցրը կարսդ է ամեն բան արտայայտել, բայց ոչ սաել: Եսկ ձեր աշքերը ինձ ասացին, որ գուք ինձ սիրում էք: Եթէ իրօք սիրում էք ապա ինչո՞ւ էք խուսափում ինձանից: Ահա ամսից աւելի է որ գուք իզօւք հեռացել էք ինձանից, այսինքն այն արժանայիշատակ երեկոյից երբ մենք միասին «Ճայն» շոգենաւի տախտակմածի վրայ նստած կտրում էինք Լա—Մանչ ջրանցքը: Գուք ձեր մօրաքրոջ հետ վերադառնում էիք ետալիայում արած ճանապարհորդութիւնից, այն ճանապարհորդութիւնից, որ ես ևս կատարեցի, որովհետեւ ես ձեզ հետեւում էի հեռուց երբեմն անհետանալով, երբեմն էլ ձեզ երեւալով: «Ճայն» շոգենաւը մեզ առաւ ընդհանուր յարկի տակ: Մի գեղեցիկ երեկոյ էք: Ծովը բոլորսկին խպագ, իսկ լուսինը երբեմն անհետանում, երբեմն էլ կրկին երեսում էք շոգենաւի թանձր ծխի միջից... Գուք նստած էիք աթոռի վերայ ձեր մօրաքրոջ հետ, որը նեցից իմ պատմութեան ազգեցութեան ներքոյ: Գուք լոյլ տուք ինձ խօսելու և հետեւելով

լուսնին, նազելի կերպով շարժում էիր ձեր
գլուխը, աշխատելով ծածկել ձեր դէմքը շո-
գենաւի խողովակի շւարում:

Հեմ յիշում թէ ինչ էի խօսում, բայց խօ-
սում էի անընդհատ, որովհետեւ ու ըստ սիրով լսում
էիր ինձ: Ես չէի նկատում ոչ լուսինը և ոչ էլ
այն լայն ակոսը, որը թողնում էր իւր յետեից
«Ժայնը» ամպի նման գորշ կանաչագոյն ծովի
վրայ: Ես միմիայն ձեր աստուածային դէմքն
էի տեսնում և դիտում էի, ինչպէս դուք աշ-
խատում էիր լուսնի արծաթաթոյն խազաղ լոյ-
սից ծածկել ձեր դէմքը շոգենաւի խողովակի
շւարում: Դուք յետ ձգեցիր ձեր մազերը, որոնք
հնազանդելավ զիշերային ինոնաւ քամու շըն-
չելուն, համբուրում էին ձեր ուսերը, մինչև որ
նոյն զւարճասէրը մօտեցնում էր նոցա ձեր
կղակին:

Միմիայն Անգլիայի ավեր, որին բռափէ տո-
րոպէ աւելի մօտենում էինք, իմ մէջ դառն
մտքեր էր ծնեցնում: Ամբովզ ժամանակամիջո-
ցում դուք մի անգամ միայն դէպ ինձ դարձաք
հետեհալ քանի մի խօսքերով: «Ի՞նչ կա-
տէք սրա մասին, Վիլեամ, ահա այս երկաթէ

չիւտնդ սէք.

խողովակը ծածկում է ամբովզ աշխարհը, ծու-
խի միակ ամպը պատում է լուսոյ ամբովզ ծո-
վը, որ իւր շարջն է սփռում լուսինը: Միթէ
նոյնը չէ լինում և մարդուս կեանքում: Տեսնում
էր երկինքը, բայց չէր կարող հանել նրան,
զգում էր որ Աստուած կայ, բայց նրա էու-
թինը ըմբռնել չէր կարող, զուք ցանկանում
էր սիրել և ընդգրկել ամբովզ աշխարհը, բայց
ընկճում էր տկարութիւնից»:

2ը զիտեմ թէ ինչ պատասխանեցի, բայց
շատ պարզ յիշում եմ, որ մի բապէից յետոյ ձկե-
ցիր ձեր թաշկինակը. Ես շտապեցի վերցնել,
մեր ձեռները հանդիպեցին և ձեր ձեռքը սեղ-
մեց իմո:

Ո՞րպիսի անդաւնդ բացւեցաւ առաջս այն
վայրկեանին: Էմմա, ոչ ոք գեռ ևս չէ շափել
մտքի արագութիւնը և ոչ ոք հոգու շարժողու-
թինը շափելու համար ժամացոյց գիռ չէ հնա-
րել: Գիտեմ, դուք զվացցիր ձեռս սեղմելու հա-
մար և կամ վախեցաք, դուք իսկոյն վերկացաք
և առացիք, որ զիշերւայ օդը ձեզ վնաս է և
զարթեցնելով ձեր մօրաքրոջը, զիմեցիր դէպի
ձեր խուցը: Փա մի բռպէի գործ էր. ինձ թւում
էր, թէ դա երաղ էր:

Այժմ էլ չեմ յիշում, թէ արդեօք պատաս-
խանեցի ձեր տառը «բարի գիշեր» Պ. Վիլեամ»
խօսրերին, ես մենակ մնացի, վախենում էի ին-
ձանից և դողում ինչպէս մի երեխայ. ինը
ինձ երեակայում էի և որդ և Աստւած: Իս զո-
յութեան մի մասը հճւում է բարձր բացական-
շում էր, «Վիլեամ, դու ամենաերջանիկն ես
աշխարհիս երեսին», իսկ միւս մասը ցաւելրվ,
երկիւլից բարացած, աւելի բարձր հաստատում
էր. «Դու ամենաթշւառն և ամենաողսրմելին
ես ամբողջ աշխարհում»:

Այդ երեկոյից սկսած, սիրելի կմմա, մի
տեսակ խոր անդունդ բացւեց մեր մէջ. դուք
սկսեցիր խոյս տալ ինձանից. դուք փոխեցիր
ձեր սովորական զրօսավայրը և այլ ես չէիք
ցանկանում հանդիպելիս հայեացըին, որը բռւն
ցանկութեամբ որոնում էր ձեզ և խնդրում ձեր
հայեացը:

Ինչնւ ուրեմն դուք սեղմեցիր իմ ձեռքը,
և թէ վայրիենական երջանիկութիւնն ինձ համար
այդպիսի սոսկալի վիշտ էր սրատրաստելու: Ի՞նչն
է ծանրանում ձեր սրտի վրա, ի՞նչ կայ ձեր
սրտից աւելի զօրեզ: Կարելի է, որ ձեր հոգու
մէջ լինի երկու ոգի, որոնցից մեկը օրհնում

իսկ միւսն անիծում է: Ինչնւ համար այդ-
պէս տանչում էր ինձ: Կամ զուցէ չգիտէք,
ի՞նչ բան է տանշանքը: Մինթէ յայտնի չէ ձեզ,
չէ որ ես ապրում եմ միայն մի սարսափելի
և այլանդակ ժարով, որ դուք ես տանշում
էր, որ զուք ես անիծում էր այն՝ որ անջրպետ
զրեց իմ և ձեր մէջ: Այս դառն հրճանքով տես-
նում եմ, ինչպէս օրէցօք զունատում էր, և եր-
բեմն էլ ձեր գէմքի վրայ արցունքներ եմ նկա-
տում, որոնք դուք լափում էք գիշերային լուս-
թեան մէջ: Դուք չէք բնում, արտառում էք:
Ես ես հեկեկում եմ և բռնը փախչում է աշե-
րիցու: Այդ դառն հրճանքն է, որ պահպանում
է իմ կեանքը. նա հանդարտեցնում է իմ միտքը,
այլապէս չէի կարող տանիել և զլուխս վազուց
տրարած կը լինէր տենգային կատաղութեան
և յուսահատութեան մնշման տակ:

Զեղ սիրում էի, սիրում լոիկ մնշիկ և այն-
պէս ուժգին, որ այն միտքը թէ դուք երբե-
իցէ իմը կլինէք, սարսացնում և երկիւղ էր աղ-
զում ինձ: Ես ինձ անարժան էի համարում և
երեակայում էի շրջապատել ձեզ խորին յագան-
քի և անահանձն սիրայ միմնոլարզով: Զգիտէք,
թէ ի՞նչ փոփոխութիւն արիք իմ մէջ. թէ ձեզ

արժանի լինելու համար որպիսէ խիստ փորձի
դիմացաւ իմ բնաւորութիւնը: Խրաբանչիւր ան-
գամ երբ թուլութիւն էի զգում, եռանդով և
տոկունութեամբ ձեռք էի զարնում արմատա-
խիլ անել այդ, ձեր անւան, աստւածային դէմ-
քի և դէպի ձեզ ունեցած սիրոյս օգնութեամբ:
Ես ամեն կերպ ճիգ էի թափում լինել կատա-
րեալ և ձեզ արժանի. թէի երկշոտութեամբ,
սակայն պարզ երեսով կարողանայի ձեզ ասել՝
«Էմմա, ես ցանկանում եմ ձերը լինել, տւեր
ինձ ձեր ձեռքը, մենք միմեանց արժանի
ենք»:

Դեռ չէ հասել այդ օրը... բայց, ինչպէս
հեռու մշուշի մէջ, տեսնում էի, որ երջանկու-
թեան ժամը արդէն մօտենում է, բուռն ձգտումը
և մի աներեսյթ երկիւզ ինձ գրգռում էին. և
ես գիտում էի միշտ դէպ առաջ, դէպ առաջ
այն ճանապարհով, որի ծայրին երեսում էր իմ
էմման. Ո՞հ, էմմա, թանկագին էմմա, դուք
լիովին ինձ հասկանում էր:

Գաւը այս բապէին զգում էր այն, ինչոր ես:
Բայց զուր խպեցիք կախարդիշ կապը, զուր
կործանեցիք այն տաճարը, ուր մտածում էի
իմ աստուծոյ արձանը դնել, վարդի թփից

քանդեցիք այն բունը, ուր երեակայում էի
զետեղել մեր ուրը, բցեցիք ուների տակ և
կոխկատեցիք: Իսկ ես թողնելու էի պահպա-
տութեանս ցուպը, որսվ ուխտ էի զնացել իմ
Մեկին և այստեղ գոչեցի այն ճանապարհոր-
դի նման, որը երկար աշխատանքի և զրկանքի
շնորհիւ դիզեց որոշ գրամագլուխ և որի վրայ
հայրենիր վերագառնալիո, յանկարծակի աւա-
զակներն յարձակեցին: Ճշմարիտ է, անդին էմ-
մա, ես անքաղաքավարի եղայ, երբ դիմերով
ձեր մօրաբրոցը, խեղբեցի ձեր ձեռքը, կար-
ծես գործը մի ամենահասարակ կեռջ էր վե-
րաբերում, կարծես ես ցանկանում էի ամուս-
նանալ միայն նրա համար, որ շափահաս էի
արդէն: Ես ստացայ ձեր ձեռքը յաւիտեան և
շաշխատեցի որսշել, արդիօր շփոթութիւնից,
թէ սիրուց զրդիւած այդ ձեռքը ոեզմեց իմը
«Տայն» շողենաւի վրայ: Փողը ձեռիս գրախ-
ափ դուռն էի բալխում, յուսալով, որ գոնապա-
նը կրանայ և ինձ ներս կթողնէ: Երբէր ես ինձ
չեմ կարող ներել այդ կոպտութեան, այդ վար-
ձաւնիրի համար, որ միմիայն յուսահատութեան
միջոցին կարելի էր անել: Իսկ զիտէք ինչ պա-
տասխանեց ինձ ձեր մօրաբրոցը: Նորա դէմքը

յանկարծակի լրջացաւ. պարզ էր, որ պատրաստած չէր և մեծ դժւարութեամբ չնշելով պատասխանեց գողգոշիւն ձայնով «Հարցրէր իրան կմմային. նա այնքան խելօք է, որ ինքը և միմիայն ինքը կարող է վերջնականապէս վրճուել. նորա ցանկութիւնը կլինի և իմը. . .» Այս ասելիս կարծես ցաւակցութեամբ և ըստ-ըսյշ զգացմունքով դիտում էր նա ինձ.

Եյժմ փոշու մէջ թաթախւած ես ձեր ուսն եմ ընկնում, ինչպէս մի գատապարտեալ, որի ոյժերը բեկրեկում են երկար բանդար-կութիւնից և որը յօւսահատ ոպասում է մի խօսքի, որը կարող է փրկել նորան:

Ես զզօռմ եմ մօրաբրոջից ձեր ձեռքը խնդրելուս համար, որ յանգղնեցայ զրել այն, ինչ չէր համարձակել աշքերով արտայա-տել՝ զզօռմ եմ, ազերսանքով ձեզ դիմելուս համար, որը ձեզ անհամեստ կթւայ իսկ ինձ անտարժան: Ես տեսայ իմ տան կործանումը և տաճարիս խորտակումը: Ես տանջւած, բայ-քայւած, մոռացւած եմ անապատում: Ես եր-քեմն տրքայից արքայ էի երեակայում ինձ և զրա համար հիմայ ոտիպւած եմ ողորմութիւն խնդրել հենց առաջին հանդիպողից. . . և այդ

ողորմութիւնը ձեզանից եմ խնդրում, իմ թա-գուհի, ձեզանից եմ սպասում, իմ երկնրի ասու-ածութիւն:

Էմիման Վիլեամին

Լոնդոն, յունարի 12-ին 18. . . թ.

Յարդելի պարոն.

Ես ոտիպւած պատասխանում եմ ձեր նա-մակին, չնայելով, որ ինձ համար այդ խիստ դժւար է: Յօւսով եմ, գուք կհաւատաք մի գժրադդ, թոյլ և կարեկցութեան արժանի էա-կի, որը գեռ ես սուտ չի խօսել: Նախ բան գրիշը ձեռս առնելը ես շատ արտասեցի. բայց ես չեմ կարող ձեր կինը լինել, Վիլեամ, ես չեմ կարող ամուսնանալ ոչ ձեզ և ոչ էլ ուրիշ մէկի հետ: Մի հացնէր, ինչնու, ձեր հետա-րբրբութեամբ մի մեծացնելը իմ վիշտը: Մոսա-ցէր ինձ: Դուք ջահիլ էք, ուժեղ մարմնով և հոգով: Զեր գեղեցիկ բնդունակութիւններով բազգաւորեցրէք մի այլ կնոջ, որը կարող է

ձեր սէրն ընդունել: 2^բ որ Աստւած բարի է
և ովորմած. իսկ աշխարհում շատ կան գեղեցիկներ և բուռն սիրով սիրելու ընդունակներ,
որոնք արժանի կը լինեն ձեզ: Թող նոցանից
մէկը երջանկանայ, թող նա ձեղանով պարծենայ:
Բայց նախ և առաջ մոռացէք ինձ, ես՝ ի
սրտէ խնդրում եմ այդ ձեղանից հօրս անունով:

Վիլեամբ Էմմային

Լոնգրոն, յունարի 13-ին 48. . . թ.

Ո՛չ, միսս Էմմա, ես ձեզ մոռանալ չեմ
կալով: Ո՛չ, Եւայի գուտարների միջից չեմ կա-
րով ընտրել ինձ համար հարսնացու: Ինձ հա-
մար այս աշխարհում գոյութիւն ունի միայն
մի կին, այդ գուր էք: Ինձ համար ուրիշ կեանք
շկայ, բացի ձեզ հետ միասին ապրելուց:

Ինչնու շփառահացաք գրելու, որ չէք սի-
րում ինձ: 2^բ որ ես մեռնելու բաջութիւն կու-
նենայի: Բայց գուք սիրում էք ինձ և հարիւր
անդամ ալիսարկում էք այդ մասին ձեր նամա-
կում: 2^{եր} սէրը կարգում եմ իւրաքանչիւր
բառի և կէտի մէջ, որ գրել է ձեր ձեռքը:

Դուք գրում էք, որ ոչ որի հետ չէք ամսա-
նանայ և չէք կարով իմ կինը լինել:

Միթէ չէք մտածում, որ այդ տանջանքը
աւելի խիստ է քան այնպիսին, որը կարով է
ստեղծէլ սպանիւրական ինկլիպիցիան: Միթէ չը
գիտէք, որ չկայ մի մարդ, որը կարուղանայ
համբերել այդ տեսակ տանջանքներին: Միթէ
ձեզ յայտնի չէ, որ խելագարութիւնն այդպի-
սի տանջանքների հետեանք է: Ի՞նչ մի գաղտ-
նիք է ընդգրկել ձեզ, ի՞նչ շար դի է բաժա-
նում մեզ երկուսիս. ով է մեղանից ամենազօրե-
զը, ով կարով է իրան աւելի զօրեզ համարել
քան մեր սէրը: Ինչնու շասացիք, որ ինձ տ-
տում էք:

Ես ձեզ չէի հաւատալ. . . Բայց գույցէ և
անտանելի բոլիներից մէկում ես մտածէի,
որ գուր ինձ առաջ սիրում էիք, բայց մի այլ
սէր, աւելի գերակշռող և հրամայական, զուրս
վանեց իմ սէրը ձեր սրտից: Ո՛չ, ես դրան չէի
հաւատալ: Բայց ինչնու դուք ինձ յուսահատու-
թեան շմատնեցիք, կեանքը ինձ համար ատելի
շգարձրիք և մի անգամից շոպանեցիք ինձ: Ով
ձեզ իրաւոնիք տես պահել ինձ այսպիսի սար-
սափելի դրութեամբ՝ երկների և երկրի մէջ:

է մմա, է մմա խղճացէք ինձ, մի մարդու
սրը շափտպանց սիրում է ձեզ և արտաւում
է երեխայի նման։ 2^ր որ դուք ինձ սիրում էք։

Վիլեամբ Էմմալին։

Լոնդոն, յունիաթի 15-ին 18... թ։

Ինչու լուսում էք, միսս Էմմա, միթէ այդ-
քան անգուժ էք։ Կամ թէ խսպանացի էք ազ-
գով, թէ ձեր երակներում սուրբ Թոմինիկի
արքունի է հսում։ Խղճացէք վերջապէս, սպա-
նեցէք ինձ մի անգամից։ Ամբողջ էութեամբս
դոգում և հառաջում եմ իմ հոգու բոլոր ոյ-
ժերը կենդրոնացած են միայն մի թախիծի
մէջ։ մարմնիս ամենափոքրիկ մասնիկը, ամե-
նահասարակ մտածողութիւնս, այդ բոլորը
ներկայացնում են մի սարսափելի ցաւի մարմ-
նացումն։ Ես երբէք չէի հաւատալ, որ մարդ
կարով է շափազանց տանջւել և չկորչել։ Չատ
իրաւացի է ասում Բայրօնը թէ՝ «վիշտը ան-
մահութեան կէսն է»։

Քաղցը մեզմահում է, ուրախութիւնը
յագուրդ ստանում, աշխատանքը յոդնեցնում

է, միտքը հանգստանում է. . . Քնում է հսա-
կանութիւնը, ննջում ազահութիւնը, հանգչում
է հանձարը, բայց վիշտը չի քնաւմ, չի հան-
գստանում և չի յագենում։ Նա շարանակ մոխ-
րից աճում է, ինչպէս հին աւանդութիւննե-
րի Փէնիկուր*։ Երբ նեարդերս զազարում են
տանջանք զգալուց, այն ժամանակ ցաւը փո-
խում է իւր բնաւորութիւնը, տանջանքները
նորութեան են, դառնում են աւելի ևս սարսա-
փելի։ Զայրոյթից յետոյ շարչարանքն է ինձ
գերում, ապա յուսահատութիւնը։ յուսահատու-
թիւնը տեղի է տալիս խղճի խայթին, որը փոխ-
ում է հոգեկան անկման։ Եւնորից վիշտը տան-
ջանք։ Վամպիրը, որը արիւնս է ծծում, սարսա-
փելի երազի անուրջն է։ Եւ անվերջ, անփոփոխ,
ուն, յաւիտենական, սարեցնող, անոպր ցաւ։

Միսս Էմմա, նա, ով ծաղրել է կրօնը, եր-
բէք չէ տանջւել։ Թուր էք տանջանքներիս
պատճառը և միայն դուք այս աշխարհում հաս-
կանում էք ինձ և վիակը, որրան ծանր են
կրածս շարչարտերները։

* Փէնիկութաշուն. — յունական rhoioinix. Աւոնդութիւնը
հեակեան է ասում առապելական Ֆէնիկս թուշուի մասին։
«Նա, զգալով իր մօտալուս մանք, այրեց կրակի բոցերի մէջ-
բայց նրա հանգած աճինից դուրս թռաւ մի նոր թոշուն»։

իմ մէջ տանջւողը մի մարդ չէ, իմ ահծնաւորութիւնս ներկայացնում է երկու մարդկային ցեղերի միաւորութիւն։ Այդ ձեզ յայտնի է։ Իմ մէջ սէրը միացրեց երկու աղգեր, երկու ճակատագիր, երկու աշխարհ։ Մայրս իտալացի իսկ հայրս անգլիացի էր։ Սոքա այնքան տարրեր անձնաւորութիւններ էին, որպիսին կարող է ստեղծել միմիայն բնութիւննը։ Իսկ սէրը աւելի զօրեղ լինելով, քան թէ բոլոր ալքիսիկունները, միացրեց նոցա։ Ես զգում եմ երկու բնութիւն, երկու աշխարհ՝ մտածմունքների, զգացմանց, ուրախութիւնների և վշտի։ Չառյաձին զգում եմ Վեգուվի բոցը և Լոնդոնի մառախուղը։ և գուշը ինքներդ էլ երբեմն կատակով ինձ հրաքուխ կամ մառախուղ էիր անւանում, նայելով խօսողը իտալացի թէ անպիացի էր։

Ահա այդպիսի օրերում պարզ հասկանում եմ, քան երեկիցէ, թէ ի՞նչ է նշանակում կրկնակի մարդ լինելը։ Բուռն զգացմունքը, վառ երիակայութիւնը կայծակի արագութեամբ ինձ բորբոքում են։ Իմ մէջ միաժամանակ մըրկուում են և Մօնշիբելլօն և Վեգուվը, և ես երկիւղով դիտում եմ, որ այդպիսի բոցը

մսիիր կդարձնէ իմ թոյլ և քնրոյշ մարմինը։ այն ժամանակ ես տանիջւում և հրճուում եմ այն երկրի որդու նման, որը ծնել է Դանտէսին, Լիոպարդին, Մալիխավելլուն, և Քօրջիային։ Բայց զգացմունքներն ինձ չեն այրում, երկակայութիւնը ինձ չի սպանում։ Հրաբուխիս բաժակում երբէք մոխիր չեմ տեսել, բացի շիխացած լաւայից։ Անգլիացին չի մեռնի այդ բորբոքուղ կրակից։ Ես գիտում եմ, թուում եմ սըրտիս հարւածները և կամքիս ամբողջ ոյժը լարում, հանգնելու այդ բոցը։ Այդպիսով, մարդու զործերը և զգացմունքները չնշում են և կուռում, իսկ բոլորը միասին անվերջ տանջւում։ Մակայն, երբ իտալացին այդպիսի յուզմունքներից, բուռն կրերից թուլացած բնում է և հանգստանում, միենոյն ժամանակ անգլիացին արթնանում է աւելի առողջ, ուժեղ և զործունեալ, նորոգում է կիրքն և վիշտը։ Ես զգում եմ խտալացու, իսկ զործում անգլիացու նման և ելէ գոյութիւն ունի մի մշտական շարժում, եթէ անվերջ վիշտը երազ է, ապա ուրիմն ես զգում եմ նոյնալիսի անվերջ շարժում և յաւիտենական վիշտ։

Իտալիան բնութիւնից օժտած է հրա-

բոխներով և զբա հետ միասին անուշաբոյք
նարնջի անտառներով. սակայն իժ մէջ կայ
միայն հրաբուխ և մշուշ, անտառնելի և անբո-
վանդակ տանջանք:

Ինչու համար սէրը այդպիսի կոպիտ կա-
տակ արեց, ինչու սպիտակ արջը՝ վաղրի, ե-
ղենին՝ վարդենու և սառուցը՝ կրակի հետ մի-
ացրեց:

Բացի զբանից, մինչ համբերութեամբ ես
կրում եմ այդ անտառնելի ցաւը, որը անպատ-
ճառ արտասուրով պէտք է վերջանայ, այդ
միջոցին անզվլացին, լարելով կամքի բոլոր ոյ-
ժը, ձգում է տիրանալ տանջանքներին, նրան
բարձր քեաւորութիւն տալ և գտնել գեղարւես-
տական գեղեցկութիւն տանջանք սրտերի մէջ,
էմմա, էմմա, դուք պիտիիք այս բոլորը և
պարտաւոր էիք զսպել ինձ և գտնել այն գաղտ-
նի ոյժը որը կարողանար կտրփի բերել հո-
գուս մէջ աիրող քաօսը՝ այն ժամանակ ան-
հետ չէի ոչնչանայ, ինչպէս այժմ, այլ կարող
էի օգտակար և բարի լինել: Էմմա, ինչու ու-
զում ես բեզ սպանել և ինքնասպան զառնար:
Ես չեմ պարծենում, լաւ իմացէր: Մեր հոգի-
ները ձուլել են, սրտներս համաձայն են բարա-

խում, ձեր միտքը արձագանք է օրոնում իմ
հոգու մէջ, ապա ուրիմն սպանելով Վիլհամին
ձեզ ես սպանած կլինէր: Ինչու ցանկանում էր
մեռնել զուք, որ այդպէս մատաղ, գեղեցիկ
և սիրող էր: Ինչու ցանկանում էր ոչնչացնել
երկու արարածներ, որոնք միանալով ամենա-
երջանիկը կը լինէին, կօրննէին իրանց ծնւած
բոպէն, և Սրարշին, որ նոցա ստեղծել է մի-
մեանց համար: Ի՞նչ խօսք, ի՞նչ գաղտնիք
կարող է արգարացնել այդպիսի մի սարսափե-
լի չարագործութիւն: Ես սնապաշտ եմ գառ-
նում կարծում եմ թէ գտնեւում եմ ցաւը և
խօնեաւ այրում, ուր բազմած է Սիրիլան, որ-
ին չեմ կարող տեսնել և մի ներքին երկիւզա-
ծութեամբ սպասում եմ իմ բազով վճռող նո-
րա խօսքերին: Ուրիմն գոյութիւն ունի օրհա-
սը, նմանապէս հմայութիւնը և կաֆարդութիւ-
նը: Գոյութիւն ունի բազով աներեսոյթ սուրը,
որը սարսեցնում է ցինիկին, իզուր և անսպասելի՝
շողշոպումէ անմեղի զլիխին և ստիլում նրան «նղո-
վիր կեանքն և Աստուծոյ նախախնամութիւնը»:

Ինչու չեմ խելացարւում, ինչու չեմ կա-
րողանում մեռնել: Եթէ, նոյն խոյն մարդկան-
ցից ամենայետինը, ամենագժիգիր, չնշինը և

արհամարհելին լինէի, բայց և այնպէս ես այր
մարդ եմ, իսկ գուք կի՞ն. գուք պարտական էիր
ձեռք կարկառել վշտի և տանջանքի մէջ զեզե-
րողին և յուսահաւածին: Գէլթ մի անդամ ես
երջանկացրէք ձեր զոհին: Նախ բան օրհասա-
կան կախաղանին յանձնելը չնորհեցէք ձեր մի-
ակ, մի հատիկ խօսրը:

Եեզանից սէր և ողորմութիւն շեմ խընդ-
րում, միայն միսիթարել եմ ես ազերսում:
Պատասխանեցէք վերջին նամակիս, երեք օրն
արգէն անցաւ: Հասկացէք, Էմմա, ինչ է նշա-
նակում երեք օր: Երեք օր ու զիշեր է, 72
ժամ է, ինչ որ կարդացել եմ ձեր ձեռքով
գրւած թերթը, որը ասում էր, թէ գուք լմը
շէք կարող լինել: Քարուս օրինքները մահւան
պատիժը ընդունում են, բայց նորա պահան-
ջում են կարգալ մեղադրւածի առաջ դատա-
վճիռը, որպէսզի նա իմանայ թէ ինչու են
սպանում իրան: Դուք մինթէ իրաւունք ունիք
ինձ հետ աւելի վատ վարւելու բան մեղա-
զրեալի հետ:

Նամակս ստանալուց երեք ամբողջ օր է
անցել, և գուք կարողացար երեք օր լուի:
չիւսնդ սէր.

Մինթէ կին կամ մարդ չէք: Թէ յիրաւի
գուք սառեցիք կամ մեռաք: Ի՞նչպէս կարող
էք հանգիստ մնալ, եթի հաստատ զիտէք, որ
մի քանի քայլ ձեզանից հեռու, ձեր տան ա-
ռաջ, ձեր պարտէզի պատի մօտ շրջում է մի
մարդ, որ ձեզ է պատկանում, կազմում է ձեր
մասը, որ նա զողում է սանսամանիրից, որ
ցրտից նրա ատամները զնզննդում են, և որ ոչ
որ նրա առաջ գուռ չի բաց անում, ոչ որ
նրան չի տարացնում:

Ճշմարիտ, միսս Էմմա, գուք սառեցիք և
անզգայացաք: Ես կասկածում և յայս կորցնում
եմ: Աղաչում եմ ձեզ ձեր հօր անունով, որին
գուք միշտ յիշում էք, իսկ ես ատում եմ, ինչ-
պէս և բոլոր մարդիկներին և ձեզ և ամբողջ
տիեզերքը: Նզովում եմ ձեզ ձեր հօր անու-
նով, պատասխանեցէք գէլթ մի խօսրով:

— 70 —

Կմման Վ. իլեամին

Լոնդոն. յունարի 16-ին 18...թ.

Յանուն իմ հօր, որին գուք ատում էք, ՚ի
6

— 71 —

սէր ձեր դէսի ինձ ունեցած սիրոյ մոռացէք
ինձ, Վիլեամ:

Միթէ գուր չգիտէք, որ ես էլ տանջ-
ում եմ և նպավում ճակատագիրը, այն ճակա-
տագիրը, որը ձեզ ես այդպէս ոարսափնցնում
է, որը խօսապէս գոյութիւն ունի, ցնորական
երազ չէ, այն ճակատագիրը, որն առաջնոր-
դում է մեզ և անշափ զօրեղ է մեզանից:
Մեր—անսահման ովկիանոսի չնշին կաթիլ-
ներս—պարտաւոր ենք գոհահալ ովկիանոսից
մեր ուրախութեան և վշտի համար: Տունը
գոյութիւն ունէր և ընտանիքը կազմած էր
ազդէն, երբ մենք աշխարհ եկանք և մենք
նրանց համար պարտական ենք զոհել մեր ար-
տասուբը և արինք: Իւրաքանչիւր անհատ,
որի կեանքը այսպէս աննշան է, իրաւունք չու-
նի հանգընել արեն այն գիտաւորութեամբ,
որ նրա կենդանացնող ճառագայթներով տաքա-
ցնէ իրան և միայն իւր ցեղը:

Ինձ մոռանալով, Վիլեամ, գուր կիստարէք
ձեր պարտը, կիստարէք մի բարձր և վսեմ
գործ և ես ձեզ հետ միասին կձգտեմ միւնայն
նպատակին: Մինչ մենք կենդանի ենք մեզ կը
միացնէ սուրբ պարտականութեան կապը: Յի-

շեցէք ձեր կմմային բայց սիրեցէք ուրիշին:
Նախ և առաջ գաղարեցէք ինձ սիրելուց: Մէ-
րը մարդուն համար չէ ամեն ինչ. նրանից բար-
ձըր կանգնած են պարտականութիւնն, առա-
րինութիւնն, աղնուութիւնն, անձնաղոհութիւնն
և ընտանիքի անվերջ բազգաւորութիւնը:

Բոլոր արարածներն ընդունակ են սիրելու,
բայց ոչ հակառակելու սիրոյ կրակին, միայն
մարդուն է յատուկ հանգցնել սէրն և դառնալ
մեծ և ազնիւ: Հանգցըք ձեր Վեգումը, Վի-
լեամ, և եղէք կրկին անգլիացի: Ես տանջում
եմ ոչ պակաս ձեզանից, բայց ես կարսդանում
եմ հանգիստ մնալ, կարսդանում եմ ցամաքի-
ցնել արտասուբներս՝ շթովնելով նոցա ընկնել
այս թղթի թերթի վերայ, որպէսզի նոքա ձեզ
կրակի ու բոցի մէջ չքցնե, որոնք կարող են ձեզ
այրել, իմ սիրելի բարեկամ: Ես ինքս կատա-
րեալ անգլիացի եմ: Բացի դրանից, իմացէք,
իմ Վիլեամ, ես տանջւել եմ միշտ, ես փորձ-
ւած եմ վշտերի մէջ, իսկ գուր յուզում էք մի
անյացօգութիւնից, որովհետեւ այս առաջին
անգամն է, որ վիշտը ձեզ այցելում է: Անշափ
մեծ է ներկայ վիշտը, թանկագին Վիլեամ:
Ես գիտեմ որքան մեծ է դա. բայց չէ որ ես

վաղուց, սրանից շատ առաջ, հազար անգամ տանջւել եմ, տանջւել եմ ամբողջ տարիներով, այդ պատճառով էլ կեանքս թւում է ինձ շատ երկարատի: Եւ այս սկզբնական վիշտը բոլոր միւներից ամենազօրեղն է. նա ինձ զրկում է հոգու քաջութիւնից, խում է ոյժերս, սպանում է ինձ: Թուք չէք բաւականանում, անգին Վիլամ, այսրանով, որ ես այժմ ասում եմ ձեզ, կամենում էք աւելի՞ն գիտենալ:

Ես իմ մէջ այնքան համարձակութիւն չէի գտնում կոիւ վճռելու. այս երեքօրհայ լուս-թեան միջոցին, երբ դուք երեակայում էիք թէ ես կամենում եմ ձեզ տանջել, այդ երեք օրեայ ընթացքում ես ինձ զանակիցներ էի ո-րոնում: Բարի մօրաբոյս արտասում էք ինձ հետ, բայց նա ինքն ես կարօտում էք այն պաշտ-պանութեան, որն ես էի նրանից պահանջում: Երկու օր արտասուրով անցկացնելուց յետոյ, իմ անգին Վիլեամ, ես ոյժերս հաւաքեցի հ զիմեցի հօրս նախկին բժշկին, որին նա մատ-նացոյց էք արել որպէս ամենալաւ խորհր-դականը կեանքի նեղ հանգամանքներում: Բարի ծերանենին համարեա ամբողջ օրն ինձ հետ նստե-լով՝ խորհուրդ տւեց ինձ հեռանալ Անգլիայից:

Զեր՝ այս նամակը կարգալու միջոցին ես արգին մայր ցամաքում կլինեմ: Թուք իհարիէ հարց կտար, թէ որտեղ եմ ես, ուր եմ տա-նում իմ խաչը:

Մի տոմսակ թողէք մեր տանը և նրա մէջ խոստացէք լսել իսձ, ապրել, ամեն միջոց փոր-ձել այն նստակով, որպէսզի ինձ մսուանաք և այժմեանից եկէք միմիայն իմ եղբայրը:

Դարձեալ, Վիլեամ, երգեցէք, որ չէք սրո-նիլ ինձ և այլ ես նամակագրութիւն չէք ու-նենալ ինձ հետ:

Մնար բարեաւ, Վիլեամ: Մի վատնէք ե-րիտասարդութիւնը, ձեր ոյժերն և տաղանդն ահօգուս ձանապահնով, որը կարող է ձեզ յուսահատութեան մէջ բցել: Մենք շափազանց անզօր ենք ապրելու ամեն բանի հակառակ. թող մեր կեանքը միայն անընդհատ անէծք չլինի: Գիտեցէք ձեր զուրջն և գուր կտես-նէք, թէ որքան հազւագիւտ քաջագործութիւններ կարող էք կատարել և բանի վեհ ճշմար-տութիւններ կարող էք զտնել ու տարածել. աշխատեցէք, միխթարեցէք զժբաղդներին, բա-ջալերեցէք վհատւածներին, սերմանեցէք ձեր շուրջն ուրախութիւն և ճշմարտութիւն: Կատա-

բեցէր այդ բոլորն յանուն ձեր՝ զէպի ինձ ու-
նեցած սիրոյ, 'ի սէր զէպի

«Զեր քոյր Էմման»

Վիկեամը Էմմային

Եյն, Էմմա, ես պէտք է ապրեմ, որովհետեւ
գուր ինձ սիրում էր, ես պէտք է ապրեմ,
որովհետեւ գուր պէտք է շարունակ ինձ սիրէր:
Բայց երդում եմ, ես ձեզ երբէք չեմ մոռա-
նայ: Ես ձեզ սիրում եմ, գուր էր իմ բաղդա-
սրութիւնն, իմ աստածը, գուր ինձ համար
ամեն ինչ էր:

Վիկեամը Էմմային

Սան-Տերենցօ, Ապրիլի 20-ին 18...թ.

Անգին բոյրիկ, անիծեցէր, սակայն ականջ
գրէր ինձ: Ես շեմ կարող չյայտնել ձեզ այն,
որ ես այստեղ եմ, ձեզ մօտիկ: Իմ ուրախու-
թիւնը այնքան մեծ է, որ ես անկարող եմ
թագցնել նրան, ես շեմ կարող լոել: Այստե-

զից տեսնում եմ այն տօւնը, ուր գուր բնակւեցիր.
տեսնում եմ վակւած պատուհաններն, որոնց
յետեւում գուցէ այս բաղէիս գուր երազում էր
կամ տխրում: Ինձ ձեզանից բաժանում է, մի-
այն փոքրիկ պարտէզը և նորա ծառերը ծա-
գային բաժուց տատանւելով՝ սիրով շփւում են
ձեր տան պատերին:

Ամբովզ գիշերն աշքերս շխփեցի:

2Եր զգում արգեօք, որ Սան-Տերենցօյի
օգն անցեալ գիշերւանից բոլորավին փոխւել է,
որ նա այլիս այն չէ, ինչ որ առաջ էր: Ես
զգում եմ ինձ երջանկութեան գագաթնակիւտին
հասած և կարծես բոլոր մարդիկ նայում են
ինձ իրրի աշխարհիս ամենաերջանիկ մարդու
վերայ: Խոստովանում եմ ձեզ, բայց միայն չը
ծիծաղէք, որ ես տասն անգամ նայեցի հայե-
լու մէջ, որպէսզի համոզւեմ, թէ յիրաւի ես
եմ այն մարդը, որը վայելում է այդ երջան-
կութիւնը, որի սրտի մէջ թափանցեց նոր լոյ-
սի ուրախալի ճառագայթը . . .

Մի անգամ վճռելով խախտել տւած խօս-
քը՝ չորսնել ձեզ (սորանից աւելի զարհուրելի
մեզը, ինձ թւում է, չի կարող լինել աշխար-
հում) ես համարձակւում եմ ստեակով անել

և միւս ուխտո, այսինքն ձեզ գրել: Ես ձեզ
այնքան շատ բան ունիմ ասելու, որ չգիտեմ,
որից սկսեմ: Ես ամբողջապէս յուզւած եմ,
իսկըս գլուխս չի գալիս, ամեն մի վայրկեան
ընդհատում եմ նամակն և նայում ձեր պատու-
հանին: Իմ հոգին շրջապատում է ձեր տունը
սիրոյս միջնորդուով և փաղարշում է նորան
ինչպէս ամենաթանկապին և սուրբ առարկայի:

Ես անկարող եմ մարերս գասաւորել այս
չնշին թերթի կտորի վրայ. Ես ուզում եմ ա-
մենից առաջ հաղորդել ձեզ, որ Ես այստեղ
եմ, ձեզ հետ միասին Սան-Տերենցոյում: Հալա-
ծեցէք ինձ հարիւր մղոն հեռու այստեղից և
կամ դնելով ձեր ձեռներն իմ զյլիխն, ժպտա-
րով առացէք. «Վիլեամ, իմ եկբայր, Ես ըեզ
ներում եմ»: — Յտեսութիւն, Էմմա, Ես զնում
եմ սուրհանդակ որօնելու, որը պէտք է յանձ-
նէ ձեզ այս նամակը:

Վիլեամը Էմմային

Սան-Տերենցո, ապրիլ 20-ին 18...թ.

Ես գուրս եկայ փողոց, նամակը ձեռիս.

սիրտս սաստիկ բարախում էր և ես այնպէս
սաստիկ վրգովուած էի, որ եթէ սոտիկանը պա-
տահամբ հսնդիպէր, անպատճառ կրանտար-
կէր ինձ, որովհետեւ գէմքիս վրայ յանցանք էր
գրօշմւած: Եւ միթէ յանցանք չգործեցի ոտ-
նակով անելով տւած խօսր:

Ես անցայ ձեր տան մօտով. գուռը կող-
պած էր, պատուհանները փակ. բոլորը ընած
էին: Ես տան շուրջը պտոյտ գործեցի և կանգ-
նելով այստեղ, ուր պատի մօտ խոտի մէջ
շատիզ էր բացւած՝ դիտեցի շուրջս և, ոչ որի
չնկատելով, մօտեցայ ու պատը համրուրեցի:
Միթէ զուր շգգացիք իմ համրոյրը . . . Յետոյ
փախայ, կարծես սարսափելի սպանութիւն էի
գործել. Ես վազում էի երկիւզից և սարսա-
փից զարնւած, վազում էի ամբողջապէս ըրբա-
նախմոր եղած կէս ժամ շարունակ ամայի ճա-
նապարհով գէպի ձիթենիների անտառը, երբեմն
երբեմն նայելով կամ ձեր տանը կամ ծո-
լին և կամ կապոյտ երկնիքն: Ես անընդհատ
վազում էի, մինչեւ որ յոգնածութիւնից սախտ-
ւեցի կանգնել: Որքան կիրք, որշափ կեանը է
ժամկւած մարդկային օրդանիզմի մէջ: Ես
զգում էի, որ ներսու հրճւանքի ամրող աշխար-

հը ահսկի պատերազմ էր մզում վշտի աշխարհի հետ, ես գիւղ վերադարձայ ծովի ափով և գնում էի արագ բայլերով բոլորովին ջրի եղրով. ես հրճանքով գիտում էի թէ ինչպէս ծովի ալիքի ընթաց և սպիտակ ֆրաւը ողովում էր բարակ աւազի վրայ թողած իմ ոտի հետքերը: Ի՞նչ բաւականութիւն են զգում սովորաբար մարդիկ գիտելով այն, հազիւ նկատելի, գիծը, որ բաժանում է ծովը ցամաքից, անսահմանը—սահմանափակից, անցաւոր կեանք—յոյսերի և ձգտումների յաւիտենական երազներից:

Ես հարցրի, կայ արդեօք Սան-Տերենցօյում փոստ և պատասխան ստացայ թէ շկայ և նամակը հարկաւոր է հացնել Լերիշի: Այդ պատճառով մնում էր միմիայն որոնել որիէ նամակատար և նրա ձեռքով ուզարկել նամակը, որը շատ հեշտ ու պարզ էր: Ինըս բարձրանալով մի քարակոյտի վրայ՝ ժամացոյցը ձեռքիս՝ սպասում էի ոտարքիկ փորբիկ ձկնորսի վերադարձին, որին ես յանձնարարութիւնս էի արել: Երկու անդամ ինձ այնպէս թւեցաւ, իբր թէ ժամացոյցիս ոլարները կանգնել են և մօտեցնում էի ականջիս: Վերջապէս գաղարեցի

նայելուց և անհամբերութիւնից յուղւած մկնեցի պոկոտել անուշաբոյր ծաղիկները որոնք: առատութեամբ ծաղկել էին իմ շուրջը

Օ՛, իմ էմմա, որբան ծիծաղելի է սիրահարւածն անսիրտ մարդու մօտ:

Մի բանի բովէից յետոյ վերադարձաւ փորբիկ ձկնոսը, մի բարից միւսը թռչոտելով ձեռքին բռնած իմ նամակը: Ես նորից փակեցի աշքերս փորբ երիխայի նման մտածելով, որ այդպիսով նա էլ ինձ չի տեսնի: Սակայն վարձած նամակատարը մօտեցաւ ինձ և ասաց, որ գռները գեռ ես փակ են, որ սշ մի զանգակ չկարողացաւ դտնել և ընդհանրապէս չդիտէր ինչ կերպով արթնացնել քնածներին:

Բայց ճարպիկ տղան փակած գռների առաջ էլ իլ յոյսը չէր կտրել. նա բարձրացել էր առաջին յարկի երկաթեայ վանդակի վրայ սակայն ամենն էլ փակ էր գտել. նոյն իսկ խոհանոցում, աւելացրեց նա, կատεւի հոտ անգամ շկար: Այժմ նա եկաւ ինձ հարցնելու թէ արդեօք կարմզ է բարով գուար ծեծել և արթնացնել այդ ընկոտներին՝ ինչպէս ինքն անւանում էր այդ տան ընակիչներին: Պատմելու միջոցին նրա թուխ և անմարուր, բայց միե-

նոյն ժամանակ խելօք գլուխից, չէին անհետա-
նում ամեն տեսակ ծամածութիւններ:

Ես նրան արգելեցի պղմուկ բարձրացնել,
յետ տռայ նամակս և անտ այժմ նստած նո-
րից զրում եմ ձեզ: Սէրը մարզուս երեխայ է
դարձում, իսկ երեխաներն ամելի սիրելի և
անմեղ են, չնայելով, որ, միննոյն ժամանակ,
ամենաանհանգիստ էակներն են այս աշխարհում:
Ես այժմ այստեղ եմ: Գլուխս ըիշ է մնում
որբարփ, բայց ես կրկին բաւական հանգիստ
եմ և կարող եմ ձեզանից ներոզութիւն խնդրել,
կարող եմ արգարանալ և պաշտպանւիլ, կա-
րող եմ հասնել այն կէտին, որ գուք ներէք իմ
յանցանիք:

Գուք Հօնդոնից գուրս եկար, իսկ ես մը-
նացի այնտեղ: Ահա և այն տանջանքների պատ-
մութիւնը, սրոնիք ես չկարուղացայ տանել
երեր ամուայ ընթացրում և, որոնիք իմ ամբողջ
կեանքում առաջին և, յոյս ունիմ, վերջին ան-
գամ ինձ ստիպեցին կոտրել տւած խօսրս:

Սաաջին օրերի կատարեալ յուսահատու-
թիւնից յիտոյ ես փարք ինչ խելքի եկայ և ըս-
կանցի մտածել ինչպէս պատրաստւեմ իմ
ապագայ կեանքի համար: Ես վճռեցի զրել

ձեզ և անցկացնել երկու կամ երեք ժամ ձեզ
մօտ: Կնքելով նամակը՝ կարծես փոստայսվ
ուղարկելու դիտաւորութեամբ՝ հրամայեցի թամ-
բիլ ձես և ճանապարհ ընկայ: Համնելով մին-
չի առաջին զրուավայրը, որին ճանապարհին
հանգիպեցի, ես իմ կայծակին եօրդայ զցեցի
երեակայելով, որ կարող եմ ձեզ հասնել և
անձամբ յանձնել մօտիս նամակը: Զբօսավայրն
այն ժամանակ գատարկ էր. ես միայնակ թըր-
չում էի ձիուս վրայ նստած և վառ երկա-
կայութիւնը պատկերացնում էր իմ աշքերի ա-
ռաջ իբր թէ՝ միջերկրական ծովի ափին եմ,
գտել եմ ձեր տունը, կարծես տեսնում եմ ձեզ
պատուհանում, իբր թէ զուք ժպտում էր և
քաղցրութեամբ բարեւում ինձ. իսկ ես բարձրա-
նալով ասպանդակների վերայ, յանձնում եմ
ձեզ իմ նամակը... Ես բոլորովին խորսաւղ-
ւեցի այդ անուրջի մէջ և ամբողջ ժամանակն
երազում էի իբր ձեզ մօտ եմ, մինչև որ ձիուս
յանածութիւնն ստիպեց ինձ վերջապէս տուն
վերագառնալ: Տուն գալով զգացի սաստիկ յոզ-
նութիւն, պառկեցի և մօտ մէկ-երկու ժամ կի-
սաբուն անցկացրի: Այն լէտարգիայից յիտոյ,
որն ես կամենում էի որ անվերջ տելք, զի-

մեցի գէպի իմ գրասնենակը, կարդացի ձեր նա-
մակը և ձեր զբութեան մէջ մտնելով փորձում
էի պատասխանել: Ես պատրաստ եմ ասել ձեղ
բոլորը, որպէսզի զուր իմանաք թէ նրան
բուռե կերպով սիրում եմ ձեզ:

'Ի հարկէ, իմ կեանքը նման չէ այն կեան-
քին, որպէսին զուր ինձ խորհուրդ տւիր, բայց
այլ կերպ ապրել ես անկարող եմ. Հրաժարել
այդպիսի կեանքից կարող եմ միայն ինքնա-
սպանութեան պայմանով: Դուք գրում էք, որ
ես պէտք է սովորեմ դժբաղներին մխիթարել,
փոքրութիւներին բաջակերել և շուրջս ուլախու-
թիւն ու ճշմարտութիւն սերմանել՝ բայց ձեր
խեղճ Վիլեամը կարող է միայն մի բան անել-
սիրել ձեզ, սիրել այն բուռն եռանդով, որն
յառաջնում է յուսահատութիւնից: Զարունակ
ցնորական լարւած գրութիւնը, մի ինչ որ
թափանցիկ օգային աշխարհում սոււառնիլը,
այլեկոծող և մաշող թափառումն ինձ աստի-
ճանաբար հասցըն ծայրակեզ գիւրադրդու-
թեան, կատարեալ խելացնորութեան, որից ես
աւելի քան մտհից վախճանում եմ: Մանկութիւ-
նից սկսած ինձ սարսափեցնում է զիտակցու-
թեան մահը՝ խելացնորութիւնը, վախճնում է

աւելի քան ինքը մահը, որ միայն չնշին արա-
րածի կեանքի բնդհատումն է:

Եւ ես կենդանացայ այնպէս, ինչպէս ամ-
բողջ տարիներով ճնշւած ըսպանակը, որն յան-
կարծ ազատում է իրան ճնշող ծանրութիւ-
նից և անակրնկալ ձգւելով, ոչնչացնում է իր
ճանապարհի վրայ եղած խոչընդուները:

Մի բանի յոպէում ես պարզ որոշեցի իմ
վիրքն այս աշխարհում. ես զգում էի, որ ե-
ռամսեայ անշատումն իմ գէպի ձեղ ունեցած
սէրը կրկնապատկեց, զգացի, որ առանց ձեզ
իմ կեանքը մի անտանելի լուծ և անտանելի
շարչարանք է: Ես ձեզ խոստացայ ապրել, բայց
եթէ գարձեալ կշարունակի նոյնը, ինչ որ
վերջին երեք ամսւայ ընթացքում էք, իմ գի-
տակցութիւնը կխանգարւի. իսկ զուր ՚ի հարկէ,
այնքան բարի էք, որ ձեր Վիլեամի համար
խելացնորութիւն չէք ցանկանայ: Ես մտածե-
ցի գտնել ձեզ, փնքել նոյն խոկ աշխարհի ծայ-
րում և, եթէ հնարաւոր է, ինդքել ձեզանից
սէր կամ տւած խօսք յիտ ստանալ: Դիլէ՛ւ-
ման դժւարին էք, բայց նա շատ աւելի խրս-
տապահանջ է, գէպի իւր վերջնական վճիռը,
ես անկարող եմ ուրիշ ելք գտնել և կամ տ-

ւելի սառը մտածել: Ուղեղի լաբիրինթոսից, սրտի հրաբուխից ծնուռմ են հազար ու մի մտքեր, հազար ու մի կրքեր, որոնք հիւսում, ընդհատում և կռւում են միտեանց վէճ, բայց հասնում է վերջնական կռւի օրն և մշուշը փառատում է, կորչում է երկչոտութեան կառկածն ու սարսափն և պարզւած ֆօնի վրայ մնում է միայն մի ռիլէմմայ, ճիշտ ձհակերպւած . . . մնում է կռիւն երկու սկզբունքների, երկու կրքերի, երկու անձնաւորութիւնների, երկու թշնամի խմբերի, կարճ ասած, միշտ փոփոխում են երկու տարրեր, որսնցից մէկը պէտք է յազթող հանդիսաանալ, իսկ միւսն յաղթւած:

Իմ ռիլէմման այսպէս էր—կամ ապրել ձեր սիրով և կամ մեռնել:

Անուրջների թագաւորութիւնից կրկին աշխարհային իրականութիւնը վերադասնալով և հեռացնելով ինձանից ամրողապէս իտալական պօէզիան, որն ինձ ներշնչեց այլպիսի վառ սէր, ևս ինձ նորից կատարեալ անգլիացի պացի և մի վայրկեան անդամ շերկրայեցի այն բանի համար, որ կզտնեմ ձեզ: Դուք չէք սի- չիւանդ սէր.

բում ձմեռը, եղննին և հիւսիսի սպիտակ սըփ- ոսցն և այդ պատճառով էլ զուք իտալիայումն էք. իսկ գեռ ևս այդ երկրում կատարած ան- էք. իսկ գեռ ևս այդ երկրում կատարած ան- էք ճանապարհորդութիւնից զուք երկու գե- ցեցիկ յիշատակներ պահպանեցիք, որոնց մա- սին մենք յաճախ և երկար խօսակցում էինք արեի մայր մտնելու ժամանակ: Ես համոզւած էի, որ զուք կամ Սօրբենզօյումն էք, կամ Սպե- էի, որ զուք կամ Նարեկութիւն և ոչ էլ յիշայի ծովածոցում: Ոչ խարէութիւն և ոչ էլ մտացածին բան է այն, որ սիրտը կարող է նախազգալ:

2ի կարելի սիրել առանց սիրով սրտերի ի մի ձեռելուն: Այդ պատճառով էլ սիրով նախազուշակելու ընդունակ է: Նա կարգում է նոյն իսկ իր մէջ այն, ինչ որ արտազրւած է մի այլ զրբից, զգում է ուրիշ անձի կեանքը, որ նրանից անբաժան է, կեանք, որն այսպէս առած, ոյժով բաժանւած է սեպհական հոգուց:

Ես եկայ Սպեցիա և սկսեցի որսնել բո- յոր հիւրանոցներում և տներում. այսպիսով ես միայն երեկ կարողացայ մի նաւազարից տե- ղեկանալ, որ երեք ամիս առաջ նա տարել է երկու կանանց Սան-Տերենցօ, մէկն, ասում էր նա, շատ գեղեցիկ էք և մատագ, ունէր

փոքր ինչ հիւանդոտ դէմք, իոկ միւսը հասակաւոյ, լիրը և, ըստ երեսյթին, շատ բարի: Այդ անսպատճառ դուք պէտք է լինէիր ձեր մօրաբրոջ հետ: Ես խնդրեցի մակոյկավարին, որ անմիջապէս Սան-Տերենցօ հասցնէ ինձ. նայածառեց, մատնացոյց անելով այն բանին, որ խիստ բամի բարձրացաւ և աւելի լաւ կինէր եթէ մի թիւավար ևո վերցնենք: Ես չհամաձայնեցի: Նա միայնակ տարաւ ձեղ, միայնակ էլ պէտք է հասցնէր ձեղ մօտ և ձեր Պիլեամին: Ես նոտեցի գեկի մօտ, առազաստները սաստիկ փրւեցին քամու սաստկութիւնից և հէնց կարծես պատրաստ էին պատառելու: Մենք արագ սլանում էինք ալիքների վրայով: Բայց ես աններելի կերպով շփոթւած էի և ամեն բոպէ սպասում էինք, որ ահա նաւակը կփշրւի ժայռերին կպչելով և կամ կշրջւի: Վերջապէս նաւակավարը չկարողացաւ այլ ևս համբերել և խնդրեց ինձ հեռանալ գեկից: Ես հնազանդեցի և նոյն խոկ ուրախ էի, որովհետև կարող էի գնալ ցուուկի մօտ: Ըրջապատւած երկու առազաստներով, ալիքից բառորդ արշին հեռաւորութեամբ, կանգնած էի մինչև ոսկորներս սառը քամուց փետացած, աշրհ-

րով ուտում էի այն հրաշալի գրախտը, որ կոչւում է Սպեցիայի ծովածոց, նրա բլուրները սարերն ու հովիտները: Ես սիրով նայում էվ ձիթենու իւրաքանչիւր տերեկի վրայ, իւրաքանչիւր գալարու վրայ, ուշագրութեամբ հետեւում էի մարզարտանման փրփուրին, որն անհետանում էր ալիքի գագաթում և անցնում էր մեր նաւակի տակից և ամբողջ կուրծրով ծծում էի ծովային թարմ օդին, ամբողջապէս հրճւելով այդ դրախտով, ուր միայնութեան մէջ ապրում է իմ կմման:

Դեռ մինչեւ գիշերւայ վրա հասնելն ես կարողացայ համնել Սան-Տերենցօ և խոկոյն գիմեցի գէտի «Սոյօռ» որձարաներ. այսոեղ ես հարց ու, փորձ արեցի ձեր մասին, որն իմ կողմից անուշագրութիւն և նոյն խոկ աւելի յանդրնութիւն էր. բայց ոչինչ նոր բան չիմացայ: Յետոյ սենիակ վարձեցի ձեր տան գէմ ու գէմն և շուտով ես ինձ ամենաերջանիկ մարդն զգացի. բայց երջանկութիւնն ինձ չհարբեցրեց, որովհետեւ ես գիտէի թէ: ինչ բանի պէտքէ սպասեմ: Երեկոյիան տեսայ պատուհանում ձեր աստւածային գունատ դէմքը: Ես ընդամենը մի բանի բայլ հեռու էի ձեղանից. բայց կամքի սաստիկ

ոյժով լսեզրեցի իմ հոգուց թռչող աղաղակը—
էմմա, էմմա» և հեռանալով պատուհանից
պառկեցի անկողնի վրայ, որպէսզի թոյլ շր-
տամ, որ այդ ուրախալի աղաղակը գուրս թրո-
շի, որ մտքով սկանամ, խափանեմ գէթ առ
ժամանակ այն զգացմունքը, որն իւր յոյժով
սպառնում էր ինձ մահացնել:

Իմ սէրն այրում էր կուրծքո և բարձր բա-
ցականչում—«քո էմման այստեղ է, այստեղ ըս-
տիմացը, նա կարող է քո ձայնը լսել, նա
այստեղ է և քոն է, որովհետի ոչ որ նորան
չի կարող սիրել այնպէս սաստիկ, ինչպէս
Վիլեամը, ոչ ոք չի կարող նորան աւելի եր-
ջանկութիւն չնորհել»: Ոչ սպական բարձր խօ-
սում էր և իմ հպարտութիւնը, «Դու կարծում
էիր թէ քո էմման եւրոպայումն է, իսկ
սիրու քեզ բերեց ուղիղ նրա մօտ, այն աղաւ-
նու նման, որը կապւած աշքերով տարւելով
հեռու երկրներ, վերադառնում է նորից իւր
բունը՝ ինչպէս հմուտ որսորդի նետը, որն
ուղիղ գիտչում է նպատակին, ինչպէս բեգինը՝
բնազգմամբ և սուր հոտառութեամբ գուշակում
է հեռու օազիսում ջուր լինելն, այդպէս էլ
գու, Վիլեամ գտար քո էմմային և գուցէ էմ-

ման էլ այդպէս կպանէր իւր Վիլեամին»:
Միթէ, էմմա, սրանից յետոյ էլ չես հա-
ւատում, որ Աստած քեզ ինձ համար է ստեղ-
ծել: Միթէ չես հաւատում, որ երկուսս մի
ծառի ճիւղեր ենր, որոնց պէտք է միացնէր քո
սէրը ողորմածութիւնից գրգւած, նրա համար,
որ մենք կերակւէինք միևնույն հիւթով, ծծէինք
նոյն օդն և յաւիտեան միասին ապրէինք, մի-
մեանց գրկում նոյն կեանքով:

Սակայն դու կարող ես առարկել թէ սի-
րում ես ուրիշին. բայց եթէ այդ ճշմարիտ է,
ապա ասա ինձ անյապաղ, ասա անմիջապէս,
որպէսզի ես կարողանամ մեռնել վշտից քո
տան առաջ, այն սպատի տակ որն ես փորր ինչ
տաաջ համբուրեցի:

Էմման Վիլեամին

Սան-Ֆերենցո, ապրիլ 20-ին 18...թ.

Վիլեամ, իմ թանկապին Վիլեամ, ինչու
եկար այստեղ: Ինչու այդպէս սաստիկ սիրում
ես ինձ: Եսն, ես քեզ բոլորը կասեմ, միայն ինձ
միջոց տուր, տուր մի բանի ժամ, որպէսզի ես

կաբողանամ. կազգուրւել և քեզ ամեն բան
ճշմարիտն ասել. բայց երգւիր, որ դու չես գալ
մօտո, մինչ շստանաս ինձանից միւս նամակու:
Եթէ տեսնեմ քեզ, եղբայր ջան, ապա անկա-
րող կլինեմ պատմել քեզ բոլորը:

Վիլեամ համբերիր. չ՛ որ դու այժմ ինձ
մօտ ես, բո քոյրն ասում է քեզ, որ ոչ որի
չէ սիրել և այժմ էլ չի սիրում... Սպասիր մի
փոքր ես... Այո, խոստանում եմ քեզ, իմ Վի-
լեամ, այսօր և եթ գրել բոլորը: Մի բանի
բոլէ հանգիստ տուր բո էմմային, եթէ, յի-
րաւի, գու նրան սիրում ես, խնայիր նրան,
նա թոյլ է և գժբաղդ. նա հազիւ ոտքի ելաւ
երկարատե հիւանդութիւնից: Մի խանգարիք
ուրեմն նորա հանգստութիւնը, թնդ, որ նա
կազդուրւի և ապա պատմէ քեզ իւր Լոնդոնից
հեռանալու պատճառը:

Յգութիւն, բնիկեր, իմ թանկազին բա-
րեկամ:

Էմման Վիլեամին:

Սան-Տերենցո տողբիւ 20-ին 18... թ:

Վիլեամ իմ սիրելի Վիլեամ, միթէ այս-
քան ամիսների ընդհանուր տանջանիքներից և
վշտից յետոյ ես պէտք է պատասխաննմ այն
հարցին, որի համար սիտս բարախում է:
Արգեօք իմ պատասխանը քեզ հարկաւոր է մի-
այն նորա համար, որ իմանա՞ թէ նում է սի-
րում բո խեզ էմման: Միթէ դու այդ ինձա-
նից լաւ չգիտես: Բայց էմման երբէք չէ կա-
րող պատկանել ոչ քեզ ոչ էլ մի ուրիշին ամ-
բողջ աշխարհում: Նա սուրբ երգումով կաշկանդ-
ւած է՝ ապրել և մեռնել միայնակ. իմ արիւնը
նզումւած է և բաղդը սահմանել է իմ կետերին
հանգչել միայնութեան մէջ: Թէ քո թէ իմ սէ-
րբ և թէ նային իսկ բոլոր մարդկանց ջան-
քերի անկարող են փոխել այդ զարհութելի գո-
տտավճիւր, որի առաջ բո էմման խոնհարեց իւր
գլուխը դեռ ես մի բանի տարի առաջ, նախ
քանի քեզ հատ ծանօթանալը:

Ես երգեցի հօրս՝ երբէք մարդու չպնայ.

ես երգւեցի այն ժամանակ, երբ դեռ ևս չպիտէի լին է սէրն և սիրում էի միմիայն հօրս։ Ես երգւեցի, որ երբէք ծնկներիս վերայ չեմ տանի երեխայ, որը ընքոյշ հայեացը ձգելով վերաս՝ ինձ մայր անւանէր, չնայելով, որ այն ժամանակ ես ինքո էլ երեխայ էի։ Այժմ ես զիտեմ ինչ է սէրը գիտեմ, որ սէրը կհանրից աւելի գորեղ է։ այժմ ես ըմբռնում եմ, թէ ինչ է նշանակում մայր լինել։ բայց ես երբէք չեմ լինի ոչ մայր-ամուսին, ոչ մայր և երբէք ստնակոխ չեմ անի իմ երգումը։ Ո՞վ իմ Վիլեամ, ո՞ր շար բաղզը թեղ քցեց իմ միայնակ կհանրի շաւիզը, ինչնւ գու սիրեցիր ինձ, ինչնւ սիրում ես ինձ այգալու բուռն։ Ես միայնակ կը կրէի իմ տանջանքնեսի ամրող լուծը, ես միայնակ կկորչէի իմ միայնութեան անսահման դատարկութեան մէջ, յիշելով միայն իմ հօրս՝ այն համազմունքով, որ ես իմ պարտը կատարեցի, հաւատարիմ մնացի նրա աճիւնին և տւած խօսքիս սրբութեանը։

Ինչնւ զրաւեցի քիզ գէսփի իմ բաղզի անողոք և անփոփոխ յորձանքը։
Լոիր, Վիլեամ, գու պէտքէ իմանաս, որ չկայ աշխարհում մի մարդ, որի դարտը կա-

րոզանար հաւասարւել իմ դարտին։ Զգիտեմ, արգեօր ես լացով աշխարհ եկայ, ինչպէս այլ երեխաներ, բայց յիշում եմ, որ ամբողջ մանկութիւնս անցըրել եմ վշտի մէջ, անընդհատ տանջաների մէջ մեծացայ և արտասուրն աշքերիս զիմաւրեցի իմ կուսական արշալոյսին։ Ես ապրում էի յաւիտենական վշտի մէջ, որը շարունակ փոխում էր բայց երբէք չըր անհետանում և ինձ չեր թողնում։

Մանկութեանս օրերին ես խաղում էի միծ քոյրերիս հետ և շափազանց սիրում էի Զօն եղբօրս, որի այն ժամանակ տաներկու տարեկան էր, բայց երբ մենք միմեանց հետ այնքան մտերմացանք, որ այլ ես անկարող էինք բաժանւել, նա հիւանդացաւ և մի քանի ամսից յետոյ մեռաւ։ Յիշում հմ նայնպէս ըրոջս Զէնին։ Նա կատարեալ հրեշտակ էր, ամբողջապէս սպիտակ, աշքերը լի արտասուրով, որոնք երբէք չէին ցամաքում։ Նա ես մեռաւ, նա երկար ժամանակ հիւանդ էր և հետզհետէ, հալում էր, ինչպէս սուրբ պատկերի առաջ վառող մոմը։ Դեռ այժմ էլ, կարծես մշուշի միջից մնացել է իմ մէջ յիշաղութիւն այն բանի մասին, որ ես միանգամ նորան հարցը,

ինչից է, որ նա օր աւտր գունատւում է և
նիհարանում, որին Ձինը պատասխանեց. «Եր-
րանից է, որ ես մեռնում եմ»: Արցոնքները
ցայտեցին նորա աշերից և նա փախաւ իւր
սենեակը:

Մեր տանը երբէք ծիծաղ չէր նշմարւում:
Եթէ փոքր եղբայրներս սկսում էին վազվզել
և աղմուկ բարձրացնել, անմիջապէս յայտնւում
էր հայրս մի այնպիսի մռայլ գէմբով, որ նոյն
իսկ հերուն էլ կվախենար երանից և մենք մի
ակնթարթում լուռմ էինք. մեր տանից հի-
ւանդն անպակաս էր և մենք շէինք համար-
ձակւում վրգովել նրան: Բժիշկը մեր տան մշտա-
կան հիւրն էր, իսկ գեղերը սեղանից անպա-
կաս էին: Ճաշն անցնում էր շատ հանդարա.
մեզ սովորացրել էին հաց ուտել այնպիսի
դպուշտեամբ, որ գանակի կամ պատա-
ռարազի ամենափոքր ձայն անդամ շէր լուռում:
Պարզ յիշում եմ, որ մենք սպոյ շորերով էինք
ամբողջ տարիներ: Մենք բոլորս տասներկու
հազի էինք և, ինչպէս տեսնում ես, միայն ես
եմ մնացել: Ես վերջինն եմ: Մայրս մեռաւ
ինձ ծնելուս և այդ պատճառով շեմ յիշում
նրան: Մօրաքոյրս՝ Աննան մեծացրեց ինձ և

ես նորան շատ սիրում եմ: Ասում են, որ նա
շատ նման է թշւառ մայրիկիս:

Հայրս նոյնպէս միշտ հիւանդ էր, նա շա-
րանակ հազում էր և, յիշում եմ, մի քանի տա-
րի ձմեռը նրա հետ անց էինք կացնում կամ
նիցցայում և կամ Պիզայում: Մի անգամ նոյն
իսկ մենք բոլորս զնացինք Ալժիր և մի քանի
ամիս շոգենաւի վրայ անցկացրինք այնտեղ:
Ես կարող եմ մատներով թւել այն բոլոր խոս-
քերը, որ հայրս ասում էր ինձ այդ ամբողջ ժա-
մանակամիջոցում. բայց գորա փոխարէն նա
յաճախ վերցնում էր ինձ իւր ծնկների վրայ
անիկերջ համբուրում էր և շոյում զլուխու: Նա
էր մազերս սաներում և հագնենում ինձ: Ես
նրան սիրում էի և, մինոյն ժամանակ, վախե-
նում նրանից, ես նրա մօտ մի տեսակ երկիւղ
և յարգանք էի զգում. նոյնն ես զգում, երբ
տառնեմին ազօթում ես Աստծոն մի որ և է
հոյակապ և գատարկ տաճարում: Հայրս այն-
քան գժրազգ էր, նրա գէմբի վրայ կային ան-
վերջ տանջաների այնպիսի հետքեմ, որ իւ-
րաքանչիւր նրան հանդիպողի մէջ գարթնում էր
կարեկցութեան զգացմանը և իւրաքանչիւր
մարդ գէպի նա վերտարերում էր սիրով և յար-

գանքով։ Երբ ես տասնհինգից տարեկան դարձայ, բոլոր որդիներից կենդանի միայն ես իւրաքանչիւր տարի նոյն հիւանդութիւնից միռնելու վտանգ էր սպանում։

Յիշում եմ, որքան զգուշութեամբ ստիպւած էի զրկել նրան, որպէսզի շվնասեմ ձախձեռը, որովհետեւ նրա վրայ բժիշկների արած վերահատութիւնից վերը էր յառաջացել։ Մեր տան ծառաները կարելցարար էին վերաբերում դէպ ինձ և սովորաբար խօրին ցաւակցութեամբ ասում էին. «Խղճուկ էմման երկար կհամբերէ, նա չի կամնեսւ մեռնել, բայց ով զիտէ ինչ կպատահի նորան»։ Մօրաբրոջս նամիշտը, որը մի բարի ազգիկ էր, մի անգամ ինձ ամբողջ օրը լացացրեց։ Հայրս արգելել էր ինձ երեկոյեան պարտիզում զրօնել, որովհետեւ, նրա կարծիքով, երեկոյեան օդն ինձ վնասակար էր։ Բայց այնպէս պատահեց, որ լուսինը՝ զեղեցիկ կերպով նայելով եղենիների միջից և իւր մեզ լուսով լուսաւորելով գետակը, ինձ զրաւեց. ես խնդրեցի Մարիայն տանել ինձ այգի։ Ես զիտէի, որ զորանով խաղում եմ հօրս հրամանը, այդ պատճառով էլ ցանկանում

էի Մարիային և իմ յանցանքին մասնակից անել։ Նա առաջ հրաժարւում էր, բայց վերջու փաթաթեց ինձ տար շալի մէջ և ասաց. «Գրնանքը էմմա, ճաշակիր կեանքրի բազգրութիւնը, որ դեռ ես բեղ սպանում է, քո եղբայրներն են քոյրերն այդ կանոններով ընթացան, բայց և այնպէս բոլորն էլ մեռն, գնանքը ուրեմն պարտէց»։ Պատասխանի փոխարէն ես սկսեցի արտառել և ոչ մի բանի համար չէի ուզում գուըս գալ լուսնին նայելու, որը ծածուկ նայում էր եղենիների միջից։ Հեկեկալով ասացի Մարիային, որ շեմ ուզում հօրս հրամանը կտրեկ, շեմ ուզում մեռնել։ Եւ ամբողջ զիշերն ու հետեհալ օրն ես անմիտթար արտասում էի։

Այսպէս սիրելի Վիլեամ, սահեց ըստ էմմայի մասկաւթիւնը։ Երբ ես չափահաս ալզիկ եղալ, երբ ոտք դրի այն հասակն, ուր ուրիշներին զբախտ է բացւում պօէզիայով և յաւսով լի, ես արգէն վարժւեցի արտասուրով ապրելուն։ Ես տեսայ մի ամբողջ ընտանիրի սարսափելի գժբազգութիւնն, անարժան գժբազգութիւնն, և յաճախ ես ինձ հարցնում էի, ինչու Սոտւած այսպէս անարզար է գէպի մեզ, ինչու միայն մենք ենք զատապարտուած գերեզմանատանն

ապրելու, ուր յաւիտեան սեին է տալիս դամբանել՝ պատրաստ մեղնից մէկն ու մէկին կլանելու։ Մօրրոյը՝ Աննան բարի կին է, զու նորան ճանաչում ես, սիրելի Վիլեամ։ Նա իւր կեանքի կէսն անցկացրեց հիւանդ մօրս և տասն-իմէկ եղբայրներիս ու բոյրերիս մահճակալի մօտ. բայց նա երբէք չէր մխիթարում ինձ երկար օրօրներով։ Նա երբէք չէր լալիս, նորա աշքերը միշտ թաց և կարմիր էին, կարծես երկար լացից հանգել և թուլացել էին։ Իսկ երբ հարցնում էի թէ արգեօր ինչ մի սարսա- փելի գաղտնիք է ծանրացած մեր տան վրայ նա կտրուկ պատասխանում էր և խոկոյն սկը- ռում էր հոգս տանել կամ հագուստիս և կամ իմ խոնաւ գուլպաների համար։ Երբ ես սովո- րականից սաստիկ սկսում էի հաղալ, բոլորը վախենում էին, խոկոյն ինձ սլառկեցնում էին անկողնում և անմիջապէս կանչում բժշկին։ Յետոյ երբ ես մհծացալ, հայրս փոխեց բժշկին և հրաւիրեց գոկտոր Թովմասին, որը շուտով նրա ամենամերիմ բարեկամը դարձաւ։ Դա մի- ակ մարդն էր, որին տեսնում էի ծիծաղելիս, միակը, որը երբեմն լոյս և սրախութիւն էր բերում մեր տան յաւիտեան մռայլ կեանքի

մէջ։ Միայն նորան եմ պարտական ջահիլու- թեանս ժամանակ վայելած հազւագիւտ ուրախ րոպէների համար։ Երբ հայրս կորցրեց իւր բոլոր սրդիներին և մնացի միայն ես, նա խնդրեց գոկտոր Թովմասին ամեն օր բննել ինձ, նոյն իսկ եթէ ինձ լաւ էլ զգայի։ Բայց այս անզնահատկի բժշկին երբէք չէր ճանձրացնում ինձ և սովորաբար իւր խօսակցութիւնը վեցա- ցնում էր միենոյն խօսքերով։ «Էմման շատ ընթոյշ է, բայց առողջ է, ոչ մի բանից հար- կաւոր չէ վախենալ»։

Մի անգամ, աշխանը, հայրս վատացաւ և գր Թովմասը խորհուրդ տուց անյապազ տանել նրան Մենատոն։ Մենք գնացինք։ Բայց խեղճ հայրս այնքան թոյլ էր, որ ստիպւած էինք տեղ տեղ կանգ տռնել և մենք Լոնգոնից Մի- ջերկրական ծովն անցանք ամբողջ տասնհշորս օրւայ ընթացրում։ Մենատոնում նա ամբողջ ձմեռը մահճում անցկացրեց. իսկ ես կատա- րում էի իմ սովորական զբանանը գաշտերու և բլուրներում նաժիշտի ուղիկցութեամբ։ Հայրս բժշկիներին չէր հաւատում, որ իւր հիւ- անդութիւնը տարափոխիկ չէ և երբ՛ք չէր թողնում ինձ իւր սենեակում երկար մնալու.

պղջունելով և հրաժեշտ տալով՝ նա միշտ համբաւում էր ճակատս, բայց ոչ շրջունքներս:

Փետրարի վերջերը կարծես նա փոքր ինչ լաւացաւ: Բարի Թովմանը Լոնդոնից եկաւ և ոկտեգ բժշկել նորան մի ինչ որ նոր եղանակով, որի շնորհիւ հայրս ուղղւեցաւ մի՛ք քանի օրւայ մէջ. նա վեր էր կենում մահճակալից և, յենելով փայտի վրայ, մի բանի ժամ սլարդիզումն էր անցկացնում: Մօրաքոյրս՝ Աննան և ես շափազանց ուրախ էինք նորա արտաքին առաջութեամբ, բայց երբ փորձում էինք փոքր ինչ զուարձացնել մեր հիւանդին, նա զուխը շարժում էր և նայում մեզ յուսահատութիւնով լի արտայտութեամբ:

Մի անգամ նա վերկացաւ շատ վաղ և հրամայեց մեզ պատրաստել Լոնդոն յետ զառնալու համար: Մօրաքոյրս՝ Աննան և ես, վախեցած այդպիսի անակրնկալ վճռից, գնացինք համոզելու նրան յետ կանգնել: Դ-ր Թովմանը կարգադրել էր մնալ Մենտոնում այնքան, մինչ որ ինքը կվճռէր գնալ: Հայրս առաջին անգամ հրաժարեց իւր բժշկին հպատակւել: Մօրաքոյրս աղազակում և սպանում էր. իս, չիւանդ սէր.

Ճնկաշոր համբուրում էի նրան և երգեցնում էի գէպ ինձ ունեցած սիրովը, յետաձգել այս յանդուգին ճանապարհորդութիւնը, մինչ եղանակի աաքանալը. բայց մեր բոլոր աղաշանքներն իզգւը անցան. նա այնքան յուգւած էր, որ ցատկեց և գոչեց. «Ուզում եմ Ընդլիա զնալ, իմ տանն եմ ուղում մեռնել»:

Ես գրանից առաջ երբէք չէի լսել նրանից նոյնանման խօսքեր և այդ պատճառով էլ զնացի մեր շորերը կարգի գնելու: Երկար և անմիտ թար լալիս էի, որովհետեւ այդ խօսքերի մէջ, ինձ թւում էր, ծածկւած էր մահւան զատագիռ, որը կարգում էր դժբաղդ հայրս իւր գլխին: Ութ օրւայ մէջ հասանը Լոնդոն: Հայրս տեղ հասաւ խղճակի զրութեան մէջ. դ-ր Թովմասը նորան տեսնելով շարժեց գլուխն և տասց. «Նա մահ էր որսնում»: Տասնօրեայ ծանր հիւանդութիւնից յետոյ հայրս, մաշւած տեսնից, ինձ իւր մօտ կանչեց: Արգէն ուշ էր և ես պատրաստում էի ընելու: Լամպան աղօտ յուսաւորում էր նորա սենեակը. նա միայնակ էր և նստած էր մահճակալի վերայ: Երբ մօտեցայ նորան, նա առաւ ձեռս և եռ զղացի, որ նրա ձեռքը շափազանց տար. Էր և բրտինքով ծած-

կւած։ Առանց ձեռքս բաց թողնելու, նա հրամայեց ինձ նստել իւր կովըին՝ մահճակալի վնարայ և ապա ասաց. «Եմմա, զիտիս արդեօք թէ ինչից մեռան եղայրներդ և քոյրերդ, զիտիս արդեօք թէ ինչն այսրան տարի մեր տունը ներկայացնում էր գերեզմանատուն. լսիր ուրեմն, ես եմ նոցա գահին, ես ինքս ոպանեցի իմ բոլոր զաւակներին»։ Եւ հայրս սրբեց բրտինը զալիանար դեմքից և ձեռքով շփեց մազերը։ Այդ ճշմարիտ է, իմ էմմա, ես ինքս սպանեցի նոցա և քեզ ես դատապարտեցի այդպիսի կեանըի։

— Հայրիկ, անկին հայրիկ, դուք զառանցանքի մէջ էր, ասացի ես նորան։

«Ո՛չ, ես շեմ զառանցում։ Ես հիւանդ էի, ես իմ արեան մէջ կրօւմ էի զարհուրելի հիւանդութեան սաղմք, որից և այժմ կորչում եմ, և ես այդ աւանդեցի որդոցս և սպանեցի նրանց։ Ես հայր լինելու իրաւունք չունէի, սակայն ցանկանում էի ընտանիք ունենալ. ես պարտաւոր էի բնութեան դատակնիրը միայն ինքս կրել, սակայն ցանկանում էի որդիներ ունենալ և այդ պատճառով էլ ես ինքս թունաւորեցի

նրանց իս արիւնով, սպանեցի նոցա.. Հառկանում ես ինձ...»

Այս խօսքերից յետոյ նա սկսեց երկար և խիստ հազար և ստիպւած էր փորր ինչ հանգըստանալ և ջուր խմել, որպէսզի ոյժերը հաւաքէր և շարունակէր։

«Քո արեան մէջ ես, սիրելի էմմա, թոյն կայ։ Միայն բժշկականութեան ամենամեծ ջանքերն և նախախնամութեան գիտութիւնը պահպանեցին քեզ, որպէսզի գու փակես րո հօր աշքերը. նա առանց քեզ միայնակ պիտի մեռնէր, խղճի խայթով, ապաշխարութեան ծանր լծով և սարսափելի տանջանքով, որը պիտի վերջանայ միայն այնտեղ՝ զագագում։ Բայց գու, աղջիկս, երբէր կին և մայր չպէտք է լինիս։ Դու պէտք է երդւիս ինձ այդ բանի համար այս ձեռագրի վրայ, որն ես նշանակում եմ քեզ ինչպէս իմ կտակն և, որը կարող ես կարդալ միայն մահից յետոյ։ Դու կապրես մօրաքրոջդ՝ Աննայի հետ. արա ինչ կցանկանաս, նւիրիք կեանքը զեղարւեստերի, ճանապարհորդութիւնների, բարի գործերի, կրօնի, ամեն բան թոյլ եմ տալիս, բայց միայն երբէր չամունանաս, երբէր։ Կպրնդ ես այդ բանի համար երդ-

ւել, էմմա: Քո երդումը լսելով միայն կարող
եմ հանգիստ մեռնել:

Ես լալիս էի զսպելով հեկեկանքս և արտա-
սուբս կուլ տալով, որպէսզի հօրս շվշտացնեմ.
նորա բոլոր ասածից ես ոչինչ չհասկացայ: Մի-
այն մի բան ինձ համար պարզ էր, որ իմ մի
խօսքը կարող էր սփոփել մեռնող հօրս. բայց
արտասուբն և հեկեկոցն արդելում էին ինձ
խօսել:

«Թէհ, երդւիր, էմմա, երդւիր, ես մեռնում
եմ. չեմ կարող համբերել:

Հայրս սաստիկ հազար:

— Երդւում եմ հայրիկ, երդւում եմ:


«Երդւիր քո հօր ու մօր անունով»,

— Հայրիկ, երդւում եմ հօրս ու մօրս անու-
նով, ես կապրեմ միայնութեան մէջ և կմեռնեմ
միայնակ:

Անգին Վիլեամ, այս խօսքերիս միջոցին
հօրս աշքերում փայլեց մի տեսակ ոչ երկրային
ուրախութիւն: Նա փաթաթւեց վզովս և համ-
բուրեց ինձ, իսկ ես լալիս էի և զգում էի, ինչպէս
նրա ձեռները հետզհետէ սառչում էին: Զեմ
յիշում ինչ եղաւ յետոյ. զիտեմ միայն, որ մի
քանի բոպէ անցած հայրս մեռաւ:

Այժմ հասկանեմ ես, Վիլեամ, ինչու էմ-
ման չի կարող քմնը լինել: Այժմ հասկանեմ
ես իմ բոլոր տանջանքը: Արգեօր կվստահանա
ինձ նկովել: Կարգա, Վիլեամ, ինչ է գրւած
այս թերթերի վրայ — իմ հօր կատկը. կարգա
և կտեսնես թէ կայ արգեօր ինձանից տւելի
դժբաղզն այս աշխարհում:

Մնաս բարեաւ, Վիլեամ, այցելիր ինձ,
բայց ոչ վաղ, մինչեւ որ գու կհամոզւիս, որ
կարող ես լինել միմիայն իմ բարեկամն և եղ-
բայրը:



ԽՄ ԿՏԱԿՆ ԷՄՄՍ ԴՍՏԵՐԸ.

Ոչ որ իրաւունք չունի թողնել յետազայ
սերունդ, եթէ խելը, գիտութիւնն և փորձը
համոզում են, որ այդ սերունդի կեանքը կարճ,
վշտագին և դժբաղզ պիտի լինի:

Յոյսն և հաւատը հանգերձեալ կեանքի հա-
մար սղչամիտ են և սուբր, երբ նոքա ծառա-
յում են այն բանի համար, որպէսզի մարդուն
բարձրացնեն վսեմ զգացմունքների մթնոլորդը,

որոնք աղեւացնում են նրա գոյութիւնը, իսկ
նա՝ ով չի լնդունում մարդու մէջ կամրի,
մտրի և գործի ազատութիւն, նա վիրաւորում
է Աստծուն, արհամարհում է բանականութիւնը:

Ոչ մի ցանկութիւն, ոչ մի սիրոյ կայծ չի
կարող շեղել ճշմարիտ ճանապարհոց այն մար-
դուն, որը պարտաւոր է և ուզում է կատարել
իւր պարտքը:

Պարտքը բարձր է մարդուց, պարտքից
բարձր չկայ ոչինչ բացի միակ Աստծուց:

Կենդանի արարածին շարիք չպատճառել
այս իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն
է ինչ հասակի, ինչ դրութեան մէջ էլ լինի
նա: Եյդ ընդունում են բոլոր ժամանակների
ազգերի օրէնքներն և կրօնները:

Ծնել տկար որդիներ, նշանակում է գոր-
ծել մեծ շարիք, ամենամեծը, որպիսին միայն
կարող է գոյութիւն ունենալ և նմանապէս այդ
շարիքը պատճառել այն էակներին, որոնց մենք
ամենից շատ ենք սիրում, «որոց մարմնիք ի
մարմնոյ մերմէ և ոսկերը յասկերաց մերմէ են»:

Ծնել հիւանդոտ որդիներ իւր անձնական
մեղքի պատճառով աւելի վատ է, քան թէ
սպանել մարդուն սաստիկ բարկութեան ժամա-

նակ. այդ նշանակում է նենգութեամբ խռնա-
ւորել մեզ համար ամենաթանկագին ոտեղձ-
ւածների կեանքը:

Հիւանդոտ լինել և արտապրել որդիներ,
դա ապացոյց է բուռն եսակտնութեան, դա
նշանակում է ինըն իրան ենթարկել խղճի խալ-
թին ամբողջ կեանքը ընթացքում:

Եյն մարդու պատճառած շարիքը, որը
ծնում է հիւանդոտ որդիներ, չի վերջանում
առաջին զոհով. յաճախ հիւանդութիւնն և
թոյնն անցնում են երկրորդ, երրորդ և յետա-
գայ սերունդներին, նւազեցնում են ծնունդներն
և յառաջացնում են սարսափելի տանջանքներ
ու անէծքներ. զոհերը նգույսում են, ինչպէս իւր-
եանց սեփական կեանքը, նոխովէս և նրանն,
ով իրանց աշխարհ բերեց:

Ով հիւանդոտ է և, չնայած գորան, ցան-
կանում է որդիներ ունենալ, նա վատ հայր է,
որովհետեւ իւր որդիներին թոյն է տալիս խմե-
լու, վատ բազարացի է, որովհետեւ նա ազգին
վատ բազարացի է տալիս, վատ մարդ է որով-
հետեւ ոչնշացնում է մարդկային ընտանիքի ամե-
նալաւ կարողութիւնն-առազօւթիւնն և ոյժը:

Դիմել տմարդի և խիստ օրէնքների առաջ-
սովութեան՝ միհետոյնն է, թէ ընդմիշտ չցանկա-
նալ աւելի բարձր և մարուք լինել սովորական
մարդոց, որն ուտում, խմում ու բնում է:

2ի կարելի, որօգւելով մահմետական ֆա-
տալիզմով, իւր բազգը խաղախմղմի վրայ զնել,
այդ նշանակում է տարւել այն բոլորն, ինչ
որ ունի մարդու:

Բազգը—դա զօրեղի բաժինն է, իսկ յաղ-
թութիւնը պատկանում է նրան, ով գիտակցու-
թեամբ է գործում: 2ի կարելի մի որեւէ
փաստ առաջ բերել, որի հիման վրայ կարելի
լինէր թոյլատրել լուսնոաներին, զժերին և թո-
րախտներին ամուսնութեան միջոցով բնիկաւո-
րութիւնը, թորախտն և զժութիւնը փոխադրել
յետապայ սեբունիներին:

Սէրն երկրային կեանքի ամենասուրբ ուրա-
խութիւնն է... արգեօր կարելի է թոյլ տալ
նրանից պատրաստել բաժակ, որի մէջ խառ-
նում է թոյն:

Սէրը ճարգու սմինալու օրնութիւնն է,
բայց արգեօր ցանկանում էր, որ նա անէծը
սիրմանի:

Սէրը—կերոն է, որ բորբոքում է կեանքի

լոյսը. ուրեմն ինչու Եք ցանկանում պար գա-
գաղի մօտ վառող սկզ լապտեր դարձնել նո-
րան:

Ի՞նչն է ստիպում ձեզ, կենդանի նեխւած-
ներ և թոյնով ծնւածներ, ծնել որդիներ, որ-
պէսզի տեսնէր նոյցա վերեզմանում, անմեղ ման-
կական շրթունքների վերայ ժպիտը փայլելիս:
2էր կարգում արգեօր ձեր որդիների ծերացած
և կնճռու գէմրերի վրայ անէծը այն ծնողնե-
րին, որոնր նոյցա կեանը տւին:

Ո՛չ հարստութիւնը, ոչ կրթութիւնը, ոչ
զիտութիւնը, ոչ կրօնը, ոչինչ չէ կարսոց փո-
խարինել անժամանակ կորցրած առողջութեանը:

Հազցրէր հիւանդին մետաքս, զարդարէր
նրան թանկագին բարերով, նստեցրէր ոսկեզօծ
կառքի մէջ, տարէր նրան աղմկալի խնչոյր և
պահանջեցէր նրանից ծիծաղել:

Հիւանդի, թոյլի և փտած օրգանիզմի
կեանքը պահանջում է շարունակ ուշադրու-
թիւն և բժշկութիւն, դա մի եղեսպակ է, որը
չի կարելի բազցրացնել ոչ մի մեղրով, գա ան-
ժիրիթար վիշտ է, յաւիտենական արսոր է,
որից միայն մահը կարող է փրկել:

Էմմա, իմ անդին էմմա, զու միշտ սիրում

էիր ինձ, որու միշտ յարգում էիր ըռ հօրլը Լսիր
ինձ: Այնքան որդիներս կորցնելով և շատ ան-
գամ քեզ գերեզմանի գոանը տեսնելով, ես
նկառմ էի նղոփել ինքս ինձ, իմ մեզքն և տղի-
տութիւնը, ես սկսեցի նղոփել բժիշկների տղի-
տութիւնը, որոնք չեն կարող փշացնել այն
թոյնը, որից ես պէտք է մեռնէի, շտարածւե-
լու իմ անբազգ ընտանիքի մէջ:

Եթէ ես ծնւեցի հիւանդ, ապա պարտաւոր
էի միայնակ կրել այդ հիւանդութիւնն և այն
մի բանի տարիները, որոնք պարզել էր ինձ
բնութիւնը, նւիրել իմ բարեկամների և հայրե-
նիքի համար:

Բայց ես այնտեղ հասայ, որ սկսեցի նղո-
փել ծնածս վայրկեանը, իմ վիշտը հարիւր ան-
գամ մեծանում էր զաւակներիս տանջանքներից,
իսկ տունս գառնում էր գերեզմանատուն:

Ես յալիս էի և գիշերներն աշքերս չեի
փակում. ոչ մեռնել էի կարողանում և ոչ էլ
ների ինձ իմ յանցանը համար:

Սակայն իմ տղիտութիւնը չէ կարող ծա-
ռայել իբրև արգարացումն ուրիշների համար:
Ներկայ գիտութիւնը բոլորովին սահմանեց և
որոշ հաստատում է թէ այն մարգը, որը կա-

մենում է ընտանիք հիմնել, ովէտք է առողջ
լինի, նա որոշեց, որ թոքախտներն եւ լուսնոտ-
ները փոխագրում են այդ հիւանդութիւնը յի-
տագայ սերունդին և ապացուցեց, որ հիւանդու-
թիւն յաջորդական անցումը բնութեան անո-
դոք անցումներից մէկն է:

Եթէ մի հագւագիւտ և բարեբազգ հանգա-
մաներով, կամ թէ անշափ աշխատանքների
չնորհիւ, հիւանդ ծնողներին յաջողութում է առողջ
որդիք ունենալ, բայց և այնպէս նոցա մէջ կը
զտնի գոնէ մի մանուկ, որին անխպատճելի
է գաման բազգն և զարհուրելի հիւանդութեան
կիրով այդ երեսի վրայ հիւանդ հայրն և
թոքախտատ մայրը կկարգան խրեանց մեզքի
պարզ անէծքը: Էմմա, իմ բարի էմմա, զու
ամրագ կեանքումդ հիւանդ էիր, զու ես իմ
վերջին գուստըն, ես ոչինչ շինայեցի քո առող-
ջութեան և փրկութեան համար և կարծում եմ,
որ զու կապքես. Աստած պորմած է և նա
զուցէ չէ կամենում ինձ իմ բոլոր որդիների
սպանիչը գարձնել:

Բայց քո օրդանիկմը փուխը է և թոյլ,
այն եղեգնի նման, որը միայնակ ցցւել է անտ-
պատում և անկախած կկոտրւի, եթէ մէկը յեն-

ւի վրան։ Երբէք մարդու չղնաս, աղջիկս. առաջին զաւակդ ըեղ վերեպման կիշեցնէ և կամ թէ կունենաս որդիներ, որոնք մահւան զատապարտած կիխնեն իւրեանց կեանքի ամենաընքոյց տարիքում, իւրեանց մանկութեան զարունքն։ Թորախտի թոյնը շափազանց ուժեղ է. նա թափանցեց մեր արեան մէջ և չի անհետանայ նոր սերունդով։

Ես մեռնում եմ. գու վերջին կենդանի շառաւիզն ես մեր ցեղի. ըս մահով այս թոյնը պէտք է կորչի և մեղքը պիտի վերանայ. Երդւիր էմմա, որ գու միայնակ կապրես և միայնակ էլ կմեռնես։ Աստւած տայ որ գու հանդիսանաս աղատիչ հրեշտակ ըս հօրն և նորտ մեղքերին թողութիւն բերիս։

Այս գառնութեամբ լի երգումը ըս հօր կտակն և ժառանգութիւնն է. վերջին խօսքը, որ ինչպէս հայր պարտաւոր եմ տսել բեղ, իմ սիրելի զաւակիս, դա խղճալի գատակնիք է. համբերիր, տանջւիր և ապրիր մինչև վերջը։

Արդէն վերջացաւ ամենազարհորելի պատիժը մեղքիս համար. Նրանից յետոյ, երբ թաղեցի իմ բոլոր որդիներին ես պարտաւոր

էի և վերջինին, որը կենդանի էր մնացել, ասել-համբերիր, կրիր ըս հօր յանցանքը։

Մի նզովիր հօրդ։ Երբ նա ելիտասարդ էր և ձեռքն առաջարկեց մօրդ, այն ժամանակ բժիշկները հաւարակ արհեստաւորներ էին և միայն նշտար ու թունաւոր դեղեր էին ճանաչում։ Նորա չէին հասկանում, որ պարտաւոր են բաջութեան բուրմ լինել և առողջութեան հովանաւորող։ Նորա չգիտէին, որ իրանց վրայ պարապահնութիւն կայ՝ հիւանդին, թորախութին և ընկենաւորին ասել. «Մի համարձակիր սերունդ թողինել բեղանից յետոյ, տւելի լաւ է խրիր սուրդ քո ամենամտերմ բարեկամի սիրտը»։

Հայրդ իրու ժառանգութիւն քեզ թող-նում է մի սոսկակի պարտք, որը գու պէտք է կատարես. ապրիր, բայց երբէք մի սիրիր. եղիր կին բայց ոչ մայր։ Ես մեռնում եմ խաղաղ, որովհետեւ հաւատացած եմ, որ գուստու չի գրգիլ իւր երգումն և կկատարէ այն բարի գործը, որը հայրը չկարողացաւ կատարել։

Զարիր չգործել եթէ նոյն խոկ մեր ան-պուստ կըքերը մեղ դրգեն, եթէ օրէնքները թոյլ տան, նոյն խոկ եթէ հասարակութիւնը չգատապարտէ մեղ այդ շարիրի համար, ահա

այդ է մեծ գործն և հերոսութիւնը, որի նմանը
պատերազմի դաշտում ևս չի արտայալուում:

Եւ քանի որ իւրաքանչիւր անհատ չի զգայ
իւր մէջ կարողութիւն այդ պարտքը կատարե-
լու, մինչ այն ժամանակ մարդկութիւնն իրեք
չի հասնի իւր խվալական կատարելութեանը:

Քո ճանապարհն, իմ էմմա; անդունդի
ափով է ընթանում. բայց և այս ճանապարհի
վրայ, ուր հայրդ ըհղ գրեց, դու կարող ես
հանդիպել հրաշալի ծաղիկների: Դու կատա-
րում ես ամենամեծ առաքելութիւնը, դու պէտք
է հասնես անմերձենալի բարձրութեան, դու
պէտք է լինես ոգի և սրբազն կրակի վես-
տալուհի:

Ով իւր անձը զոհում է պարտի համար,
նա ընակում է մաքուր մթնոլորդի մէջ, ուր
գուցէ չի փայլում արել, բայց երկինքը միշտ
պայծառ է:

Ավ կատարում է իւր պարտականութիւնը,
նա միշտ տեսնում է իւր զիսիր վերել պարզ
երկինքը, նա ապրում է այն աշխարհում, որից
գուցէ բուրում է վիշտ, բայց որն, այնուամե-
նայնիւ, իւրաքանչիւր ուրախութեան կցում է
բարձր արժանաւորութեան փայլ:

Փոքրոգիներն և վատարիները կօրազլուիս
անցնում են պարտի արձանի առաջից, բայց
իւրաքանչիւր որ այդ դէպրում զգում է մի
բարձր, բարերար ազգեցութիւն, այնպիսին, որ
պիսին զգացում է մեծ տաճարի մեռելային
լուսութեան մէջ:

Խոկապէս այն մարդն է, սուրբ, ով իրան
զոհում է իւր պարտի համար և նա իւր փրկա-
րար ազգեցութիւնն է, թողնում իրան հետ
ընդհարւողների վրայ:

Ես հաւատացած եմ, էմմա, որ դու ձգուում
ես այդպէս սուրբ լինել և այդ հաւատը խրա-
խուսում է ինձ մահւան մահճում:

Վիլեամը Էմմային

Լոնդոն. յուլիս 3-ին 18...թ.

Ես նայեցի մեր նամակներին և ինձ յափրշ-
տակեց մի բաղցը զգացմունք. արդէն բաւա-
կանին օրեր են անցել ըստ վերջին նամակից,
որ գրել ես ինձ Սան-Ֆերնանդո դրախտում,
մինչև ներկայ նամակս, որը ես գրում եմ քեզ
ձեր տանից միմիայն մի քանի բայլ հեռաւո-

բութեան վերայ, Հանգոնի գոլշագոյն երկնակամարի տակ:

Դու՛ իմ բանակալն ես, դու ինձ ուժ օր-
ւայ արսոր ուղարկեցիր և քո ստրուկը խոնար-
հութեամբ համբուրելով իւր տիրոջ ձեռքը, նո-
րա հրամանին հնազանդեց: Դու ծիծաղելով
ինձ նկատեցիր, որ ես շատ յաճախ եմ տեսնում
քեզ, որ ես անցնում եմ այն սահմանը, որը
մեղ պէտք է բաժանէը, որ եղբայրը շատ նման
է սիրահարի և ես հնազանդեցի այդ պատժին:
Ես յուսահատութեան շեմ ենթարկւում, էմմա,
ես իրօք ձգտում եմ քո եղբայրը լինել, միմի-
այն եղբայր:

Ճշմարիտ է, այդ ինձ համար հեշտ չէ,
որովհետեւ ես ծնովներիս միակ զաւակն եմ,
բայց այնպիսի մի համբերով և հանդարտ վար-
ժուհու ձեռքի տակ, որպիսին միսս էմման է,
ես մեծ քայլեր եմ անում և վերջը կարող եմ
գեղարւեստի ուսուցիչ լինել, որի միջոցով կա-
րող եմ այն կնոջ եղբայրը լինել, որին աշխար-
հումս ամեն բանից աւելի եմ սիրում:

Ես իրաւունք շունիմ յուսահատւելու կամ
ծածկելու վիշտո դառն հեղութեամբ: Միթէ
չփառդ սէր.

դու չվոյլատրեցիր ինձ յուսալ: Միթէ իմ սի-
րոյ համար չէր, որ դու վճռեցիր Հանգոնի երեք
յայտնի բժիշկների հետ խորհրդակցել՝ տեղե-
կանալու թէ արգեօք կարող ես առողջանալ
և ապա իմս լինել, առանց հօրդ յիշատակը
և ապա իմս լինել, առանց հօրդ յիշատակը
վրդութելու և երգումը վրժելու: Ես իրաւունք
ունեմ արգեօք գանդատւել քեզանից նրա հա-
մար թէ դու, որ ինձանից կամբով աւելի զօ-
րեղ և աւելի բարձր ես, ցոյց ես տալիս ինձ
ըստ հրամայական հայեացրավ պարտի ուղին և
պահպանում ես ինձ: Էմմա, էմմա, քո մօտ
ես ինձ շափաղանց փոքր և չնշին եմ զգում:
Դու կարող ես ինձ գարձնել այն, ինչ որ ցան-
կանում ես: Իմ պարտին է հնազանդւել քեզ,
քանի կենդանի եմ, այն ժամանակից, երբ դու
իրաւունք տւիր ինձ հրամայելու քեզ միանգամ,
և հեկեկալով հօրդ գերեզմանի վրայ երդւե-
ցիր աղատել նորան տանջող նզովրից, որ քո
ամբովզ կեանք կաշկանդում էր:

Երբ միտքս է գալիս, անգին էմմա, այն
սարսափելի կափւը, որ դու մղեցիր Սան-Տերեն-
ցոյում և յետոյ Հանգոնում, ես սկսում եմ
հպարտանալ նրանով, որ սիրում եմ քեզ: Սէրն
և սլարտըն այնպիսի յամառութեամբ կուռած

էին, որ ես անկարող եմ քեզ տսել՝ թէ ո՛ր
վայրի եանին իմ սէրն պւելի զօրեղ էր զէպի
ըեզ. այն ժամանակ, երբ դու արտասւելով
տոացիր ինձ—«Ճշմարիտ չէ», որ հայրս կներէ
մեզ», թէ այն ժամանակ, երբ դու գունատած
և լուրջ դէմքով յանկարծ վեր թռար և աղա-
զակեցիր. «Վիլեամ, մեր սէրը շատ թշուա-
կինէր, եթէ պարտքը չյաղթէր նրան»։ Դու
եկար Լոնգոն խորհուրդ հարցնելու հօրդ ոգուց,
որը բժիշկ Թովմասի բերանով ըեղ պատաս-
խանեց—եթէ երբիցէ թոյլ և թորախտով վա-
րակւած էմման կուժեղանայ և կվազգուրի,
ապա նա առանց ոչ որի վիշտ պատճառելու
և հանգիստ խղճով կարող է իւր ձեռքը Վի-
լեամին առաջարկել։ Քո հայրն—այսպէս ասաց
բժիշկ Թովմասը—կրկնակի ըեղ կօրհնէր, եթէ
զիտենար, որ դու երջանիկ ես և նրա կտակի
մտքին հաւատարիմ ես մնում։

Վայ այն մարդուն, որ պարտականութեան
մասին զալափար չունի, որ չի կարող իւր հա-
մոզունքն և կեանքը հաստատել անդրդւելի
սկզբունքների վերայ։ Անտանելի կինէր
նրա համար ապրել, եթէ նա ստիպւած լինէր
ժամը մի անդամ դիմել իւր խելքին, կշռազ-

ան յաւիտենական երդումներն և ցանկութիւն-
ները, որպէսզի մի բան վճռէ։

Նա կկորցնէր իւր արժանաւորութիւնն և
ստիպւած կիմնէր իւր ամբողջ կեանքն անցնել
ծակ նաւակում, տանջանքների անհաստատ
մակերևոյթի վրայ։ Հարիւր անգամ ինձ տոել
ես այդ և բոլորավին համոզել։ Մարդս պարտա-
ւոր է խոնարհել իւր գլուխը պարարի առաջ.
բայց եթէ մեր թոյլ օրդանիզմը, փոխորկի
ալիքներից ամեն կողմ ձգւած, պատրաստ է
ջախջախուելու այդ անկարծան ժայռից, ապա
կարելի է օգնութիւն խնդրել։ Դեռ ևս ոք որ
չի զատապարտել և վախկոտ չի անւանել նրան,
ով խեղզւելիս օգնութիւն է խնդրում։ Եւ
մենք գոկտոր Թովմասից ազատող նաւակ խրնդ
բեցինք ու ստացանք։ Նա մեզ կերջանկացնէ,
որովհետեւ դ-ր Թովմասը մի բանի ամպեր
ցրւեց մեր հարիզմից, որի վրայ շարունակ
երեսում էին թուխ, մըրկաքեր ամպեր և ցոյց
տւեց մեզ կապուտակ երկնակամարի մի փոր-
քիկ պարզ մասը։ Մեզ երկուսիս, գժքաղիներին
և կեանքը ծովի վրայ նաւարեկեալներիս, բարի
դ-րը ձգեց աղատարար պարանն և մենք բը-
նեցինք նրանից խեղզւողի վայրենի ոյժով, որը

տեսնում է հեռառում զւարիթ ափը, բայց դեռ
և նրան չի հասել:

Էմմա, անգին էմմա, իմ գէպի քեզ ունե-
ցած սէրս մեծ է, ինչպէս աշխարհը. ես նրա
մէջ տեսնում եմ անսահմանութեան ցոլացումը,
բայց չեմ ուզում իմը լինիս, բանի որ դրա
համար ստիպւած պիտի լինիս զոհել պարտա-
կանութիւնդ և գրժել երգումք: Եթէ գա լի-
նէր մի այլ կին և ոչ թէ գու, ապա եռակա-
նութիւնս կյաղթէր ամեն ինչ, բայց ըս առաջ
էմմա, ես խոնարհում եմ գլուխս և սպասում:
Գու ինձ այն աստիճանի բարձր ոլորդի հաս-
ցրիր, որ ես անկարող եմ սէրը պարտից
բաժանել, և եթէ գու ուզենայիր ինձ սիրել և,
մինոյն ժամանեկ, զրկէիր յարգանքից, ապա
ես կատէի, «Էմմա, առանց ըս սիրոյ ես կմեռ-
նիմ, այդ ճշմարիտ է, բայց գու մի դադարի
ինձ յարգելուց»: Երբ ես քեզ որոնում եմ հո-
գուս աշերով և գու ներկայանում ես ինձ մա-
րտը և հրաշալի, ինչպէս աստղալից երկինքն,
ապա, ինձ թւում է, թէ ես պառկած եմ ըս
ոսների տակ և տեսնում եմ քեզ ինձանից
բարձր և կարծես ես համբուրում եմ միայն ըս
ստները, որովհետեւ գու շատ հեռն, հեռն,

երկնային անհուն բարձրութեան մէջ ես...
Եթէ գոյութիւն ունին հրեշտակիներն են եթէ
նորա կարող են սիրել, ապա նորա պարտաւոր
են սիրել այնպէս, ինչպէս ես եմ քեզ սիրում,
իմ էմմա:

Գու կարսգ ես բոլորովին հանգիստ լինել,
էմմա, որ ըս հօր կամրի մարին համաձայն
ես ընթանում, եթէ խորհուրդ հարցնես Անգ-
լիական ամենալաւ բժիշկներին և հէնց այժ-
մեանից վճռես նոցա գատաստանին ենթարկ-
ւելու. իհարկէ, նա չէր կամենում քեզ անբաղ-
դացնել, ոչ, այդ նա կամենում էր, որ գու ուրի-
շի գժբաղդութեան պատճառ չլինիս: Դ-ը Թով-
մասի խօսքերը կհանգստացնէին ամենազգայուն
խիղճը: Նա հօրդ ամենալաւ բարեկամն և ամե-
նամտերիմ մարզն էր. նա զիտէր նորա բոլոր
մաքերը. նա այդ վեհանձն և խիստ տանջւած
հոգու բոլոր զաղանիքները կարգում էր: Նա
յանձն առաւ լուսաւորել քեզ իւր զիտութեան
լուսով, օգնել քեզ իւր երկարամեայ փորձա-
ռութեամբ: Երբ նա հետզ խօսում է, գու ըս
հօր ձայնն ես լուսմ. երբ նա քեզ արգելում
է, գու լինրդ ասում էիր, որ այդ հօրդ հրա-
մայական ձայնն է, որը քեզ համոզում է հետ-

զանդւել, եթէ նա քեզ ասաց, «Էմմա, առողջացիր և յուսամ», ապա գա հօրդ ուզարկած յուսոյ ճառագայթն է և մենք պարտաւոր ենք լսել նրան սաւրը երկիւղածութեամբ, յարդելով և խաղաղ ուրախութեամբ։

Էմմա, միսիթարիթ ինձ արսորումս, մի երկար նամակ գրիր, չնորհիր դատապարտւածիս գոնէ կէս ժամով լոյս և օգ. գթա և միսիթարիթ նրան, որպէսզի նա կարողանայ շմեռնել և լսել իւր դատափճիոր։

Էմման Վիլեամին

Լոնդոն, յուլիսի 5-ին 18...թ.

Երեկ առաւոտ լիր կացայ առոյգ, Քիչ ընեցի և երազումս միայն զեղեր ու բժիշկներ տեսայ, բոլորը լուրջ, երկար կեղծամերով և մռայլ գլուխերով։ Տեսնում էի իբր թէ՛ ևս նստած եմ կամ, աւելի ճիշտ, պառկած եմ մահակալի վրայ իսկ նորա բոլորն իմ շուրջը կանգնած են։ Ես վախեցայ և վերմա-

կի տակ մտայ, բայց նորա անհամբեր քաշեցին վերմակին և բարկացած սկսեցին թխթըլսկացնել խղճուկ կարծրս։ Ես ուզում էի պաշտպանւել այդ հրէներից։ Բայց նորա ձեռքերիցս բռնեցին և ամուր պահում էին մահակալի վրայ։ Ուզում էի ազագակել, հօրս և մօրս օդնութեան կանչել, բայց ձայնս դաւաճանեց ինձ և ես շարժւելու անկարող էի, իսկ այդ միջոցին իմ կարծրս անզթարար բազխում էին մի քանի մուրճիկներ, սրսնցով այդ մռայլ ուրականներն իմ ամբողջ ներքինս ցնցում էին։

Մտածում էի թէ արգէն մահս մօտենում է և, բոլոր ոյժերս հաւաքելով, այնպէս բարձր գոռացի, որ մօտի սենեակում ընած նամիշտը զարթնեց։ Այդ ազագակը զարթեցրեց նոյնպէս ըս էմմային։ սիրտս ուժգին բարախում էր, կարծիս ուզում էր գուրս թռչել կրծքիցս, իսկ ես ըրտինքի մէջ կըրել էիւ։

Երկար ժամանակ զրանից յետոյ ոչ մի կերպ չկարսղացայ ընել, հէնց արտեանունը նելս խփում էին, մէկ էլ իսկայն երեսում էին բժիշկներն և մուրճիկներն, առաջինից աւելի բժիշկների և ես հանգուտացայ միայն այն ժամանակի, երբ վճուցի հէնց վաղը ըս ցանկու-

թիւնը կատարել և Լոնգոնի ամենայայտնի
բժիշկներին գիմել:

Ելսպիսի հաստատ վճռով ես վեր կացայ,
հրամայեցի կառը բերել և նաժիշտի հետ
ուղևորեցի դ-ր Բ-ի մօտ: Նա ապրում է
քաղաքի միւս ծայրում. ճանապահն ինձ ան-
վերջ էր թւում, անհամբերութիւնն յառաջա-
ցրեց զայրոյթ. Ես բարկանում էի թէ ձիերի
և թէ իմ վրայ, ափսոսում էի, որ թեղ խօսր
տւի և ուղում էի ինձ համոզել, որ գարշելի և
զարհուրելի երազի ազդեցութեան տակ տւած
խոստաւմն ինձ այնքան էլ չի կաշկանդում և,
որ այդպիսի խոստումի կատարելը չի կարող
ոչ մի բարոյական նշանակութիւն ունենալ:

Նօրո բժիշկը, մտածեցի ես, կարող է վի-
րաւորել զրանից, որ ես բայի իրանից խոր-
հրդակցում եմ և այլ բժիշկների հետ և ես
կարծես տեսայ Նօրո մռայլ պատկերը, որը
բարկացած կրկնում էր այն խօսրերը, որոնք
ես շարունակ լսում էի նրա բերանից. «Փոխե-
ցէր սալասաւորին, փոխեցէր ձեր շորերը, ձիերն
և մինչե իսկ տունը, բայց երբէք բժշկին շփո-
խէր»: Բայց զու, Վիլեամ, կարող ես պարծե-
նալ, քո մասին մի միտրը հեռացրեց ծերունի

բժշկի պատկերն և նոյն իսկ հօրո զայրացած
առւերն և ես մտածում էի միմիայն իմ խո-
տումի մասին: «Ի՞նչ մարդ է նա, որի համար
տւած խօսրը սուրբ չէ: Նա վախկոտ է, նա
զուրկ է նոյն իսկ այն չնշին անվեհերութիւ-
նից, որպիսին ցոյց են տալիս այն յանցաւոր-
ները, որոնք համարձակ պատասխանում են
օրէնքի և գատաւորների առաջ»:

Սորա նմանապէս հօրո խօսրերն են: Արդ՝
զու էլ նրա հետ համաձայն իլինիս և ես համ-
րութում էի երկակայութեամբ երկու սիրելի
ստւերները, որոնք գուցէ ինձ համար հաւասա-
րապէս թանկագին են:

Դու միշտ գուշակում ես իմ մտքերը նախ-
րան իմ մտածելը, զու հանապաղ զգում ես
այն, ինչ որ ես, զու պէտք է հասկանաս այն
սուրբ հրճանից, որն ընդգրկում է մարդուն
այն ժամանակ, երբ նրա հոգու մէջ հանդի-
պում են, կարծես հիււից, երկու գօրեզ, բայց
տարբեր զգացմունքներ և յարւում են 'ի մի,
յառաջացնելով մի տեսակ երջանիկ դրութիւն,
որից փշում է ջերմութիւն, ինչպէս արեից և,
որին ամենաբոլովակ է, ինչպէս երկինքը:

Ներիր էմմայիկ, որ նա մտութապատ

Անգլիայում արևելքի լեզով է խօսում, բայց
և պատի այդպէս այն վայրկեանին, երբ տե-
սայ, որ իմ Վիլհամն և հայրս միախառնւեցան
մի ներդաշնակութեամբ:

Մենք մօտեցանք բժշկի բնակարանին: Նա
տանը չէր և ծառան, որի արտաքինը կատա-
րեալ համապատասխանում էր իւր տիրոջ՝ մե-
ծութեանն և հարստութեանն, ասաց ինձ, որ
դ-ր Բ-ն հիւանդիներ ընդունում է միմիայն երեք-
շաբթի և շաբաթ օրերը, կէս օրից յետոյ՝
ժամը մէկից մինչև չորսը: Թէ ամօթ է, բայց
ևս պէտք է խօստովանեմ, որ այդ պատաս-
խանն ինձ շատ ուրախացրեց. աբագ իջնելով
սանդուխըից, ես ինձ աւելի ուրախ էի զգում
քան բարձրանալիս: Դեռ ես քսան ու չորս
ժամ իմ ձեռքի տակ էր և մեզքն իմս չէր:

Եյսօր ես կրկին ուղիորւեցի դ-ր Բ-ի մօտ
և այդ այցելութեան պատճառած հոգեկան
խորը ցնցումից կազդուրւելով, գրում եմ քեզ,
որպէսզի դու անդաւաճան բարի գտնեն գէտի

քո Էմման,որ քո սիրոյ համար այցելեց առող-
ջապահութեան աստևածունու այդ դաժան և
ինքնավստահ սլաշտօնեալին:

Դ-ր Բ-ն կատարեալ վիթխարի է. շեմ
հասկանում թէ ինչպէս նրա նուրբ հագուստն
և սպիտակ փողպատր չեն պատռում նրա մկա-
նունքների ուժպին ճնշումից և ահագին փորի
ծանրութիւնից: Ես սարսափով դիտում էի նրան,
թէ ինչպէս նա շարունակ շարժում էր ձեռ-
քերն և ծոճուում աթոռի վրայ և ամեն բոպէ
ինձ թւում էր թէ հէնց այս ըոպէին այդ նուրբ
կարստին, որի վրայ շարժում էր աննստա-
կեացը, կջարգէի և ես արդէն իմ վառ երեա-
կայութեան մէջ տեսնում էի այդ մսի և ճար-
պի խոշոր զանգւածը բժշկական կարինետի
թանկագին գորգի վրայ լնկնելիս: Դ-ր Բ-ն
խօսում էր շատ բարձր. զա աւելի շուտ զաժան
և կրքոտ ձայն էր և, միենայի ժամանակ, նա
ամեն բանի մասին խօսում էր այնպիսի խորը
համոզմունքով և այնպիսի բռնակալական եղա-
նակով, որ կարծես չէր կարելի լնկհատել
նրան, մանաւանդ հակածառել: Երբեմն նա իմ
վրայ ճնշող տպաւորութիւն էր թողնում. ինձ
թւում էր թէ այն ամենն՝ ինչ որ նա ասում

է զուտ ճշմարտութիւն է և, իր թէ, նրան
անձանօթ է կասկած ասած բանը:

Յանկանալով խոյս տալ անօգուտ և տան-
չող կուրծքը թխթխկացնելուց, ես համառօտ
րացատրեցի նրան, որ ես թորախտով մեռածի
աղջիկ եմ, որ իմ բոլոր եղբայրներն ու քոյրերը
մեռել են նոյն հիւանդութիւնից և, որ ես ինքս
էլ տանջւում եմ չնշափողի թունդ բարբարու-
մից և արիւն թքելուց, եմ պատմութեան մէջ
ես բաւականանում էի միայն այն անհրաժեշտ
բաներով, որ նա կարողանար ինձ հասկանալ,
բայց նա կարծես ամեն բան արդին գիտէր և
իւրաքանչիւր բապէ ընդհատում էր ինձ իւր
«Հըմմ... հըմմ...» հնչիւններով: Ես նրան ասա-
ցի, որ շեմ կամենում ինձ ըննել տալ, որով-
հետեւ գա շատ անգամ է կատարւել և ցոյց
տևեցի նրան մի վկայական մի բանի բժիշկնե-
րի ստորագրութեամբ, որոնց կանչել էր հայրո
և որն ես անգիր գիտէի, թէի ոշինչ չէի հաս-
կանում:

«Փառանգական թորախտ, աջ անրակի
տակ խուզ ձայն. ամբողջ կուրծքի մէջ չնշառա-
կան ձայները շատ թոյլ են, բայց վերի, դէպի
աջ կողմն, երկար խիստ և ընդհատող չնշա-

ռութիւն: Կրծքի երկու կէսերում լժաղանթի
բորբոքման հետքեր: Մարտողական գործա-
րաններն ամենալաւ դրութեան մէջ ենք:

Ցոյց տալով դ-ր Բ-ին մահւան դա-
տավճռի կերպարանը ունեցող այդ խորհրդա-
ւոր և անգութ թուզթը, որը գրւած էր մի ինչ
որ անհասկանալի լեզուվ, ես ցանկութիւն յայտ-
նեցի իմանալ՝ կարող է արգեօք կիմայի փո-
փոխութիւնն այնքան ուղղել իմ առողջութիւնը,
որ չքանար ամեն տեսակ վտանգ ալպայում,
և.... Այդպես ես սկսեցի կարմրեկ՝ զուր աշ-
խատելով արտայայտել այն ծանր մտքերը,
որոնց համար և գու առաջարկեցիր ինձ խոր-
հրգակցել Լոնգոնի յայտնի բժիշկների հետ:
Հաւատացնում եմ քեզ, որ ես անպատճառ
կարտայայտէի այդ մտքերն, եթէ հաստիկ դ-րը,
որը ուշագրութիւն չէր դարձնում ոչ իմ կար-
մրելուս և ոչ շփոթութեանս վրայ, չնիդհատէր
ինձ խոտութեամբ. այդ բանն իմ սիրտը խո-
ցեց, և գու, բարի Վիրեամ, անպատճառ ինձ
հետ միասին զգացիր այդ ցաւը:

Դրանից յետոյ նշանաւոր դ-րը ինձ համար
բոլորովին օտար գարձաւ. նա նայում էր ինձ
և խօսում, բայց իմ ականջը մեքենաբար էր

Բնվունում նրա խօսքի ձայնն, իսկ նորա խօսակցութիւնը չէր շարժում ինձ, չէր պատճառում ոչ հաւատ և ոչ երկիւզ:

Միծագիր քո էմմայի վերայ, որը դատապարտում է բրիտանական բժշկական արւեստի լուսատուին. բայց ինձ թւում է, որ մի բժիշկ, եթէ նա չի հասկանում իւր հիւանդին, չի կարող բժշկել նորան:

Գ-ր Բ-ն չկարողացաւ սպասել մինչև որ ևս վերջացնէի ու բացատրէի նրան. Նա, մարդարէական տաղանդի տէր լինելով, չկարողացաւ հասկանալ այն ծանր մտքերը, որ ևս սւզում էի առել նորան. Նա շճանաշեց ինձ և իմ զգայուն ու հիւանդու կազմածքը, զրա համար էլ նրա խորհուրդներն ինձ համար արդէն ոչ մի նշանակութիւն չունէին:

«Ե՞ս, եթէ չեմ սխալում, գուք կամենում էք փոխել կլիման, զնալ նիցցա կամ Պիղա, Պօ կամ Մենատոն, կամ Պիրինէա, կամ գուցէ Մադերա կղզին, Եգիպտոս կամ թէ ասխական բարձրաւանդակները, կամ Պերուի, Յերօղը-Փասկօն: Բայց պէտք է ձեզ առել, որ այդ բոլորը միայն մօղնի յիմարութիւն է, որ քարո-

զում են բժիշկները և, որին հաւատում են հիւանդների: Հա ասենք ճիշտ որ շատ յարմար է հիւանդներին հեռու տեղեր ուղարկել, որպէսզի նորա մեր աշքերի առաջ չմեռնեն և մենք չլինենք գորա պատճառը: Բայց իմացած եղէք, որ նայն իսկ Պիղայում և Եգիպտոսում էլ թօրախտ կայ, որ այդ տեսակ հիւանդներից շատ կան նոյն իսկ Մադերայում ու Նիցցայում: Այն բժիշկները, որոնք խորհուրդ են տալիս հիւանդներին ճանապարհորդել, իսկական տգէտներ են, նորա հաւատ չունեն գէպ իրանց գիտութիւնը. իսկ ով հաւատ չունի գէպ ինքը, գէպ իւր գիտութիւնը, գէպ իւր արևետը, նա կամ յիմար է, կամ սրիկայ: Մեր զեղերի գրրերում և գեղատներում կան այնպիսի միջոցներ, որոնք հարիւր անգամ աւելի ազդեցիկ են, քան Միջերկրական ծովի տար զեփիւը: Այ զա է իսկական իմաստութիւնը: Գուք, հաւանական է, մի այր էլ չէր հասկանուց բժշկականութիւնից, բայց գուք հեշտութեամբ կարող էք ծազրի առարկայ շինել այդ բժիշկներին, որոնք զիմում են օդի, կլիմայի և օրիշ բաների օգնութեան, որովհետեւ այն երկրների մէջ, որ նրանք մատնացոյց են անում թորախտ-

ների համար, կան չոր և խոնաւ, բարձր և
ցածր, ցւրտ ու տաք տեղիք. ամենակարճ զ
օստած, որշափ տղիտութիւն, որշափ խարէ-
ութիւն... Եւ այդ բոլորն ինչի համար: Ես
կարող եմ վառարանի և ջերմաշափի օգնու-
թեամբ նոյն խոկ ձեր սենեակում ամեն տեսակ
կիմաներ սարքել. փոքր ինչ բարածուխի և
ջրի օգնութեամբ ստեղծել ձեզ համար Մազե-
րա և Նիցցա՝ Օքսֆօրտ փողոցում կամ Պիկա-
պելլայլում և գուք ստիպւած չէր լինի տեղա-
փոխւել, թողնել ձեր գորգերը, ծաղիկներն և
զեղանիկները: Բայց, հասկանալի է, ալէտք է
մի կաթիլ համբերութիւն ունենալ. գորգերի,
ծաղիկների և զեղանիկների երգերի վերայ ես
կատելացնեմ էլի մի բանի տպրուկներ, մուշկա-
ներ առատենքիտի մազ. ձկան իւզ. ես ձեզ
հետ կվարւեմ խիստ, բայց ողորմածութեամբ...
Փոքր ինչ զրդուի սպեղանի կաշւի վրայ և դառն
գեղեր ներքինի համար... Ես միտք ունեմ
բժշկել ձեզ բազցով ու տանջանքներով.. ընտա-
նեկան բանտարկութեամբ և ահով...»:

Ք-ը Բ-ի խօսակցութիւնն աւելի և աւելի
տարօրինակ ու վայրենի էր դառնում. բայց
չիւանդ սէր.

նորա խօսակցութեան եղանակի այնպէս համո-
զեցուցիչ էր, որ ես ստիպւած էի լսել նորան:
Երկի նա մեծ բաւականութիւն էր զգում ի
ցոյց դնելով այն բոլոր սարսափելի միջոցները,
որոնք նա գործ էր զնում. այդ միջոցին նա
անդադար շուռ ու մուռ էր զալիս աթոռի
վրայ, բժախոտ էր բաշում իւր շուրջն եղած
բոլոր առարկաները շարժում. նա երիում էր
միենոյն ժամանակ հսկայ և դահիճ:

— «Բայց յարգելի տիրուհի, հիւանդու-
թեան բժշկութիւնը մի կռիւ է հիւանդի և
բժշկի մէջ, կռիւ բնութեան և զիտութեան մէջ:
Եւ ով աւելի զօրեզ ու համարձակ է նա յազ-
թող է հանդիսանում: Նայեցէր (այստեղ նա
ինքն էլ չնկատելով, սերդուկի թեերը քշեց,
կարծես թէ մուշտակուի էր պատրաստում),
ես բաւական ուժեղ և անվեհեր եմ: Արհեստա-
կիցներս ինձ անւանում են կոսիտ վիտալիստ*
և ասում են, որ տարիների ընթացքում ես դար-
ձել եմ իմ սեփական կարեկատուրան, բայց

*Վիտալիստ—բժիշկ, որը բժշկելու ժամանակ զիմաւորապէս
աչքի առաջ է ունենում կենսական ոյժերը պահպանել:

ես օրէ յօր աւելի մեծ հաւատ եմ ձեռք բերում գեղ իմ զիտութիւնն և արտայայտում եմ այդ գուցէ, շավազանց և եռանդուն կերպով.. ծիծակեցէր, ինձ անւանում են անդիական բժշկականութեան Ողիսես նրա համար, որ ես ասլացուցանում եմ արիւնառութեան անհրաժեշտութիւնը մինչև անդամ չնդիաստանի հիւանդների համար, որնք տանջում են հասարակածային տեխնոլոգիա, նրա համար, որ ես շեմ զբագլում այն լւերով, որոնք կծում են քեզ, նրա համար, որ ես ժամանակ շեմ կորցնում այն չնչին բաների վրայ, որոնք չունեն ոչ մի նշանակութիւն, շեմ շափում ուսուցքների մեծութիւնը, շեմ որոշում լեարդի ճիշտ սահմաններն, այլ ուղիղ զիմում եմ գէպի կիաները, ըննում եմ նրան և ինձ հաջիւ եմ տալիս օրգանիզմի անկանոնութեան և խանգարման մասին»:

Դ-ր Բ-ն ՚ի հարկէ, երբէք չի փորձել իւր վրայ այն ազգութիւնների ոյժը, զրգուիչ միջոցներն և մուշկաները, որոնք նա առաջարկում էր ինձ, նա չէր վախենում հիւանդութիւնից, նրա նեղ հագուստն սպառնում էր պատռել և ամրոգչ խօսակցութեան ընթացքում նա շարունակ քըտնում էր, այնպէս որ նա յաճախ ստիպւած

էր ճակատից բրտինը սրբել: Իսկ ես այնպէս վրդովուած էի, որ այդ բրտինը իմ աշքին երկում էր արիւնով շաղախուած ճարպ...:

«Ուրեմն, եթէ դուք ուզում էր հիմնովին բժշկւել, ապա հրաւիրեցէր ինձ ձեր տուն և ես ձեզ կրծշկեմ: Բայց եթէ դուք չէք կամենում Ենգլիայում մեռնել, ապա համեցէք, գնացէք Մագերա կամ Նիցցա»:

Այս վերջին խօսքերը, որով դ-ր Բ-ն վիրացացրեց իւր ճառն, այնպէս խխտ էին, որ ես չկարողացայ ոչինչ պատասխանել նորմն և մրմնջալով մի քանի անկապ նախազասութիւններ շատագեցի վճարել այցելութեանս համար և դուրս գալ:

Այսպիսով ես տարայ արդին ինձ սպասող տանջանքների մի երրորդ մասն և, ասում եմ քեզ, թանկաղին Վիլեամ, որ այդ արեցի միայն քեզ համար....:

Եյժմ էլ կզնամ դ-ր Բ-ի երկու արհեստակիցների մօտ և այն ժամանակ արժանի կիրնիմ ոչ միայն բոլ բարեկամը կոչւելու, այլ և բոլ սրտի հերոսուհին:

Այսօր ես ստիպովական կարիք եմ զգում գործածելու մի որեւ, գեղիւթափ այն խորհուրդի

գէմ, որ ես լսել եմ դ-ր Բ-ից: Ես կվերցնեմ
Բէքնոը և քո նամակները կդնամ մեր պարտի-
զի առահնձնացած մի անկիւնը, որտեղ մի բա-
նի ժամ կանցկացնեմ քո մասին յիշողութիւննե-
ներով, խորասուզւելով բնութեան և որտի
պօէզիայի մէջ:



Էմման Վիլեամին

Լուսոն. յուլիսի 6-ին 18...թ.

Դ-ր Բ-ին արած այցելութիւնիցս յետոյ
ես զգացի, որ ուսերիցս գլորւեց մի ծանր բռու.
ես համոզած էի, որ ամբողջ բրիտանական
թափաւորութեան մէջ հաստատապէս չի կարելի
դանել մի ուրիշ բժիշկ, որն ինձ համար նոյն-
քան անհամակրելի լինէր:

Այսպէս, ուրեմն, ես մտածում էի, որ ճա-
կատագիրը հէնց առաջին անգամին ուղարկեց
ինձ ամենազառն փորձութիւն և, որ բժշկակա-
նութեան յետագայ երկու մարդարէները, որոն-
ցից ես սիրու խորհուրդ հարցնէի, կլինին բա-

զարավարի և սիրելի, ինչպէս մարդկութեան
անկեղծ բարեկամներ:

Բայց ես նորից սխալւեցի և առիթ ունե-
ցայ կրկին համոզւելու, որ բնութեան մէջ աւե-
լի շատ վատ բան կայ, բան թէ լաւ: Թանկա-
գին Պիլեամ, լսիր ինձ ուշադրութեամբ, վեր-
ցրու քո տան մէջ գտնւած հին ձեի մի ամե-
նայարմար բազկաթոռ, մի լաւ նստիր մէջը, վա-
կիր աշերդ և երեակայութեամբ հետեւիր էմմա-
յիդ, որը քո սիրոյ համար զնաց Արքայական
փողոցը դ-ր 8-ի մօտ:

Հաղիւ ծառան ներս տարաւ ինձ սենեակն
և ես մի արագ հայեցը ձգեցի կահաւորութեան
վրայ, որ սիրոս ճնշւեց: Ես զգացի մի սար-
սուռ, որ պատեց իմ հոգուն և, կուչ զալով՝
շտապեցի փաթաթւել շալով, որպէսզի պահպա-
նեմ ինձ տարացնող ներբին ջերմութիւնից:

Սենեակում թափաւորում էր լուսնիւն և
անպայման համաշխափութիւն. այսուեղ չէր նկատ-
ում ոչ մի աւելորդ առարկայ, ոչ մի ամենա-
աննշան պատկեր, ոչ ծաղիկ, ոչ մի առարկայ,
որն արտայալաէր թէ սենեակի տէրը սիրում
է այն ամենն, ինչ զեղեցիկ է, կամ թէ ունի ճա-
շակ և համակրանք է տածում դէպի մի որիէ բան:

Երեսում էր, որ մինչև անգամ դոյներն իւրեանց վառ ներգաշխակութիւնով և տարբերութիւնով հալածւած են այստեղից, ուր իշխում էր միայն մաժեմաթիկան:

Ես փակեցի աշքերս և սկսեցի սպասել գ-ը Տ-ին, որ և շուտով յայտնեց: Նա իւր սկսեակի նման պազ և գժպայն էր: Թեթի զուխ տալով, առանց մի խօսք ասելու վերցրեց աթոռն և նայեց ինձ, սպասելով, որ ես կըսկսեմ խօսել իմ հիւանդութեան մասին:

Երկու կամ երեք անգամ ես նայեցի նրան և նորից աշքերս խօսաբհեցի, յակամայիցս փոխելով թէ գէմքիս և թէ հայեացըիս արտայատութիւնը, կարծես թէ, ես կամենում էի աղդել նորա սառն և հանգած աշքերի վերայ, որսնը ոշինչ չէին ասում ինձ և միայն երկիւղ էին աղդում: Ես ոչ մի ժամանուկ չեմ կարողացել խօսել մարդու հետ, նախ քան մեր մէջ մի զղային աներեւոյթ կապ հաստատւելը. ոչ մի ժամանակ չեմ կարողացել երեակայել, որ երկու մարդկային էակներ կարող են փոխագարձաբար միմեանց տալ հոգու այն չնշառութիւնը, որ կոշւում է խօսակցութիւն, առանց ատելութեան կամ սիրոյ, յարգանքի կամ արհամարհանքի

միջնորդով միացած լինելու: Այսպէս ուրեմն ստիպւած լինելով խօսել այս սառը մտրդու հետ ես աշխատում էի պազ երեալ, աշխատում էի փոխել ինձ պահելու եղանակն, իմ հայեացըը, խօսակցութիւնն, այնպիսի մի կէտ գտնելու համար, որով մենք կարողանայինք մօտենալ իւրաք: Բայց ամեն քան իզուր էր. գ-ն Տ-ն և ես երկու կատարելապէս տարբեր էակներ էինք. մեր մէջ զտնուում էր մի պիհ, աւելի խօսք քան այն, որ գտնուում է պիծակի և ծաղկի մէջ, գայլի և գեղձանիկի մէջ:

Մեծ արագութեամբ ես քացատրեցի նրան իմ այցելութեան նպատակը, յայտնեցի ուրիշ թժիշների կարծիքն իմ մասին և հարիւրեբորդ անգամ պատմեցի իմ հիւանդութեան նշանների նկարագիրը. ես աշխատում էի, մի խօսքով, կատարել իմ գործը, որքան կարելի է արագ, ես չէի կամենում նոյն իսկ մի չնշին բոպէ կորցնել այդ անհաճոյ տեսակցութեան վրայ:

Սակայն գ-ը շարունակում էր լոել. Նա թոյլ տևեց ինձ խօսել, բայց գէմքի ու աշքերի ոչ մի շարժումով չը հասկացնում. որ ինքը խօսւմ է և առհասարակ կհնգանի է:

Եյժմ ինձ համար արդէն բոլորովին պարզ էր, որ ես բոլոր հօգուխ ատում էի դ-ը 8-ին:

Յետոյ, երբ ես նորան բոլորը պատմեցի, կարելին և անկարելին, իմ հիւանդութեանո մասին բոլոր գիտեցածո ու շփոտեցածո, խօսելով համարեա անզիտակցարար բառորդ Ժամ ես լսեցի և սպասում էի, թէ ինչ պիտի պատասխանէ այդ երկակինցաղ էակը: Ես յոյս ունէի, որ զուցէ նրա ձայնի աւելի սրտագին լինի: Միթէ աշխարհումս զոյութիւն ունին այնպիսի արարածներ, որոնք պաղ են ինչպէս սառոյցն և աւելի զգւելի քան իժը:

Դ-ը Տ-ն պատասխանեց շատ սաւը կերպով:
«Բոլորն, ինչ որ կար ասացիք, զուցէ և ճշմարիտ է, բայց այնուամենայնիւ ես ինքո պէտք է ըննեմ ձեր օրգանները»: Եւ նա, երկար խօսակցութեամբ յոգնածի նման, վեր կացաւ և մատով ցոյց տւեց ինձ բազմոցը, որը զբած էր հիւանդներին ըննելու համար: Ես վեր կացայ կարծես թէ մի որ և է բռնակալի տւած նշանով, բայց ցանկանալով խոյս տալ տանջող ձեական ըննութիւնից և աշբի տռած ունենալով, որ իմ թոքերս արդէն հետազոտել էր բժիշկների մի ամբողջ մասնաժողով, ես

փորձեցի մի անգամ էլ գիտել նորան ազաշներով, փորձեցի ներազութիւն խնդրել և մրմնացացի. «Բայց.... ներեցէք....»:

Սակայն նա ուշը չգարձեց իմ խօսքերին և, դէմքի կասկածոտ արտայայտութեամբ, թափ տւեց զլուխն աւելի հրամայական կերպով, մատով ցոյց տալով ինձ բազմոցը:

Բազմոցի երեսը պատած էր կաշւով և շատ մարուր էր, բայց նորանից էլ վշտում էր նոյն սառնութիւնն, ինչպէս և ամբողջ սենեակից, նորա սարը ու կարգից և հինց թւր բժշկի խօսքերից:

Քննութիւնը անեց կէս Ժամ և եթէ մի բոպէ էլ աւելի բաշէր, ինձ թւում էր, թէ ես կմեռնէի...

Ես վեր կացայ ձեւած ու տանջւած, բայց յետոյ նորից նստեցի: Ինձ տանջողը զեռ ևս կանգնած էր իմ առաջ և մի քանի բոպէ շարունակւեց նորա սարսափելի միմիկան, որն ընդհատուում էր միայն «Հ՝ ըմմ, Հ՝ ըմմ,...» միավանկերով:

Նա շարժում էր զլուխով, կծոտում էր շրթունքները, կիճուռտում էր ճակատն և ձախ ձեռքով շփում էր իւր ածելած կզակը:

«Այդպէս՝ ուրեմն գուր ուզում էք զնալ Մագերա, որպէսզի խնյս տաք ձեզ սպասող զիճակից...» Միթէ գուր շգիտէք, որ այդ կրզու քնակիչների մէջ էլ կան սապատօղներ, բաղցկեղներ և թորախտներ. սակայն գուր կարող էք միսիժարւել նորանով, որ կտեսնէք այնտեղ կրծքացաւ ունեցողների համար հիւանդանոց. դա հիմնել է Գօն-Գետրօ Լ կայսեր այրին. բայց գրա անոնը շատ էլ քաղցր յիշողութիւններ չի զարթեցնում. դա Մարիա Սմելիտ դշխոյն է, Բրագիլիայի կայսրունու աղջիկը, որ այնտեղ էք գնացել առողջանալու համար, բայց, գրա փոխարէն, մեռաւ այնտեղ:

«Եթէ գուր ուզում էք գտնել այնպիսի մի տեղ, ուր չկան թորախտներ, այն ժամանակ գուր ոչ թէ հարաւ այլ դէպի հիւսիս պիտի գնաք: Օրինակի համար, ինչու չէք զնում իսլանդիա:»

«Թորախտով հիւանդներ ամենաքիշ թւով զտնում են այն երկներում, որոնք տարածւած են միջին բարեխառնութեան զծերի մէջ — այն է 50° և 20° ֆ. մէջ: Պետերուրդում և Մոսկվայում, որտեղ միջին բարեխառնութիւնը 38° ֆ. է, Կանադայում, Ամերիկայի Մի-

ացեալ Նահանգների հիւսիսային մասում: Իսլանդիայում, Փերրօ կղզիների վրայ, հէնց նոյն խոկ նորվեգիայի ամենահիւսիսային սահմաններում, Ջվեցիայում և Լավլանդիայում թորախտը շափազանց ուշ-ուշ է պատահում:

«Նոյնպէս և հարաւ-արևմտեան Ջոթլանդիայում և Հերթիտեան կղզիների վրայ թորախտ ունեցողները շատ բիշ են. բայց այստեղ հարցը ներկայանում է աւելի խառնաշփոթ. մի քանի հեղինակաւոր անձինք հակառակն են պնդում: Մօրդանն ենթագրում է, որ գա կախումն ունի այն ծխից, որով տեղացի բնակիչների խըճիթները միշտ լիքն են լինում. նոցա վառելիքն է տորփ և, ինչու յայտնի է, նորա գագափար շունին մեր վառարանների մասին: Իսկ որտեղ վառում են բարածուխ, այնտեղ թորախտը յաճախ է, պատահում: Բժշկականութեան մէջ ոչինչ դրական բան չկայ, տիրուհիս: Բոլորը ձեզ կասեն, որ էլեքտրացած թթւածինը գրգռում է թորերը, բայց Հերթիտեան կղզիների վրայ էլեքտրացած թթւածինն առատ է, իսկ այնտեղ թորախտ չկայ: Բոլորը ձեզ կառեն, որ թորախտը շատ յաճախ յառաջանում է բաղցկեղից. բայց Հերթիգեան կղզի-

ների վրայ և հարաւ-արհմտեան Շօթլանդիա-
յում քաղցկեղներ շատ կտն իսկ թորախտ
ունեցովներ ըիշ են:

«Ճշմարիտ չէ նաև այն, որ լաւ կիման
պահպանում է թորախտից: Բէնուատօն-դը-
տօնէֆը գտել է, որ զօրքերի մէջ հիւսիսային
Ֆրանսիային ընկնում են 85 թորախտ ունե-
ցովներ, միջինին—79 և հարաւայինին—82:
Մարսէլում, առօւմ են, թորախտից մեռնում
է բնակիչների քառսորդ մասը, Ճննովայում—մի
վեցերորդ մասը: Անտիւեան կղզիներում, Մա-
րդերայում, Բիօ-դը-Փանէլյոյում այդ հիւանդու-
թեան գէպերը շատ յաճախ են լինում, նոյն-
պէս և Նիցցայում, Լիվոնյում, Փլորէնցիա-
յում, Նէապոլում, Մալթայում, Խոպանիայում,
Պորտուգալիայում, Կալիւաթայում և Մադրա-
սում.... Մարդինիկօ կղզու վրայ նա աւելի
սակաւ է, քան թէ Փարիզում:

«Բայց տեղացի թորախտների համար մի
քան, իսկ այնտեղ առողջանալու ուղարկւած-
ների համար մի այլ քան ասելով դեռ հարցը
բաւականաշափ չէ պարզւած: Տաք տեղերի
թորախտ ունեցովների համար սովորաբար վատ
է լինում, երբ նորա զնում են ցուրտ երկր-

ներ: Մի քանի բժիշկներ խորհուրդ են տալիս
գնալ ճահճալին տեղեր. Բուգին ապացուցա-
նում է, որ համաճարակ միազդական հիւան-
դութիւններն և թորախտը միատեղ չեն կարող
գոյութիւն ունենալ: Ֆերմէն, Գինդրակը, Ժե-
նէն, Հուզին և Զեգելը չեն ճանաչում այդ թէ-
օրիան: Իսկ ինչ վերաբերում է ինձ, միայն մի
քիտեմ, որ Ալյացիկի բնակիչները միա-
ժամանակ ենթակայ են թէ այդ և թէ միւս
հիւանդութիւններին,—թորախտին և երկրոր-
եայ ընդհատող տեսնիի:

«Մի քանի բժիշկներ իրենց մօտ յաճախող
հիւանդիներին ուղարկում են բարձրագիր տե-
ղեր: Նորա կարծում են, որ Ալպերի, Անդերի
բարձրութիւններում թորախտ չկայ, բայց այդ
էլ ապացուցւած չէ: Բժշկականութեան մէջ
ոչինչ սրոց բան չկայ: Իմ բարեկամ դը Իր-
վինը բժշկութիւն է արել մի բանի տարի
Պերտչիսում՝ Թօնիայի և Ագոլէի մօտ և գտել
է, որ այնտեղ թորախտ յաճախ պատահում է
գլխաւորապէս բարձրագիր տեղերում:

«Թօրախտի զարգացման վրայ, տիրուհի,
տւելի շատ ազգում են շարժողութիւնն առող-
ջութիւնն պահպանելու համար և կենցազավա-

բութիւնը, բան չեկ կլիման: Andrel-ը գտելէ, որ Ծորախտն առաւել յաճախ պատահումէ կենդանիների մէջ, բացի չներփց և բացատրումէ այդ նրանով, որ վերջիններս ժամանակի մեծ մասն անցնում են շարժողութեան մէջ: Այդ կարծիքն աւելի ևս հաստատումէ այն փաստերով, որ ուռուցըներ շատ յաճախ ունենում են զվթայւած և մութ ու փառ բոյներում պահւող չները:

«Փուրկօն պատմում է մի բժշկի շան մասին, որը միշտ հետեւում էր իւր ախրօջը՝ նորա ամենօրեայ երկարատև զրօսաներների ժամանակի։ Երբ որ բժիշկը մտաւ զինւսրական ծառայութեան, չունը շվթայւեցաւ և սատկեց թորախուց։ Թորախութիւն կարգացման վրայ մեծ ազդեցութիւն են ունենում և կրթերը, որմնը հոգին գէպի անկումն են տանում, որովհետեւ նորա փշացնում են արիւնը, խանկարում են նեարգային համակարգութիւնը, պանդադեցրնում են մարսութիւններ և այլն։

«Լենինկը թորախտի ժաղման ժամանակ
մեծ նշանակութիւն է տալիս բարոյական պայ-
մաններին և յայտնում է հետեւայ կարծիքը,
«Համարիա բոլոր ոչ ժառանգութեամբ թորախտ

ունեցողներն, այդ հիւանդութիւնն ստանում
են բարոյական ցնցումներից»: Եթէ՝ արդար է
դ-ր Ելի սխզածը, որ բոլոր մարդկանց ^{4/5}
մասը մեռնում է վշտից, այն ժամանակ ՚ի հար-
կէ բարոյական ցնցումն և թոքախտը նոյնն են:

«Պ-ը Բռնփցը բաւական ուղիղ կերպով հետիւն մի քանի խօսքիրի մէջ որոշում է թուրախտների պարտագիրի կինցազավարութիւնը.— «Ուրախացէք կեանքըսկ, ապրեցէք որտեղ կամենում էք, ճանապարհորդեցէք՝ կուզէք ձիով, միայն թէ աւելի շատ շաբժողութեան մէջ եցէք»:

«Սակայն դա էլ բաւականաշափ ճիշտ չէ
պարզւած, բանի որ բժշկականութեան մէջ
ոչինչ չկայ պարզ որոշւած: Եթէ դուք չէք
ուղում ցուրտ երկրներ գնալ, շատ շարժւի
և չէք կարող ուրախ լինել, այն ժամանակ
ճանապարհորդեցէք ծովի վրա:

«Գալինը, ծերունի Գալինն, առաջարկում
էր իւր թորախտներին ճանապարհորդել Նեղո-
սի ափերով ոչ թէ նրա համար, որ թիրը՝ ճա-
նապարհորդութիւնը օգուտ կտար, այլ քոր-
ter longinquitatem navigandi (երկարաժամկե-
տանալու համար): Այժմ էլ այսուեղ Լին, Գլու-

շրիտն և ուրիշներն ապացուցանում են, որ ծովային ճանապարհորդութիւնները շատ օգտակար են, ինչպէս թորախտի բժշկութեան, նոյնպէս և նորա զարգացման առաջն առնելու համար։ Կնօկսն այդ բացատրում է՝ ՚նրանով, որ ծովի վրայ օգի բարեխանութիւնը հաւասարաշափ է. իսկ զպիսը իրրե պատճառ ցոյց է տալիս այն ճանպամանը, որ ծովային օդն աւելի բիշ թթւածին է բովանդակում իւր մէջ։ Բայց այդ էլ ապացուցւած չէ. բժշկականութեան մէջ մեղ ոչինչ յայտնի չէ ճշգրիտ։ Ռօշաբը պնդում է, որ ծովային ճանապարհորդութիւնը յաճախ արագացնում է քան կանդնեցնում թորախտի հոսանքը, որ թորախտը շատ յաճախ պատճառում է նաւառախների մէջ քան թէ ցամարի զօրքերի մէջ, որ նա աւելի յառաջպիճում է ծովի վրայ, քան թէ ցամարի վրայ և, որ գորա համար ծովային ճանապարհորդութիւնները պէտք է արգելել այն ջահիներին, որոնց սպառնում է թորախտը։

Բժշկականութեան մէջ ամենայն ինչ կարելի է պաշտպանել և հերքել։ Են կարող էի բժշկել ձեզ և այսպէս՝ մինչ ծնուռը թաղել չիւսնդ սեր.

ձեզ հսկի մէջ և մայիսից մինչև գեկտեմբեր ամեն օր նսրողել ձեր գերեզմանը։ Այս եղանակը կարող է տարօրինակ թւալ, բայց ոչ նոր։ Սօլանզօ-դա-Լիւկին անւանում է այդ «հոգային վաննայ»։ Շատերն այն կարծիքին են, որ բոլոր նոր մեղսուները կանոնաւոր են. գոնէ այդ յարմար է։ Աւելի դիւրին է շափել ժամանակը, քան զիտութեան շարժումն. աւելի հեշտ է տարիների հետ գործ ունենալ, քան խելքի քննագատութեան հետ։ Օրինակ՝ մի քանի տարի առաջ ծիծագում էին այն ընդհանրացած կարծիքի վերայ, թէ թորախտը համաճարակ ախտ է, իսկ այժմ նորից թերւում են դէպի այդ հին կարծիքի կողմը։ Այսպէս է նորաձե գաղափարների գարեւոր շարժովութեան շրջանը։

«Դիու մի քանի տարի առաջ Պլինոս կրտսէրն ասաց, որ թորախտը համաճարակ է»*)

Խոստովանում եմ քեզ, անզին Վիլեամ, որ ոչ մի ժամանակ ես չեմ անիծել իմ յիշողութիւնս, որին գու գերազանց ես ասում, այն-

*) Մենք քննուեցինք Պլինոսի հեղինակութիւնների մէջ գ-ը Տ-ի ցուցմունքը, որի մասին խօսում է Էմման իւր նամակում. և իրաւ զարանք նորա իւր բարեկամին գրած նամակը (VII գ, էջ 10), որից պարզ երեսում է, որ այն ժամանակ թորախտն ընդունած էր իրքն համաճարակ ախտ։ «Angit me Fanniae

պէս ինչպէս այն օրն, երբ ես նոտած էի այդ
խօսում մերենայի առջե, որ կոչւում է զ-ր Տ,
և յիշում էի նորա բոլոր խօսքերը, բանի որ
իմ յիշողութիւնից, իրաւ որ, խոյս տալ չի
կարող ոչ մի անուն և թւանշան, ոչ մի խօսք:

Բայց ինչ օգուտ բոլոր այդ գիտութիւնից,
եթէ մտրի ահազին աշխատանքից յետոյ չի
կարելի նորանից գուքս բերել մարդուս օգտա-
կար ոչ մի ճշմարտութիւն: Ինչի՞ է ծառայում
այդ անպտուկ և սառը գիտութիւնը: Նա չի
կարողանում մեզ ոչ մինիթարել, ոչ էլ յուսա-
գրել և միմիայն այն եղանակացութեանն է գա-
լիս թէ «մենք ոչինչ չգիտենք, ոչ մի ճշգրիտ
բան չկայ»: Իմ բարի Վիլեամս, նարիր համար-
ձակութեանս, որով ես զնանատում եմ գիտու-
թիւնն իմ կանացի սրտիս տեսակետից, բայց
ես միշտ խափուսիկ եմ համարել այն ճանա-

valetudo. Contraxit hunc dum assidet Juniae
virgini, sponte primum (est enim affinis)
deinde etiam ex auctoritate pontificum...
Insident febres, tussis increscit, summa ma-
cies, summa defectio»...

ծանօթ. հեղ.

պարհերը, որոնք չեն տանում դէպի բաղդա-
ւորութիւն: Մարզո ձգտում է զւարճութեան և
ուզում է յուսալ ուստի այն բոլորն, ինչ որ չէ
տանում դէպի բաղդաւորութիւն՝ ներկայանում
է ունայնութիւն: 2Է որ նոյն իսկ ամենաբարձր
կրօնները խոստանում են մարդուն յաւիտենա-
նական երջանիկ կեանք ՚ի վարձաւրութիւն
զոհերի և կատարելութեան ձգտելուն: Բարո-
յական օրէնքն և հասարակաց կարծինքը բաղ-
դի ամենաբարձր տեսակն են համարում բարո-
յական կատարելութիւնն ու փառքն և կատա-
րեալ են ճանաչում նորան, ով փորձում է իր
վրայ բաղդն, ուրիշներին բաղդաւորացնելով...

Բայց գառնանք մեր դ-րին:

Թւեկով բժշկական աշխարհազրութիւնից
իւր բոլոր տեղեկութիւնները, նա շարունակեց:

«Սյսպէս ուրեմն, տեսնում էք, տիրունիս,
թէ նրան ըիշ լաւ բան կարելի է սպասել
կլիմայի ազդեցութիւնից: Այսուեղ աւելի շուտ
ճաշակի հարց կայ, բան թէ գիտութեան: Եթէ
սիրում էք ձմեռ—ուզնորւեցէք եսլանդիա կամ
չերքիտեան կզգիներն. եթէ սիրում էք տարն
—ուզնորւեցէք Մագերա. գերազասում էք լեռ-
ները—գնացէք Պերուի բարձրաւանդակը: Եթէ

սիրում էք ծովերը—գնացէք Քսերէս։ Իսկ
եթէ կամենում էք մնալ Լոնդոնում, այն ժա-
մանակ ևս հաճութեամբ յանձն կտոնեմ՝ բժշկել
ձեզ և ամենայն ջանք կգործազրեմ գորա վրայ։
Դուք, 'ի հարկէ, զիտէք այն առածը որ ասում
է՝ «Սոտծու պահած գառը զայլը չի ուտի»։
Հիւանդին բժիշկ է հարկաւոր և եթէ զուր
ինձ կընտրէք բժիշկ, ես կարող եմ, առանց
աւելորդ խօսառումների, առել, որ միւս բժիշկ-
ներից ոչ լաւ եմ ոչ վատ։ Ես պահանջ եմ
զփում միշտ ճշմարիտ խօսել և ոչ որի չխա-
րել։ Առում են, որ ես սկսեալի եմ։ Գուցէ
զորա մէջ մի հանելուկ կայ ծածկած, որ ինձ
զիմում են արգէն միւս բոյսը բժիշկներից
յետոյ, որպէսզի ես հաստատեմ նոցա վճիռը,
կամ ցոյց տամ վերջին գթութիւնը... Այդ ինձ
համար միննոյնն է։ Եւրարանչւոր որ հաստ-
րակութեան մէջ ունի իւր տառելութիւնն և
եթէ իմը հէնց այդպիսին է, ես ոչինչ չեմ
կարող փոփոխել գորա մէջ»։

Ես իմացայ աւելին, քան հարկաւոր էք..
Ըստհակալութիւն յայտնելով բժշկին և վճարե-
լով նորան, ես շտապեցի տուն և չնայած իմ
յոդնածութեանս, համոզւած էի, որ իմ զէպի

գողգոթայ տանող ճանապարհի երրորդ մասը
չի կարող սորանից վատ լինել։

Էմման Վիլեամին

Լոնդոն, յուլիսի 8-ին 18..թ.

Իմ բարի Վիլեամ, գ-ր Տ-ին այցելելը
խիստ տանջեց ինձ, ես ստիպւած էի երկու օր
շարունակ հանգստանալ, նախ քան վերջին ճա-
նապարհորդութեան սկսելս բժշկական աշխար-
հում։ Այդ երկու յօդինեցնող օրերի ընթացքում
ես ցաւելով մտածում էի այն արհեստի վրայ,
որն այդպէս հալարտ կերպով կաշում է բժշկա-
կանութեան արեստ և սեփհականեցնում է
իրան զիտութիւն անունը։ Ռզորմած Սատւած,
որքան ինքնազովութիւն այդ խօսքերի մէջ։
Բժշկականութիւնն ինչ իրաւունք ունի գի-
տութիւն մեծ անունը կրելու, երբ նորա
քրմերը հակասում են միմեաց, երբ մենք
ակամայ ստիպւած ենք մեզ համար բժիշկ
ընտրել մեր զգացմունքի և մեր սրտի համա-
կրանքի խորհրդով։ Սա ի՞նչ չնշին զիտութիւն

է, որ անզօր է պակասեցնել մահացութիւնը
գոնէ մի տոկոսով. մէկը բժշկում է մինոյն
հիւանդութիւնը թէ ցուրտ թէ տար ջրով, արա-
զով և կաթով, միւսն անտարբեր կերպով, իր-
քեւ բժշկւելու միջոց, առաջարկում է մեղ գնալ
կամ Մագերա կամ Խոլանդիա:

Ինչքան էլ աշխատեցի մեզմացնել իմ դա-
տավճիռն և խեղելի իմ, դէպի այդ երկու բժիշկ-
ներն ունեցած, դժգոհութիւնը, սրոնք արդէն
արտայալտել էին իրենց կարծիքն իմ հիւան-
դութեան մասին, այնուամենայնիւ ես չգտայ-
ոչ մի կլտ, որով արդարանային այդ էսկու-
լապներն*) և նոցա գիտութիւնները: Ճնորհիւ
իմ այս այցելութիւնների, ես յակամայից ծա-
հօթացայ բժշկականութեան արւեստի երկու
ծայրայեղութիւնների ներկայացուցիչների հետ,
գուցէ երկու՝ կասկածանքի և ֆանատիկուու-
թեան շափաղանց որոշ կարեկտուրաների հետ:
Ճշմարիտ է, թէի ես տեսել եմ միայն երկու
բժիշկ և դատում եմ բոլորի մասին, բայց չէ
որ մնացածները բոլորն էլ այդ մի ծայրայե-

*) Բժշկականութեան աստածները հին յունաց մէջ:

Ծան. քարգ.

գութիւնից միւսը տանող աստիճաններն են ներ-
կայացնում, աստիճաններ՝ կոյր հաւատից գէ-
պի սառն ոկեալտիկականութիւնը: Ճարունակ
այդ մինոյն խնդրով զբազւելով, իմ լարւած
մտածողութիւնը խանգարեց զգերս: Մի կողմից
ինձ թւում էր թէ տեսնում եմ մի գժոխը իւր
ահռեկի հրաշունչ լեռներով, որոնց վրայ բնակ-
ւում են սարսափեցնող սղիներ, գահիճներ ու
սատանաներ և, որոնք պատրաստում են տան-
ջանքների ամեն տեսակ գործիքներ. իսկ միւս
կողմից—տեսնում եմ մի ահապին զերեզմանա-
տուն մի խռոմք մռայլ խաչերով, սրոնք ցցւած
են ձիւնի ընդարձակ ծովի մէջ. զերեզմանա-
տան մէջ թագաւորում էին մառախոսվն ու
լուսթիւնը, որը խանգարւում էր միայն մարդ-
կանց մի ահապին խմբով, սրոնք հազար էին
ու, երկար հաղուստներ, սիպտակ փողպատով
և կրում էին մեծ կեղծամեր: Եւ այդ մար-
դիկն արձակում էին վայրենի աղաղակներ,
սարսափելի կրծտացնում էին ատամներն և
կատաղութեամբ չարս դին նայելով հրում էին
իրար. բայց ինչպէս և իւրաքանչիւր ամրախ,
որ անընդատ շարժողութեան մէջ է գտնը-
ւում և յատկապէս իւր տեղը չէ փոխում,

այսպէս էլ սօրտ անփոփոխ տատանւում էին երկու հակադիր բենեների — կրակի և սառցի — մէջ:

Մոլովթեան պատմութիւնն արդէն վերջացած է և նա ինքն, ընդհանուրի կարծիքով, յաւիտեանս յաւիտենից ոչնչացել է միջին դաւերի աւերակների տակ. բայց ես կարծում իմ, որ նորա վերջին երեսը գեռ ես մարուր է և, որ նա թուլած է բժշկականութեան համար. Այս ձանձրալի օրերում բժշկականութիւնն ինձ ներկայանում էր ինչպէս մի հին կախարդութիւն, ծածկած միայն ժամանակակից մետաքսեայ նորածի հագուստով. Հատինական դիզատումը՝ իերօգիտի նման թւահշաններով, բազկերակ շփելը, լեզուն զիտելը, բժիշկներին և նախագուշակութիւններին հաւատալը, որոնք հեղինակաբար արտասանում են, բայց երբէք չեն ճշտում. — միթէ այդ բոլորը չեն կազմում կախարդութեան յատկանիշները. Իսկ լատինական և յունական անուններով այդ բոլոր զեզօրայքը, որոնք սապնի պղպջակների ծիածանագոյն ծածկոցի նման ծածկում են զիտութեան դատարկութիւնը, միթէ դոքավկաներ չեն ներկայ կախարդութեան.

Միթէ բնական կապ չկայ նախագուշակութիւնների, խարերայութեան և կախարդութեան մէջ, Սիրիլեան գրքերի, գնչուհու և Գօմէօպատի*^{*)} մէջ, Գելֆեան պատգամախոսի, Խիրօմանկտիայի^{**)} և բժշկականութեան մէջ:

Մահւան երկիւղը ծնեցրել է շատ ենթադրութիւններ. և միթէ նա չէր բժշկականութեան օդային տաճարի գոյութեան պատճառը. Լամարտինը, 'ի հարկէ, շափազանց մեզմ է խօսել նորա մասին ասելով. «Կա միայն մի գեղեցիկ ձգտումն է բժշկելու»: Կարծես թէ դ-ր Բ-ն, որը կամենում էր սպանել ինձ, միայն թէ ցոյց տայ իւր հաստատակամութիւնն և համոզմանընքն, և դ-ր Տ-ն, որը կամենում էր ոչնչացնել ինձ իւր դատարկ գիտութեան ծանրութեամբ, մի փորբի տեղ անդամ չթողեցին իսկական, ուրախութիւն պարզեց, ոչ-

) Ենափիսի միջոցներով բժշկութիւն անող, որոնք ոռողջ մարդու մէջ էլ նոյնպիսի հիւանդութիւններ կյառաջացնեն:

Ծան. քարգ

**) Զեռքերի գծերով գուշակութիւններ անել:

Ծան. քարգ.

մոլեոանդ և ոչ—ինքն իրան բացասող բժշկականութեան համար:

Սիրելի Վիրեամ, ևս սխալւեցի. կրակի և յաւլտենական սառայցի բնեռների մէջ տարածւմ է գեռ իրական բժշկականութեան մի ընդարձակ արտ: Կան բժիշկներ, որոնք բժըշկում են հիւանդներին և, որոնք նման չեն ոչ գ-ր Տ-ին և ոչ գ-ր Բ-ին...

Եյդ հաճելի զիւտն ևս արեցի բժշկականութեան լուսատուներից երրորդին այցելելու ժամանակ, այսինքն՝ երբ գնացի գոկոոր Գառվի մօտ:

Նրա մօտից ևս տուն դարձայ առոյդ և սրախ, կարծես թէ զրօննել էի արօտներում և հաւաքել էի ծաղիկների ու խոտերի մի մեծ փունջ: Օ՛, ինչ սիրելի մարդ է և հիւանդների խոկական բարեկամ այդ գ-ր Գառվը:

Հազիւ ներս էի մտել նորա առանձնասենեակը, որ արգին գլափի նա համակրութիւն զգացի: Սանդուղքներով բարձրանալիս և նախասենեակից ու միւս սենեակներից անցնելիս ևս հինց առաջին հայեացրից նկատեցի, որ նա սիրում է գեղեցկութիւնն և յատկապէս

ընուվթիւնը, որի չնորհիւ նորա բնակարանը բոլորովին այգի էր դարձել:

Սանդուղքի վրայ գրւած էին բարձր փշատերի ծառեր, որոնք տնկւած էին մեծ կաւեայ անօթների մէջ, տեսնողը կզարմանար, թէ ինչպէս կարող էին նրանք այդտեղ աճել: Ամանների միջի հողը ծածկւած էր մամուռով և ուրիշ խոտերով, ճիշտ այնպէս, ինչպէս ջօթլանդիալում. իւրաքանչիւր խոտ, միւսների հետ միասին, աճում էր մամուռեայ վառ կանաչ գորգի վերայ:

Նախասենեակում և դահլիճում, ամեն կողմ ծաղիկներ կային և լուսում էր թռչունների ճլվլսցը, որոնք չէին երիւում: Ես ուշազրութիւն դարձրի արձանների վրայ. գորաընդօրինակութիւններ էին Յունաստանի և Ժամանակակից Խոտայի ամենալաւ արտադրութիւններից. գորա ներկայացնում էին տղամարդի, կնոջ և երեխայի գեղեցկութիւնը. բացի մարմարեայ տլարաստրեայ քանդակագործութիւններից, ամեն կողմից կախւած էին նկալներ: Նորա աշխատութեան սենեակի գրասեղանի վրայ գրւած էր ալարաստքէ Մեղիցիեան — Վեներան՝ շըշապատւած դափնիի և մրգենու

թփերով, բոլոր այդ գեղեցիկ առարկաները կորչում էին ամեն տեսակ մեծութեան և զայնի զրքերի կոյտերի մէջ:

Մըրբան պօէզիայ կար այդ քաօսի մէջ: Մեղիցիեան—Վեներա, երկու մշտագլար թլպիեր և մարդկային մտքի ստեղծագործութիւններ: Բնութիւնը, գեղարւեստն և գիտութիւնն այնպէս մօտ էին միմեանց և, կարծես անհկատելի կերպով, միանում էին իրար: Այդ բժիշկը, 'ի հարկէ, այստեղ աշխատելով բաւականութիւն պիտի զգար:

Ես ուշագրութեամբ գիտեցի դաֆնիներն ու մրգենիներն: Եյս գեղեցիկ բոյսերը պատահամբ չէին ընկել այսոտեղ, նորա ընտրած էին մնձ ճաշակով: Միթէ նորա չեն ներկայացնում փառքի և սիրոյ նշանաբանը:

Հազիւ ես՝ քաղցր խորհրդածութիւնների մէջ խորասուլւած, մտածում էի դ-ր Գառովի այս երկու գեղեցիկ գերիների մասին, որ լոեցի միջանցրով մօտեցազ բայլերի ձայն: Լսեցի նաև երեխայի ձայն և մետարսեալ հագուստի խշխոց և մի բանի խօսքեր, որոնք ես որոշել չկարողացայ, բայց զորա 'ի հարկէ սիրոյ խօսքեր էին...

Ի՞նչ զօրեղ կերպով ես տրամադրւած էի գէպի այդ բժիշկը, թէն գեռ չէի տեսնել նորան:

Մի բոպէ և ես արդէն նստած էի նորա առաջ... նա շասաց ինձ ոչ մի խօսք, միայն պլուխ տւեց, ժպտաց և էլի ժպտաց...

Ժպիտը չէր հնանում նրանից, բայց իւրաքանչիւր բոպէ փոխւում էր և զառնում մերթ հարցական, մերթ բաջալերող և մերթ յոյս տւով: Դ-ր Գառովը ինձ արդէն շատ բան ասաց, թէն գեռ մի խօսք էլ չէր թոցրել բերանից:

Ես հէնց խկոյն զգացի գէպի նա միծ հաւատարմութիւն. բայց խօսում էի բիշ, որովհետեւ նա ամեն բան մի անգամից էր հասկանում: Նորանից շհեռացող ժպիտը բաջալերում և թէն էր տալիք ինձ: Ես կրծատեցի իմ խոստովանութիւնն և թողեցի բոլոր աւելորդն ու անալորդը: Երբ ես նորան պատմեցի ինձ ձանձրացնող հիւանդութեանս պատմութիւնը, զգացւած էի այդ մարդուց. նորա բարութիւնն և ուշագրութիւնն այնպէս ներգործեցին վրաս, որ ես ոչ ցաւ ոչ էլ զայրովթ էի զգում:

Ես ըեղ մի բան էլ ասեմ գ-ր Գառովի մա-

սին... երբ հս խօսակցում էի նորա հետ, նա
երիտասարդ էր թւում ինձ, շափապանց երի-
տասարդ մի անուն հանած բժշկի կոչման հա-
մար և այդ անախորժ զիւուր մի անգամից ստի-
պեց ինձ վերջացնել իմ պատմութիւնն և ես
սովորաբար իմ առաջին յափշտակութեան աղ-
դեցութեան տակ հարցրի.

«Ներեցէք, դուք խսկապէս դ-ր Գառնի
էք»:

— «Ձեր ծառան, տիրուհի, սկատառխա-
նեց նա և յետոյ ցած ծիծաղելով՝ հարցրեց
ինձ. — Իսկ ինչու դուք կասկածում էք»:

«Ներեցէք, բայց դուք իմ աշքին յանկարծ
այնպէս ջահիլ երեացիք, որ հս կասկածեցի
թէ վինի՞ դուք դ-ր Գառնիքի օգնականն էք»:

Նա ծիծաղեց, երեի չողոքորթւած իմ
խօսքերով. յետոյ պոկելով մի մըզենու թեր-
թիկ, շփեց մատների մէջ և սկսեց հոտոտել
բաւականութեամբ. Այդ մարդն անշուշտ ան-
պառաքուն և բրիտանացի չէր. նա ուժանական
ծագումից էր և պատահմամբ ընկել էր մառախ-
լապատ Անգլիա: Նրա մազերը խիտ և ու-
էին, ճակատը բարձր, արծւարիթ և մորթը
թուխ. դէմքը պարապմունքներից խոնջացած

և խիստ կենդանի էր, որ երբեմն ցնցւում էր
թեթև գողով:

Յետոյ նա բոլորովին ուշագրութեամբ
կարդաց այն ղիազնօզը*), որ իմ նախկին
բժիշկներն էին կազմել, մի քանի հարցեր
տւեց ինձ շտապով — ոչ թէ նրա համար որ
ոչ մի բոպէ ինձ երկխովի մէջ չմոռնի — նախ
քան ես կարողացայ նստել և նա հարթեց իւր
մազերը, որոնք խառնել էին կրծքին ականչ
զնելու ժամանակ:

— «Օ՛, ոչինչ ծանր բան չկայ, նայն իսկ
ամենափոքը ծանր բան չկայ, դուք կառողա-
նաք անկասկած, բոլորովին կառողանաք:

Յետոյ, կարծես թէ իւր սկատականու-
թեան ամենածանր և ամենանշանաւոր մասը
կատարած լինելով, նա հանգիստ նստեց իւր
աթոռի վրայ, պոկեց գաֆնի մի թերթիկ և,
ինչպէս առաջ, տրորեց մատների մէջ:

— «Այն, ողորմած տիրուհի, դուք կառող-
ջանաք և շատ շուտ: Դա ամենաշականն է,
որ ես պէտք է ասեմ ձեզ: Հաստատ համոզ-

*) Διαγνοετ—հիւանդութիւններ ճանաչելը խրեանց նշան-
ներով:

Ծան. քարգ.

ւած եղէք, որ զուք կառողջանաք, ուրեմն
հանդիստ և ուրախ սպասեցէք մինչև համելք
նորան: Ինձ թւում է, թէ զուք ունիք կամքի
մեծ ոյժ, հարուստ օժտւած էք այն բարոյա-
կան յատկութիւններով, որոնք զբանով չեն
գնուում և չեն բազում գրքերից, բայց որոնց
չեռին թեթևանում են, ինչպէս անձնական,
նոյնպէս և ուրիշի տանջանքները: Ակսեցէք
ձեր գործն այսպէս, ամենից առաջ հեռացրէք
ձեր հիւանդութիւնից այն շարիքը, որ ծագում
է ապագայի երկիրդից. յետոյ... յետոյ գնացէք
Մագերա և միայն Մագերա: Առաւօտեան ես
նամակ ստացայ իմ մէկ հիւանդից, որն ահա
արգէն հինգ ամիս է, որ ապրում է Փունդա-
լոյում. այդ նամակն ինձ շատ ուրախացրեց:
Նա ամեն օր արին էք թքում, իւրաքանչիւր
երեկոյ տարացնում էք և, նկատելի կերպով,
նիհարում էք. իսկ այժմ նա այլ ես զերմ չու-
նի, արիւն չի թքում և, զրում է ինձ, որ
սկսել է լցւել: Նա երջանիկ և գոհ է, որ զնա-
ցել է Մագերա:

Ես գիտեմ շատ վէպքեր, երբ հիւանդու-
թիւնը ձերինից աւելի ծանր կերպարանը է
չիւանդ ուր:

Ստացել և սակայն հիւանդներն առողջանում
են հէնց միայն շատ կամ ըիշ ժամանակ մնա-
լով Մագերայում, ծաղիկների այդ զրախտում:
Եթէ զուք կիճուէք ուղերդել այնտեղ, ես
կամ ձեզ իմ խորհուրդներս զրաւօք կերպով,
քանի որ Փունդալոյում զնուք ձեզ պէտք է
բժշկէք... Կտամ ձեզ նաև յանձնարարական
նամակ մի անգլիացի լաւ բժշկի վրայ, որ իս
բարեկամն է. բայց ձեզ պարզ կատեմ, զուք
մենակ չպիտի գնաք Մագերա, այլապէս զուք
չէք կարող այնտեղ առողջանալ... Մենք, տղա-
մարդիկս, բաւական հոսակը ենք. մենք կարող
ենք մենակ ապրել, ոէրը գէպի կեանքը կա-
րող է լիովին բաւականացուցիչ կերպով փո-
խարինել մեզ համար ամեն տեսակ հասարա-
կութիւն և լցնել մեր կեանքը. բայց զուք,
Եւայի աղջկերք, չէք կարող տանել միայնու-
թիւնը. զուք կմեռնէք ձանձրոյթից նոյն իսկ
Փունդալոյի գեղիցիկ երկնքի տակ... Աստուած
ձեզ ստեղծել է, որպէսզի զուք կազմէք ընկե-
րութիւն մարզու հետ. Եթէ զուք ընկեր չու-
նիք, չէք կարող կատարելապէս բաւականու-
թիւն ստանալ երջանկութիւնից...»

Գ-ր Գառւգն ինձ աւելի շատ բան էք

ասում ժպիտով և ձեերով, բան թէ, խօսքերով և, երբ մենք նորից կհանդիպենք ևս կըպատմեմ ըեղ բառ առ բառ մեր բոլոր խօսկութիւնը: Նա իւր վարւութեամբ ներծնչեց իմ մէջ այնպիսի հաւատարմութիւն, որ ես վճռեցի անմիջապէս մօտենալ խնդրի ամենափափուկ մասին...

Ես, բոլորովին կարմրելով, հարցրի նորան. «Կարնդ եմ ես արդեօր, առողջանալուց յետոյ, առանց կասկածելու ապագայի համար և աներկիւզ, ամուսին և մայր դառնալ, շյանդրդնելով սահմանալ թորախտոտ սերունդ»:

Յանկարծ ժպիտը կորաւ բժշկի երեսից, սակայն մի բռպէ, միայն... Յետոյ նա նորից երեաց նորա ըմբունքների վերայ, և այս անգամ արդէն աւելի լուրջ. Նրա մէջ այլ ևս նկատելի չէին հոգեկան պարզութեան այն հետքերը, որոնք մինչև այդ ժամանակ ինձ այնպէս բաջալերում էին.

Ամենամեծ ուշապրութեամբ և խորը համակրանքով հետևելով այդ մարդու իւրաքանչյւր շարժումներին, ես նկատեցի մի ամպ, որ մի բռպէ պատեց նրա ուրախութեան արեգակն և իսկոյն հասկացայ, որ իմ հարցը նրա

մէջ ծանր յիշողութիւններ զարյթեցրեց: Նա թեթև կերպով հառաչեց և ասաց մրգովուած ձայնով:

— «Օ՛ ինչու չէ: Երբ ձեր առողջանալը բալորովին հաստատ կլինի, երբ դուք կտաք կարելապէս կառողջանար, դուք, 'ի հարկէ, կարող էք և մայր լինել. դուք ազնիւ և անկեղծ սիրտ ունիք, որ գիմում էք ինձ այդպիսի հարցով... Զեր հիւանդութեամբ բոլոր տանջւողները, որոնք զեռ ես երիտասարդ ու անպսակի են, պէտք է զիմեն իւրեանց բժիշկներին խորհուրդ հարցուի հարցնելու, բայց նորա այդ միշտ մոռանում են...»

Յետոյ նա նորից աւելի խորը հառաչեց և ծածկեց ձեռքերով իւր ազնիւ դէմքը...

— «Մարզս շատ հսառէք է: Նա չի մտածում այն կեանքրի մասին, որ տալիս է իւր սերնդին ես ճանաչում եմ շատերին, որոնք մի ինչ որ թերամիտ ունայնութեամբ կամենում են ողջ աշխարհին ցոյց տալ, թէ իրենք կարսդ են հայրեր և մայրեր լինել. Նորա մօտեցնում են ընտանիքները գերեզմանին և ոչընշացնում են նոցա զոհելով իւրեանց խելացնորմերնեայութիւններին. իսկ իւրեանց որպոց ժա-

ռանդութիւն են թունում հիւանդութիւններ
և տառապանք»:

Դ-ը Գառւգը կարծես այժմ աւելի ինքն
իւր հետ էր խօսում. բայց ինձ նայելով, նա
խիզն նկատեց, որ իւր վերջին խօսքին ինձ
համար գանակի հարւածներ էին. նա զզաց և
յանկարծ, ընհատելով զրոյցը, շարունակեց ար-
դէն բոլորովին ուրիշ ձայնով:

—«Յամենայն դէպս, այժմ այդ մասին
խօսելն աւելորդ է: Դուք, ՚ի հարկէ, դիտառ-
ութիւն շունիք այսօր կամ վաղն ամուսնանալ,
դա մեծ անզգուշութիւն կլինէր... Զանացէք
առողջանալ, հաստատ վճռեցէք այդ և դուք
առողջ կլինիք»:

Խորը վրգովւած ես վեր կացայ, արդէն
վճռած լինելով Մագերա գնալ:

Ես այլիս ոչ մի խօսք չեմ զրի քեզ: Մենք
պայմանաւորւել էինք ուժ օր շտեմանել և ժա-
մանակամիջոցը լրանում է: Ջուտով ես կհան-
գիպեմ քեզ այն բերկրալի զգացմունքով, որ,
դէպի քեզ ունեցած սիրոյն համար, ես մի զոհ
բերի և ուրախութեամբ կասեմ. «Քո էմման
վճռեց Մագերա ուղեսորւել, քո էմման հնա-
գանգւեց ամբողջ ամիսներ և տարիներ քեզ

շտեմանելու անհրաժեշտութեանիր, քո էմման
ուզում է ամեն բանում և միշտ քեզ հնազանդ-
ւել, բանի սր նա ապրում է քեզ համար և
առանց քո սիրոյ նորա համար զոյութիւն ու-
նին միայն յուսահատութիւն և մահ:

Մնաս բարեաւ, Վիլեամս: Քո ցանկու-
թիւնը կատարւած է. բրիտանական գիտութեան
երեք լուսատուների հետ ես խորհրդակցեցի:



Էմման Վիլեամին

Լոնդոն. չորեքշաբթի առ. Ժ. 11.

Առաւտեան ես մի գիւտ արեցի, որի
մասին անյապաղ պէտք է յայտնեմ քեզ, որով-
հետեւ չեմ կարող սպասել մինչև վազը, քո
գալուն:

Առաջ ես արտազրեցի իմ նամակը, որ երե-
կոյեան զրել էի քեզ և գրեցի քո նամակների
մէջ, ինչպէս որ այժմ միշտ անում եմ՝ իմա-
նալով, որ զու ես այգալէս ես անում: Ցետոյ,
բազմոցի վրա պառկած, ես թերթում էի այդ
թղթերը, որոնք ինձ համար ամենից թանկա-
գինն են աշխարհիո վերայ և բաւականութիւն

էի զգում համազելով, որ իմ մտքերը սերտ
կերպով հիւառում են քնի հետ։ Նամակներից
մանուչակի հոտ էր բռւրում, որը դու սիրում ես։

Այժմ երեակայիր, սիրելի Վիլեամ, քո և
իմ նամակներիցս մի քանի երես կարգալով,
ես գտայ, որ երկուսս էլ միատեսակ ոճ ունինք
և, մինչեւ անզամ, շատ գործ ենք ածում միե-
նոյն դարձւածները, նման առարկաները հառ-
կացնելու համար. այնովէս որ մեր գաղտնիք-
ներին անծանօթ մէկն, ելթէ կապած աշքերով
մերթ մէկ, մերթ միւս նամակի ընթերցումը
լսի, չի կարող գուշակել թէ երկուսիցս որը որ
նամակն է գրել։

Ես իսկոյն կամեցայ հաստատել իմ գիւտի
ճիշտ լինելն և խելագարի նման թուայ այն
սենեակն, ուր մօրաբոյր Աննան նստած էր և
գրագ եկայ, որ նա չի կարող գուշակել՝ թէ
մեզանից ով է գրել այն տողերը, որ ես նո-
րան կկարգամ մինչեւ որ նա չնայի նամակնե-
րին։ Բարի մօրաբոյր ծիծաղեց և ուրախու-
թեամբ նամածայնեց այգախոի փորձին։

«Ես կկարգամ մի որեէ քան Վիլեամի և
իմ նամակներից, իսկ դու գուշակիր թէ մեզանից
ով է գրել»։

— Լաւ, սկսիր։

Ես կարգացի կէս երես։

«Այս ով է գրել մօրաբոյր»։

— Եմման։

Ես սկսեցի ծիծաղել խելագարի նման։

«Ոչ, այս Վիլեամն է գրել։ Իսկ ով է գրել
այս նախագասութիւնը»։

— Դէ, ի հարկէ Վիլեամն, այդտեղ կառ-
կած չկայ։

«Ո՛չ, մօրաբոյր Աննա, այդ նախագասու-
թիւնն իմս է»։

2որս անգամ ես կրկնեցի այս փորձը՝ խո-
րամանկութեամբ ընտրելով այնպիսի մտքեր, որ
երկուսիս համար ընդհանուր են և մօրաբոյր
Աննան միշտ շփոթւում էր իւր գուշակութիւն-
ների մէջ։

Այսպէս ուրեմն, սիրելի Վիլեամ, զիւտը
ոչ միայն արւած է, այլ և, ինչպէս սովորա-
բար դու ես ասում, հաստատած է փորձով։
Բայց մեր երկուսից գովզ ով է։ Ո՞րն է մեզա-
նից ստեղծազն և ով համեստ հետհազը։

Ճուտով պատասխանիր իմ հարցին։ Գու
զիտես, որ մենք պայմանաւորւել ենք շտեռնեւել
մինչեւ փազը, ուստի ուզարկում եմ քեզ մօտ

Զօնին. Նա կսպասէ նախառհեակում մինչե
դու կտաս նորան այս հանելուկի վճիռք:

Ողջ լեր, Վիլհամ: Մեզնից մէկը գող է,
աշխատիր գտնել նորան:

Մնաս բարեաւ. անխալազ պատասխանիր:

Վիլեամը Էմիմային.

Լոնգոն, չորեքշարթի, 1 ժամ կէսօրւայ.

Գողութիւնն ակներս է, լժանկադին էմմա,
բայց գողը գտնել անկարելի է: Ես ու գու
իրարից գողանում ենք մտրեր, դդացմունքներ
և խօսքեր, բայց գողը չկայ. մենք վերցնում
ենք այն, ինչ որ վազուց արդէն մեզ էր պատ-
կանում: Ես ափսոսում եմ, որ այդ զիւտի ու-
րախութիւնը խորում եմ բեղանից, սակայն նա
իմն է, լոտ օրինի առաջնութեան: Դեռ սրա-
նից մի քանի ամիս առաջ, երբ մենք սկսեցինք
թղթակցել, ես նկատեցի, որ մեր ոճը միա-
տեսակ է և, որ մեր ձեռքերն իրար են հան-
դիպում մինչն անկամ այն ժամանակ, երբ մենք
թերթում ենք բառարանը:

Բայց տաս ինձ, սիրելիս, երբ ես սեղմում
եմ րո ձեռքն և րո աշերի խորն եմ թափան-
ցում, մեղանից որն է գողանում միւսի հոգին.
Ես իմ հոգին չեմ կարող գտնել և կրծքիս մէջ
զգում եմ րո սրտի բարախումը:

Երբ մենք երկար խօսակցում ենք, մեր եր-
կուսից ով է հարցնում և ով պատասխանում:

Եւ երբ մենք միասին նայում ենք աստղե-
րին և մտքով մոլորում ենք երկնակամարի ան-
սահման վրանի մէջ, մեղանից որն է առաջար-
կում միւսին ձեռքն և օգնում նորան իջնել
երկիրը, ով է առաջարկում և ով է ընդունում
անրացատրելի հրճւաներով:

Եւ երբ մենք տեսակցելիս, լիացած սիրով
և ուրախութեամբ, զգում ենք մեզ մի բարձր
մթնոլորդում, մեղանից որն է տալիս այդ ոչ
երկրային երջանկութիւնն և ով ընդունում:

Ֆիղիթօթպներն յաճախ զիտել են, որ սի-
րահար ամուսիններն իրար հետ երկար տարի-
ներ ապրելուց յետոյ իրար այնքան նման են
լինում, որ նրանց աւելի շուտ եղբօր ու բրոջ
տեղ են ընդունում, քան մարդ ու կեզչ: Միե-
նոյնը չպատահեց և մեզ:

Եւ այդ գոզավթիւնն երեսում է բայց զողը
գտնել անկարելի է:

Էմման չունի իր սեպհական մտքերը, պրով-
նետե Վիլեամը մտածում է այն, ինչ որ էմ-
ման, որովհետեւ մենք երկուսս էլ ունինք միե-
նոյն ուրախութիւնը, միենոյն վիշտը, միենոյն
միտքը, մի հոգի...

Ահա քո հանելուկի լուծումը:
Ուրեմն ցանութիւն:

—————

Վիլեամը էմմային

Լոնդոն, կլաբակի.

Դու յաճախ ասում էիր ինձ, իմ թանկա-
գին էմմա, որ մենք միշտ նոյնանման մտքեր
ունինք և որ, եթէ ես բացատրում եմ քեզ իմ
մտքերն, ապա ինչըտես էլ նորա նոր և անսպա-
սելի լինին, դու անմիջապէս հասկանում ես
այդ բայրն և քեզ թւում է՝ թէ ինք էլ վա-
զուց այդպէս էիր մտածում: Եւ դու նշ միայն
հասկանում ես այդ բայրն, այլ և միտք ես
պահում: Եթէ այդ ճիշտ է, եթէ քո սրտի
երիակայութիւնը չի սաւառնում ուրախանին-

ը աշխարհում, ապա դու պէտք է ինձ համ
ման դաս կատաղի ծովի վրայ, կուես սոսկա-
լի փոթորկի դէմ և անզօր, թէկ զւարթ, զառ-
նաս միսիթարութեան իջևանը:

Լուր ինձ, թանկագին էմմա, վերցրու քո
ցածրիկ կապոյտ ամոռոք, որի վրայ սովորաբար
նստում ես, երբ ես գիմացդ կանգնած նայում
եմ քեզ և կշտանում քո հայեացրի լուսով, զիր
ձեռքերգ այնպէս, որ մէկն իմանայ այն ինչ
որ միւսն է զգում և լսիր ինձ:

Երեկ առաւտեան ես արթնացայ հոգու
վատ տրամադրութեամբ: Ինչո՞ւ, չզիտեմ: Որ-
քան մտքերս լարեցի, որքան մտածեցի, չկարո-
գացայ բացատրել՝ ինչո՞ւ ամեն բան ինձ թւում
էր սաւանով ծածկւած: Միրտս կամենում էր
ինձ խարել և հաւատացնել, որ իբր թէ ես
տիսուր եմ նորա համար, որ երեք օրից ի վեր
քեզ չեմ տեսել. բայց իմ ճշմարտասիրութիւնն
ատում էր, որ այդ չէ իմ ձանձրոյժի բուն
պատճառը: Երբեմն պատահում էր, որ ես քեզ
չէի տեսնում ամբողջ շաբաթներօվ, բայց և
այնպէս չէի զգում այսպիսի սարսափելի հոգե-
կան ատնջանք. սա ինձ հետեւմ էր ամեն տեղ
ուր որ ես գնում էի և ինչ բանի որ նայում

էի, պատկերանում էր առաջիս վատ և անախորժ գոյներսկ:

Վերջապէս գնացի այն սենեակը, որտեղ սովորաբար պարապում էմ և ինքո ինձ ասացի. «Եդ ձանձրոյթը մի պարտը է, որը մարզս պէտք է կրէ այս աշխարհում: Ինչպէս որ մարսատանը կնրում են սնտուիներն և տոպրակներն, այնպէս էլ ծնուիլու մեղանից իւրաքանչիւրի վերայ գրւում է մի զրոշմ, որը ներկայացնում է տանջանքների մի շարք և այդ մենք պէտք է ցմահ կրենք, լինի գա սովածութիւն կամ արհամարհանք, ատամնացաւ կամ սիրոյ տանջանք, բնութեան համար այդ մինոյն է, միայն թէ իւրաքանչիւր մարդ հատուցանէր իւր մաքու սառն արցունքներով, ջղաձգութեամբ, լուռ ձանձրոյթով կամ անմիտ յուսահատութեամբ: Լաւ առացի ինքո ինձ, այժմ ինձ մօտ է եկել մարսատան աստիճանաւորն և պահնջում է հատուցանել պարտը և ես կհատուցանեմ անպատճառ: Ոչ երկնքի ժպիտը, ոչ հանճարի շանթը, ոչ կամքի երկաթէ ոյժը չեն կարող հեռացնել մեղանից հօգու այդ վատ տրամադրութիւնը, որը առանց զրգուելու հռում է, հէնց մեր հօգու խորրից:»

Ես մօտեցայ վառարանին. Նա մխում էր: Բարկացած յետ զարձայ և սկսեցի ման զալ անկիւնից անկիւն. ապա մերենաբար կանգնեցի գրեկը գարակներից մէկի առաջ՝ իմ աշրին ընկան իւլինալը և Մարցիան և ես զգացի՝ կարծես թէ կամենալով մանուշակ բաղել ձեռքս գորտ ընկաւ: Արագութեամբ հեռանալով այգտեղից ես կանգնեցի հակառակ կողմի գարակի մօտ, ուր աշրիս ընկաւ չովարտի գրւածքը բանդերի մասին: Ես աշրերս փակեցի, աւելի լաւ համարելով այլիս ոչ մի զիրք շտեսնել և շտապեցի դէպի լուսամուտը: Երկինքը չէր երեւում, թանձր մառախուզը ծածկել էր ամեն ինչ, այնպէս որ հազիւ էի կարողանում մօտակայ պատը որոշել: Եյդ մառախուզի միջից հասնում էին ինձ մի տեսակ ականջ խլացնող ձայներ, մանաւանդ պարզ լուսում էր մանկան ձայնը, որը զուցէ սոված էր, կամ մրսել էր...

Բայց չնայելով այդ բալորին, ես էլի չյուսահատեցի: Դու գիտես, թանկազին էմմա, որ ինձ միշտ գուր է եկել տանջանքն և ծանրութիւնը. ես կամեցայ փշել այն շղթաները, որոնցով կաշկանդել էր ինձ հոգնու վատ տրամադրութիւնը. ես կամեցայ, եթէ արենելան

պատկերաւոր ոճով խօսեմ, պկառորել ծովի
ջուրը գայլի կաթով, որպէսզի ծսվի յատակում
գտնեմ ուրախութիւն...

Եթէ կամենում ես, ինձ յիմար անւանիր,
բայց մի քառորդ ժամում ես կատարեցի հե-
տևեալ երեք զործերը։ Կարդացի բո ամենա-
պարզ և ամենաուրախ նամակներից տասը հատ,
նւազեցի ֆօրտէսպիանօյի վրայ Հտրառուսից չորս
փայլս և աշբի անցրի Կամի կարեկատուրաներն,
ապա նստեցի գրասեղանի առաջ, ձեռս առայ
դրիշը, ինչպէս յաղթական սուր և ոկսեցի ու-
րախ բաներ զրել, կամենալով հաւատացնել
ինձ որ ես արդէն յաղթել եմ։ Ահա ուզարկում
եմ քեզ այն, ինչ որ այդ ժամանակ գրեցի։—

Ո՞րքան զւարթ է երկինքը, որքան ուրախ
է երկիքը։ Իմ շուրջն ամենայն ինչ ժպտում
է և ուրախութեամբ ինձ ձեռք է մեկնում։
Բոլոր մարդիկ իմ եղբայրներս են և սիրում են
ինձ, ես էլ սիրում եմ նրանց։ Որքան հիանա-
լի է կեանքը, որքան գեղեցիկ է մարդը։

Այս, մարդս—կատարելութիւնն է և երջան-
կութիւնն մինչեւ անգամ՝ այնպիսի հաղւագիւտ
բոսպէներին, երբ նորա երեսը ողոգում են դառն

արցունիքները։ Սրցունքներ-միայն ժամանակա-
ւոր փոխսրիկ, որից յետոյ երկինքն աւելի ես
պարզում է, աւելի ես մաքրում։

Խեղգւած ուրախութիւնը նորից դուրս է
գալիս, լացը կտրւում է, բայց դառն արցունք-
ները խորին հետքեր են թողնում լացակումած
դէմքի վերայ, հետքեր, որոնք երբէք չեն ան-
հետանում։ Այն արցունքը, որ չի չորանում
ընկերոջ ձեռքով կամ շրմունքներով, խորը
թափանցում է հենց սրտի մէջ և այնտեղ թող-
նում է հետք, ինչպէս դալար ծառի վրայ ըն-
կած հալւած կապարի կաթիլը։

Բայց ինչն խօսենք արցունքների մասին,
քանի որ մարգս ստեղծւած է ծիծագելու հա-
մար և քանի որ երբեմնական արցունքները
կորչում են կեանքի անվերջ վայելքների մէջ,
ինչպէս ուրախութեան ծովի մէջ։ Ի՞նչ նշա-
նակութիւն ունի մազդի մի կաթիլը հրճւանք-
ների ամբողջ ովկիանոսի մէջ։

Այն, բայց մազդի մի կաթիլին շուտով հե-
տեւում է միւսն, ապա մի ուրիշն և հետզհետէ
աւելի ու աւելի գաւն։ և մարգս զգում է
բաժակի տակ պահւած այդ բոլոր դառնու-
թիւնը։

Ահա, հինգ այդ գառնութիւնն ընկնում է սրտի վրայ, ուր թոփնում է իւր հետքը. նա արեան հետ մտնում է մարդուս օրդանիզմի իւրաբանչւր մասի մէջ և թունաւորում է մարդուն, որը շի կարող իրեն բազգաւոր համարել:

Այս, մարդս բոլորովին անբազդ է... Անվերջ հետեւղ սերունդների գանգատներն, անողորմ բազգից խորտակւած ամենաջերմ և սուրբ ցանկութիւնները՝ վայաժամ հանդած երիտասարդ կեանքի ճնշւած բազմութիւնը, այդ բոլորը բարձրածայն ողբում են — մարդս անբազդ է:

Այս մարդս անբազդ է: Վիշտն ու թախոի ծն է նորա բաժինը: Նա օրհասական օրէնքով միացած է խղճալի կեանքի հետ, որը միաժամանակ թէ ձգում և թէ վանում է նորան.

Նա անկարող է ազատւել շարչարանքներից, նա չունի վճռողականութիւն մեռնելու նչ կամք ապրելու համար. Նա զգացմունք ունի նրա համար, որ զօրացնի իւր վիշտը, նա խելք ունի նրա համար միայն, որ լիովին հասկանայ իւր բոլոր շարչարանքների անհունութիւնը: Հիւանդ ուր:

Միարը բաշում է նրան գէպի բարձր միջնորդը, սակայն ծանրաբեռնած մարմինը թոյլ չի տալիս նրան երկրից վերանալու. սիրտը ձգում է զրկել անզրկելին, սակայն մի ինչ որ երկաթեայ ձեռք սեղմում է նորան:

Մարդս ամենաանկատար, ցաւալի և չնշին արարածն է ամբողջ տիեզերքում:

Այստեղ, թանկագին էմմա, զրիչն ընկաւ ձեռքիցս: Մի քանի բողէ առաջ ես վերցրի նորան յաղթութեան կատարեալ յուսով, սակայն այժմ խոստովանում եմ, որ յաղթւեցի:

Դա ծանր էր ինձ համար, բայց ես ցաւ չէի զգում, որովհետեւ կուրը բարձրացնում է մարդուն, եթէ մինչև անզամ յաղթութիւն էլ չըերի: Նա է միայն արժանի արհամարհանքի, ով որ զուրո չի գալիս կռւելու և առաջուց խոստովանում է իւր պարտութիւնը:

Ես մտածում էի, որ մի օգտակար և լաւ բան արի նրանով, որ իմ վիշտն ենթարկեցի մտրիս և թղթի վերայ արտայալեցի:

Գուցէ, ասացի ինքս ինձ, իմ էմմային զերեցիկ թւան այս մտքելն և այն ժամանակ ծանր տրամադրութիւնն անպայման շարիք չի պիտի համարել:

Մարդու հասկանում է իւր արժանիքն այն-
քան աւելի զօրեկ կերպով, որրան աւելի շատ
իր ազդեցութեան տակ է բցում շրջակայքը.
Նա բարձրացնում է իրեն, եթէ գնում է բոլոր
այն բաների վրայ, որոնք իրենից գուրս են
գտնուում, լինին գորա ախորժելի թէ անախորժ
իր անհատականութեան պայծառ կնիրը:

Չհայելով այդ կուին, ծանր տրամադրու-
թիւնն յազթեց ինձ, բայց և այնպէս ես կուե-
ցի նորա հետ և տւի նորան անհատականու-
թեան ձև, փոփոխեցի մտքում:

Ներիր իմ եսականութեանը: Ամբողջ օր-
ւայ ընթացքում իմ բոլոր մեծ ջանքերից յե-
տոյ վերջապէս, ձանձրոյթո փոխւեց մելամադ-
ձոտութեան, իսկ մելամագձոտութիւնն այնքան
խիստ չէ, որքան ձանձրոյթը. և ահա թէ ինչ
զրեցի ես նորանով ներշնչւած.—

«Տուր ինձ ձեռքի, ով ուր. թոյլ տուր ինձ
զգալու ըստ մօտիկութիւնը. կեանքի փոխորիկն
ինձ վախեցնում է: ես չեմ կարող տանել մի-
այնութիւնը:»

«Իմ հայեացքը համարձակ ուզգւեց զէպի
ճշմարտութիւնը. ինձ համար այլիս զոյտութիւն
չունէին ծածկւած գաղտնիքներ. ես կամեցայ

բաց անել ամենաշնչին արարածների հրաշա-
լիքներն և հպարտութեամբ կարծում էի, որ
բաց եմ արել արարչագործ բնութեան գաղտ-
նիքները. բայց մի տեսակ մշուշ պատեց աշ-
քերս և ես այլիս չկարողացայ տեսնել: Տնտք
ինձ ձեռքի, ով իմ սէր, ես չեմ կարող տանել
միայնութիւնը:

«Իմ հայեացքը հեռացաւ երկրից, ուր նա
իզուր տեղը որոնում էր միսիթարութիւնն և
յառաւեց զէպի երկնակամարը. ես անմտութեամբ
կամեցայ շափել տիեզերքի սահմանները, սա-
կայն բազմաթիւ արմեների փայլը կուրացրեց
աշըերս և ես այլիս ոչինչ չէի տեսնում: Մեկ-
նիր ինձ ըստ ձեռքի, ով սէր, ես չեմ կարող
տանել միայնութիւնը:»

«Իմ ձեռքս համարձակ ընկաւ այն տեղ, ուր
բնաւթիւնը, փաթաթւած իւր հրաշալի ծած-
կոցով, պահում է իւր տմենամեծ գաղտնիք-
ները, ուր կեանքը, գուրս զալով մահւան աւե-
րակների միջից, ստիպում է մեզ զգալ իւր
զարկերակի առաջին հարւածը: Բայց իմ եր-
կաթեայ ձեռքավ ես խեցգեցի և ոչնչացրի փա-
փուկ սաղմն և այլիս ականջիս չհասաւ կեան-
քի և ոչ մի զարկի ձայնը: Դիր ըստ ձեռքը

ճակատիս վրայ, ով սէր և հանդցրու այն
կրտկը, որն այրում է նորան:

«Եւ ուր էլ որ գարձեռում էի հայեացրս
ճշմարտութիւնը որոնելու և կեանքի գաղտնիք-
ները հետազօտելու նպատակով, ամեն տեղ ճա-
նապարհները փակւած էին ինձ համար:

«Տնիր ինձ ձեռք, ով սէր, որ ես զգամ
բո ժօտիկութիւնը. ես չեմ կարող տանել մի-
այնութիւնը:

«Իմ սիրով խօսեց և բաց արեց իմ տռաջ
նոր հորիզոններ ուրախ ափերով և ծաղկազարդ
գաշտերով և ես բաց արի վիրկս, որ սեղմեմ
այդ զբախտն այրուած կրծքիս...

«Բայց տուր ինձ ձեռք, ով սէր, ամուր
սեղմիր իմը, որսինետի հինգ մի լիշտութիւնն
էլ գրա մասին ինձ վախեցնում է և ես չեմ
կարող տանել միայնութիւնը:

«Բայց ինչնև բաց անենք այն վերը, որ
արդէն մի քանի օրից ի վեր ծածկւած է:

«Զարարաստիկ կռիւր, որ յառաջացել է
հոգուս մէջ և մտքի հարւածը, տալիս են հե-
ռաւոր արձագանք, որ, կարծես, գուրս է գա-
լիս իր վրէժ մեր հապատութեան համար,
բայց տիրութիւնն և տրտմութիւնը նոյնպէս

տալիս են սրտին իրենց արձագանքը, որը չի
անյայտանում ժամանակի ընթացքում և միշտ
յիշում է մեծ վշտով:

«Դիր ձեռքդ սրտիս վրայ, ով իմ սէր և
շափաւորիր նրա մրկալից հարւածները. թոյլ
տուր ինձ իմանալ, որ ես վերջապէս մենակ
շիմ այս աշխարհում»:

Երեկ երեկոյեան տանջւում էի այն մորով,
թէ ինչպէս փոխեմ ծանր դրտնթիւնս զեղեցիկ
և օգտակար բանով:

Բնութիւնը մեզ թոյն է տեկ, որ արեազար-
ձային վայրի խոտի նման է, իսկ մարդը նրա-
նից գեղ պատրաստեց սլողակրայի (յօդացաւ)
համար:

Սյդպէս հարկաւոր է և բարկութիւնն,
ատելութիւնը, հոգու ծանր տրամադրութիւնը
փոխել մի ոյժի, որը բարձրացնում է անհատին
ամբոխի միջից: Ինչպէս որ դառն եղեսպակը
քիմիայի միջոցով դառնում է բժշկական դար-
ման, այնպէս էլ տիրութիւնը, կամքի օդու-
թեամբ, պէտք է դառնայ մի զեղ, որը բու-

ժում է ամբոխի կատաղի զայրոյթն և հանճարի մէջ երեցած մելամաղձոտութիւնը:

Հանգիստ քունը ցրւեց իմ հոգու վատ տրամադրութիւնն և ոյժերի փոփոխութեան ցնորքները, այժմ ես զրում իմ ժպիտն երեսիս, անհուն հրճաներով նայելով կապոյտ երկնքին:

Մնաս բարով, հաղար անգամ մնաս բարով:

Վիլեամի թղթերի մէջ, 'ի միջի այլոց, ես գտայ և մի թերթ առանց թւականի, որի մէջ կային հետեւել նկատողութիւնները:

«Ես բաց արի բերանս չնշելու դարնանային օդը, լի ախործելի բուրմունքով, և ես զգացի, որ այդ օդը շփւեց իմ էմմայի փափուկ շրթունքներին:

«Ես քաղեցի մանուշակ, որի անուշ հոտն անցաւ սրտիս խորքեն և շարժեց նորա ամենազգայուն լարերն և ինձ թւում էր, որ իմ էմման այստեղ, ինձ մօտ է:

«Ես հայեցրս ուղղեցի գէափի կապոյտ երկնակամարն և ինձ թւում էր, որ այնտեղ խաղացող նոսր ամպերը կապոյտ ֆօնի վրայ զրում էին իմ էմմայի անունը:

«Ինրու իմ մէջ, իմ յիշողութիւնների և յոյսերի մէջ ես ոչինչ չկարսղացայ գտնել, բացի քեզանից և ամեն բան, ամենայն ինչ նկարում էր իմ մէջ էմմայիս պատկերը: Մինչի անգամ իմ տրւեստանոցի գործիքներն, իմ պատկերները, զրբերս, այդ բոլորն ինձ երեսում էին իբրև հայելի, որի մէջ ցոլանում էր միմիայն էմմայիս պատկերը:

«Թէ իմ մէջ և թէ ինձանից գուրս, թէ հոգու և թէ նիւթի թագաւորութեան մէջ, թէ ուրախութեան և թէ վշտի մէջ ես տեսնում և զգում էի միայն մի բան—իմ էմմային:

«Սուանց նորան ես ոչինչ իմ. մեր երկուսիս կեանքը կազմում է մի ամբողջութիւն»:

Էմբան Վիլեամին

Լոնդոն, յուլիսի 17-ին 18...թ.

Ուրեմն իմ անգին Վիլեամ, յանուն մեր ոիրոյ, մենք պէտք է բաժանենք իսարից: Ես զնում եմ Մագիրա, իմ ծերունի բժիշկը նոյնական համաձայն է այդ բանին:

Մի բանի տարի է արգէն, որ նա բնակ-

ւում է հեռու աշխարհից, Բրոժպտոսի մօտ
եղած իր կարւածքում: Երեկ մօրպրոցս հետ
գնացինք նրա մօտ: Վաղուց ես նորան չէի
տեսել, բայց Անհայի միջոցով նա ամեն բան
իմացել էր: Նա, ինչպէս զիտես, մեր խոր-
հըրդակիցն է բոլոր նշանաւոր գիտւածներում.
Նրա մէջ գեռես ապրում է իմ հօր հոգու և
կեանքի մի մասը: Ես չիմ կարող նայել նորան
առանց արցունեքների և երբ նա սկսումէ խօսել
ինձ հետ իրեն յատուկ հանգարտութեամբ և
մտերմութեամբ, ես սաստիկ յաւլում եմ: Այժմ
նա 80 տարեկանից աւելի է, բայց նա չունի
ծերութեան թուկութիւններից և ոչ մէկը,
որնք ծերունիներին անհաճոյ են գարձեսում,
մեր մէջ զալրոյժ են յառաջացնում գէպի նոցա:
Տարիները նորա մէջ ներշնչեցին միայն անհուն
ներողամտութիւն գէպի մարդկանց թուկութիւն-
ներն ու սխալներն և յաւիտենական ժպտի
կնիրը գրօշմեցին նրա գէմքի վրայ:

Մօրաքոյրո՞ Անհան ասում է, որ նա միշտ
ծիծագում է, մինչև անգամ երբ քնած է: Նրա
երկար, սպիտակ մազերը խնամքով սանդրւած
էին, իսկ լիբը, կոլոր գէմքը սիրուն ածիլած
էր. նա կարծես Թրանկլինն է:

Երբ մննք Բրոժպտոսն վնացինք, նա շատ
զբաղւած էր իր պարտիզում, ուր կազկապում
էր վարդի թէփերը: Ինձ տեսնելով նա շտապեց
գէպ ինձ և գրկեց, ինչպէս հարազատ աղջկան,
ապա մեղ տարաւ իւր աշխատոթեան սեն-
եալին և, գիմացս նստելով, երկար պահեց իմ
ձեռքն իր ձեռքի մէջ, չհեռացնելով աշքերին
ինձանից և չկարսպանալով ոչինչ տսել բացի,
«Միր էմմա, մեր բարի էմմա» խօսրերը:

Ես մաներամանօրին պատմեցի նորան իմ
այցելութիւնները Բրիտանական բժշկականու-
թեան աստղերին և նա մի քանի անդամ
ժպտաց:

— Այն, այն, իմ բարի էմմա, զուր պէտք
է գնաք Մագերա և այնտեղ մնար ամենատ-
րիչը երկու, երեք տարի, որ բոլորովին առաջ-
շանար: Այն ժամանակ կվերագառնաք Անգլիա,
փորձելու ձեր առողջութիւնն և եթէ երկու
ձմեռւան ընթացքում ոչ մի հազ ոչ մի բոր-
բորում չունենար և եթէ մնենք ողջ մնանք տես-
նելու այդ սակարների վրայ մի քիչ ճարպ ու
միս, այն ժամանակ էմման կարող է վերջին
անգամ խստավանել ծերունի բժիշկ Թովմասի
մօտ, որը նորա բոլոր մեզքերին թողութիւն

կտայ և թսլլ կտայ նորան մարդու գնալ Վի-
լեամին; Համաձայն ես:

«Ո՞չ թանկագին բժիշկ, հրանի մէջ ձեր
խօսքերը լինէին իսկական ճշմարտութիւն և
իմ խեղճ հայրը կարողանար լսել այդ բոլորը»:

— Ձեր հայրը լսում է մեզ և եթէ եռ
ասում եմ ձեզ նորա անունով «Ամուսնացէք
Վիլեամի հետ», այն ժամանակ գուք կարող
էք անել այդ, հաստատ համոզւած լինելով, որ
գուք չէք գրժել ձեր տւած խօսքն և երգումը:

«Բայց անգին բժիշկ, չէ որ ես երգեցի
հօրս առաջ երբէք շամուսնանալ»:

— Ճշմարիտ է սիրելի էմմա, բայց պէտք
է աշրի առաջ ունենալ երգման միտքն և ոչ
թէ բառացի նշանակութիւնը: Եթէ գուք աւե-
լի առողջ լինէլիք և եթէ ձեր կազմւածքն աւե-
լի ես ամուլ լինէր, այն ժամանակ ձեր հայրը
ոչ մի առիթ չէր ունենայ ձեզանից պահան-
ջելու այդ հանգիստաւոր խոստումը: Միթէ նա
ձեզ շասաց, որ գուք պէտք է միշտ ինձ հետ
խորհրդակցէք և կուրօրէն հետեւ իմ խոր-
հուրդներին:

«Այդ ճիշտ է, թանկագին բժիշկ, դրա
համար էլ ես պէտք է միշտ հնագանգւեմ ձեզ,

առանց տատանւելու և առանց որ և է բացա-
տրութիւն պահանջելու»:

Երբէք ես գեռ չէի տեսել մեր բժշկին
այգալէս գեղեցիկ և ուրախ. ես կամեցայ համ-
բուրել նորա հետ: Ես շատ պարզ տեսնում էի,
որ նա երբէք չի ցանկանում միսիթարական
խօսքերով խաբել ինձ, բայց որ նա ինքը հա-
ւատում է իմ առողջանալուն, ամուսնանալուն:
Այդ խօսքերը, որոնք ինձ անմեղ էին թւում,
խորը կերպով շարժում էին սիրտս և ես ար-
գեն ինձ զգում էի դրախտի մէջ:

Բարի ծերունին նկատեց այդ բոլորը. Նրա
աշքերն երկար նայում էին ինձ, նա և լաց էր
լինում և ժպտում:

Սպա նա դարձաւ դէպի մօրաբոյրս հե-
տեեալ խօսքերով:

«Բայց միթէ Վիլեամը կսպասի այդքան
երկար: Արգեօք նա կցանկանայ մնալ այպի-
սի տարտամ կրութեան մէջ չորս կամ հինգ
տարի:»

Այդ հարցին ես, բոլորովին կարմրած,
շտապով պատասխանեցի. «Վիլեամն, ի հարկէ
կսպասի»...:

Արգեօք ես վատ արի, թանկագին Վի-
լեամ, որ բո փոխարէն երաշխաւոր եղայ այդ-
պիսի մի նշանաւոր զործի համար: Ապացուցիր
իմ սուտն, եթէ կամենում ես:

—Ի միջի այլոց պէտք է իմանաք, ծիծա-
ղելով կտրեց խօսքս բժիշկ Թովմասը, որ պա-
րոն Վիլեամը պէտք է ձեզ խօսք տայ, երբէք
չայցելել ձեզ Մադերայում և ձեզ ազատ թող-
նել՝ լիովին անձնատուր լինելու ձեր «եսին»:
բայց ընդհանրապէս զուք «ես» ունի՞ր, որը
պէտք է աշքի առաջ ունենայ միտին ձեր առող-
ջութիւնը: Բայց չէ որ զուք ցանկանում էք
առողջանալ միմիայն նորա սիրոյ համար»:

Ես, բատ սովորականին հաղորդում եմ
քեզ մեր խօսակցութիւնը. բայց հաւատացած
եմ, որ շատ խօսքեր եմ աւելացրել, որոնք
ամենեին չեն խօսւել: Մենք երեք հոգի էինք,
իրար հասկանում էինք կէս նախադասութիւն-
ներով և աւելի շատ խօսում էինք ձենքով ու
ժպիտներով:

«Ես կգրեմ և կուպարկեմ ձեզ Լոնգոն
պէտք եղած հրահանգները, տարէք այդ ձեզ
հետ Մագերա, թող նորա ընտանեկան բժշկի
տեղ ծառայեն ձեզ: Ես կտամ ձեզ և մի յանձ-

նարաբական իմ բարեկամներիցս մէկի՝ զոկտոր
Սոուտի վրայ, բայց զուք նշանակածի համեմատ
կյանձնէք նորան այն ժամանակի, երբ, Աստած
մի արասցէ, ստիպւած կլինէք մահճին դիմե-
լու, թէպէտ յաւառվ եմ, որ երբէք այդ չի պա-
տահի Մադերայի տար և առողջարար օգի մէջ:
Այն բայց, զուք ում հետ պէտք է գնար այն-
տեղ»:

—Ինձ հետ, պատասխանեց մօրաբոյրս՝
Անեան:

Նփսսս որ զու ներկայ չէիր այդ տեսա-
րանին, թանկագին Վիլեամ: Ես կցանկանայի,
որ զու լոէիր, թէ ինչպիսի բարեսրտութեամբ,
պարզութեամբ և սիրով ասաց մօրաբոյրս՝ Ան-
նան այդ խօսքերն—«ինձ հետ»:

Իմ մօրաբրոջ բարութիւնն այնքան բարձր
է, նա այնքան ճշտութեամբ արտայայտում է,
այնքան սերտ կերտով միացած է նորա բնա-
ւորութեան հետ, որ երբեմն անցնում են ամ-
բողջ օրեր, ամիսներ և ես չեմ ունենում ոչ
ժամանակ և ոչ առիթ նորա մասին մտածելու.
Եթէ, ինչպէս վերայիշեալ գէպրում, յան-
կարծ պատահարար բացւում է նորա բարու-
թեան անսահմանութիւնն, այն ժամանակ ակա-

մայ հիանում ես այդ բնաւորութեան վրայ: Իմ մօրաբրոջ բնաւորութիւնը մշտական պարզ երկինք է և միայն նա կարող է գնահատել նրան ով որ իւր կեանքում տեսել է մէզ, անձրեւ ու մրրիլ:

Դոկտոր Թովմասը նոյնպէս խիստ զգացւած էր այն ձեզ և պարզասրտութիւնից, որով մօրաբրոյս՝ Աննան արտասանեց այդ երկու խօսքերն և աւելի ես մեծ ջերմութեամբ ժամանակ առաց նորան:—

—Այս այս... բայց և այնպէս գուր էլի նոյն Աննան էր, ինչ որ էիր 50 տարի սրանից առաջ... մինչև անգամ տարիները չկարողացան ներչնչել ձեզ մի քիչ եսականութիւն— այդպէս էլ կմեռնէք դուք առանց զզջալու:

Դոկտոր Թովմասը բարի և սիրելի մարդ է, բայց նա երբէք չի սիրում ներկայ լինել այդպիսի երկար քնքոյշ տեսարանների:

—Ռւրեմն հարցը վճռւած է, ես ինքո կդամ Լոնդոն ձեզ ճանապարհ րցելու: Դնանք, տեսէք իմ պարտէղը, իսկ գուր, Եմմա, համեցէք իմ նոր ջերմոցն, ես ձեզ ցոյց կտամ այն բոյսերից շատերը, որոնք գուր կտեննէք Մագերայում կտարելապէս ծաղկած բաց երկնքի

տակ, գնանիք: Սրանից 14 օր առաջ ես Բրագիիայից ստացայ Solanum-ի մի տեսակն անսովոր վեղեցկութեամբ: Անգլիայում միայն ինձ մօտ և մէկ էլ հերցոգ Դիվոնչիրի մօտ կարելի է գտնել այդպիսի Solanum:

Մենք էլի մի ժամի շափ մնացինք Բրոմպտոնում, բայց, պէտք է քեզ խոստովանեմ, որ ման զալավ գեղեցիկ և մաքուր ծառուղիներով, գիտելով ջերմոցի տաք օդի մէջ բռնած հազւագիւտ բոյսերն ես մտածում էի միայն քո և Մագերայի վրայ:

Այն նոր կերպարաննը, որը շուտով պիտի ընդունէր իմ կեանիրն, ինձ երազ էր թւում: Յոյսն, երկիւղն, և սէրը զէպի քեզ, ուժեղութեամբ կռւում էին իմ սրտում, և ես, թէ ըստ երեսյթին մասնակցում էի մօրաբրոջս և քժշկի խօսակցութեանը, սակայն, կէս ժամի շափ ոչինչ չհասկացայ գրանից և չկարողացայ ինձ հաշիւ տալ, որտեղ եմ ես:

Չուտով ինձ մօտ արի, թանկազին Վիլեամ, այժմ մենք պէտք է ամեն օր տեսնենք, քանի որ ես Անգլիայումն եմ: Մի փոքր ևս և անա ծովը մեզ կրածանի իրարից ամբողջ ամիսներ ու տարիներ:

իմ Վիլեամ, իմ մի հատը կ Վիլեամ, բո
էմման սպասում է քեզ:

Վիլեամը Եմմալին.

Լոնդոն, օգոստոսի 9-ին 18...թ.

Էմմա, գու խօսր տվիր ինձ, որ կվերցնես
քեզ հետ իմ նամակը, կտանես Մագերա և
այնտեղ միայն կկարգաս: Իմ «եսի» մի մասը
քեզ կառաջնորդի և հէնց որ գու գուրս գաս
ստար երկիր, իմ խօսքն առաջինը քեզ կողջու-
նի: Ինչու ես շեմ կարող հէնց ինքս ինձ մտցր-
նել այդ բաղդաւոր թերթի մէջ, ինչի՞ այն
երեալայութինը, որ ստեղծում է ոգիներին և
ուրաւկաններին, չի կարսկանում ստեղծել
կենդանի մարմիններ անտեսանելի հոգիներով:

Ո՞չ էմմա այդ նամակով ողջունում է քեզ
իմ հոգին, նա պատռում է բո շուրջն և ցան-
կանում է, որ այն կղզին, ուր գու սիտի
գեաս, լինէր քեզ համար պարտէղ ու գրախտ.
Նա ցանկանում է, որ Մագերայի հոգը ողոր-
չիւանդ ոէր.

մած լինի գէպի քեզ և տայ քեզ առօղջութիւն,
խաղաղութիւն և ուրախութիւն: Ես կսիրեն
այն կղզին, որ այդպէս անժամանակ խլեց ին-
ձանից իմ էմմային: Իսկ գու հալածեցիր ինձ
բո կղզուց այնպէս, ինչպէս որ Աստւած մեր
նախահայրերին արտաքսեց գրախտից և թոյլ
շտուիր ինձ ալցելել քեզ ընդամենը մէկ անգամ
և այն էլ գոնեա մի ժամ ժամանակով: Դու
թոյլատրեցիր այն բժշկին, որին գու յարգում
ես, տալ քեզ մի այդպիսի խիստ վճիռ, բայց
իհարկէ, հէնց գու ինք ես խոկական դատա-
ւորի և միայն խորամանկութեամբ ծածկում
ես բո բարձր հեղինակութիւնը: Վերջին օրերը՝
մեր նամակների և խօսակցութիւնների մէջ գու
սիրով և զեղարւեստօրին նկարեցիր բո բժիշկ
թովմասի ամենագեղեցիկ պատկերը. գու ցոյց
տվիր ինձ՝ բժիշկ փիլիսոփային, այն մարդու
տիպարը, որի մէջ բարի սիրտը միացած է խո-
րին զիտութիւնների հետ, մարդ, վսիմ զաղա-
փարներով: բայց և այնպէս գու չկարողացար
նրան ինձ վշտակից անել: Ինձ համար բժիշկ
թովմանը մի այնպիսի մարդ է, որը հեռացրեց
քեզ Անգլիայից, իսկ բո Վիլեամին այն աւե-
տեաց երկրից, որտեղ գտնուում էր նրա ամ-

բողջ երջանիութիւնը։ Ես չեմ սիրում, ամենին չեմ սիրում քո Փրանկլինին բժշկական չարերով, բո՞ այդ գոկտոր Թովմասին։

Բայց և այնպէս իմ վշտի մէջ կայ և մի մհծ մխիթարութիւն։ Ես հաստատ գիտեմ, որ զու մի բանի կարօտ պիտի մնաս Մագերայում, նոյն բանին, ինչ բանի որ ես կարօտ եմ մնացել։ Ոչ անուշարոյր օդը, ոչ ծագիկները, ոչ քո այդ կրպու ուրախ հովիտները, ոչ քո մօրաբայր Աննայի բարութիւնը չեն կարող յագեցնել քո այդ կարօտը։ Բայց անտանելի կլիներ իմ գրութիւնն, եթէ իմանայի, որ գու կատարելապէս երջանիկ ես Մագերայում։

Դու տեսնում ես, էմմա, որ ես սիրում եմ քեզ այնքան զօրեղ և այնքան հպարտանում եմ քո սիրով, որ երբէք չեմ կասկածում, թէ գու կարող ես ուրիշն սիրել։ Բայց նվ կունենայ այնքան յանգնութիւն, որ սիրէ քեզ այնպէս, ինչպէս ես եմ սիրում։ Ի՞նչպիսի լոյն կարող է փայլել աւելի պայծառ, բան մեր սիրյ արեգի ջննջ ճառագայթները։ Այս աշխարհում նվ կարող է հպարտութեամբ ասել—«Ես սիրում եմ էմմային աւելի բան Վիլեամը»։ Ես, քո վերաբերմամբ, չեմ զգում խանգոտութիւն

գէպի մարդկանցից և ոչ մէկը, բայց քո Վիլեամը նախանձում է բնութեանն և այն ամեն մի գեղեցիկ առարկային, որ գու, հիացած կապտագոյն ծովով կամ աստղալից երինքով, անուշահոտ ծաղիկներով լի զաշտերը պտտելով, ուրախութեամբ մտածես նրանց մասին, իսկ ինձ միտդ էլ չըերես։ Զէ որ զու շատ ես սիրում այն ամենն, ինչ որ գեղեցիկ է։ Ես յաճախ լսել եմ, ինչպիսի հրաւանքով խօսում ես թիթեռնիկի կամ մամուապատ ժայռի մասին։ յաճախ լսել եմ, թէ ինչպիսի գոյներով նկարագրում էիր գու այն կաղնին, որի վրա փալմաթւած է պատուտակը։ Գու ասում էիր ինձ, որ կարելի է այդ արարածներին սիրել առանց պղջալու և չարչարելու։ Սիրել բնութիւնը՝ զա մի կիրք է, որը մշտապէս անմեղ է մնում և գեռ ես ոչ որ չի կարողացել ծածկել ամբազ բնութիւնն երկաթէ պարսպով, նա իւրաքանչիւր անհատի տալիս է մի պարզ։ մինչե անդամ ամենաապրատին և ամենադժբագդին։ Այժմ, թանկագին էմմա, գու գտնուում ես մի երկում, որը հազար անգամ աւելի գեղեցիկ է Անգլիայից, որը, ինչպէս ասում են, գեղեցիկ է մինչե անգամ իտալիայից և ես նա-

խանձում եմ քեզ Մագերայի համար:

Եյս շաբաթ՝ ո՞րքան զրբեր եմ կարդացել քո կղզու մասին: Բարեբաղդաբար ես անմիջապէս չկարողացայ Լոնդոնում գտնել Մագերայի մասին եղած բոլոր զբւածքներն և այսպիսով այժմ կարող եմ չարչարել իմ զբավաճառին, որ ինձ համար ձեռք բերի նորանոր գրքեր Ամերիկայից, Գերմանիայից և Փոքրթուգալիայից: Ես մի առանձին ձեռվ պահարան ապսպրեցի, ուր պիտի պահպին այն բոլոր հեղինակութիւնները, որոնք ներբւած են քո կղզուն:

Բայց ես զիտեմ արգէն, որ այդ կրթին լիքն է ծաղիկներով, որ այդտեղ արեածաղիկը հնձում են, ինչպէս մեր երկրում գարին, որովհետեւ, հակառակ զէպրում, դոքա կլցնելին բոլոր զաշտերը: Գիտեմ նոյնպէս, որ այդտեղ կարելի է զբօնել պուտի ստւերի տակ, որ հովհանքը լիքն են զամփիններով և ուրիշ շատ մշտադալար ծառերով, որ այդտեղ խաշանձը մարդու հասակին է հասնում...

Դու անշափ սիրում ես այդ բոյսն և մինչ այժմ տեսել ես նորան միայն ջերմանոցներում, իսկ այժմ խաշանձի ամբողջ անտառներ քեզ պիտի ծառայեն:

Վիլիամի առաջին միտքը, որ դու կիմանաս կղզին գուրս դալով՝ դա նախանձն է, անսահման նախանձն գէպի գեղեցիկ բնութիւնը: Նա, այդ բնութիւնը, պէտք է բոլորովին իշխանէ քեզ վերայ և Աստուած գիտէ, քանի ամիսներ, ինձ կրծում է այն ատելութիւնը գէպի ամեն մի ծաղիկ, որ դու կրագես և որի բարձունքը գու կլիանաս: Երեակայում եմ, ինչպիսի սառնութիւն պիտի փշէ իմ համակներից, երբ որ նորա, դեռ ևս անգլիական մառախուղով լիքն, ընկնեն քո ձեռքը, որքան պէտք է խղճաս դու մեզ, ողորմելիներիս, որ ամբողջ ամիսներ զրկւած ենք ծառերի վրայ տերեններ և մարգագետիններում ծաղիկներ տեսնելու բաւականութիւնից:

Ուրեմն, թանկագին էմմա, նախ բան բոլորովին անձնատուր լինելով այդ գեղեցիկ բնութեանը, որի մասին մինչեւ այժմ դու շատ թոյլ զաղափար ունելիք, դու պէտք է ինձ մի քան խոստանաս, պէտք է խոստանաս մի տեղ էլ պահել ինձ համար, քո հրձւանքի և հիացմունքի մէջ, ամեն մի ծաղկի, ամեն մի զեղեցիկ առարկայի տուաչ: Միայն այզպիսի պայմանով ես կարող եմ սիրել քո կղզին:

Երբ ձի նստած՝ սի ժայռի բարձրութիւնից
դու կդիտես հովիտն և կտհնես խառնւած, շա-
պարեղեղնի մէջ ծաղկած վարդի թփեր, որոն-
ցից թեթև քամին քեզ կհասցնի արբեցնող
բուրմունք, երբ դու կտեսնես հանգարտ, պարզ
ծօգն և չպիտես ինչի վրայ յառես քո սիրա-
տենչ հայեցքն, այն ժամանակ ասա, «Ի՞նչ
կմատձէր Վիլեամն, եթէ ինձ հետ այստեղ
լինէր»:

Երբ դու կժողովես մի կողով լիբը ծա-
ղիկներ, մի ամբողջ փունջ վարդ, յասմիկ,
մուրգ և խաշանճ, երբ քո սենեակում խորը
կերպով կշնչես նոցա հրաշալի բուրմունքն,—
ասա՝ «Զգնւմ ես դու, Վիլեամ, այն ուրախու-
թիւնը, որը թափանցում է մինչեւ սրտի խոր-
քերն և, որը վսեմացնում է հոգին»: Երբ երե-
կոյեան կդիտ ծովագն և այնտեղ, շալով վա-
թաթւած, կդիտես կապոյտ երկնակամարը—
մտածիր՝ «Ո՞րքան բաղդաւոր կլինէր Վիլեամն,
եթէ այստեղ լինէր, ինձ հետ միասին»:

Չասես որ ես խիստ շատ բան եմ պա-
հանջում, ոչ, էմմա, ոչ, այլ պարզ ասա, որ
սիրահարւած եմ...

Սէրլ, զա կեանք է, զզացմունքներով.

զա մի լիակատար կեանք է, որ զանազան-
ւում է իր յատուկ ոյժով, իր ջերմութեամբ,
իր գաղտնիքներով, որոնք կորչում են, կար-
ծես անհունութեան և անյագ ծարաւի մէջ:

Հասկաննամ ես դու, էմմա, ինչ է նշանա-
կում մարդ, բոլորովին կաշկանդւած սիրային
բուռն յանկութիւններով:

Գիտես արգեօր ինչ է նշանակում ունե-
նալ զեղեցկութիւն, չանիլութիւն, հանձար,
ջերմ զգացմունքներ, հպարտութիւն, արհամար-
հանք, բանաստեղծութիւններն, մարդկային բոլոր
ընդունակութիւններն և զգալ, ինչպէս մի զար-
հուրելի բոց ալրում, ոչնչացնում է այդ բո-
լորը... Եւ պատրաստ լինել ամեն մի բոպէ-
ձգելու մի արարածի ոտների տակ իր բոլոր
ձիրքերն, իր բոլոր զօրութիւններ, իր ամբողջ
կեանքը մի ժպտի համար և սիրել կեանքը մի-
այն նրա համար, որ կարողանայ անդագար
ասել մի կնոջ, «Ես պատրաստ եմ մեսնել քեզ
համար»: Եւ երբ բոցը կլափէ քո սիրտը, զգալ
ինքն իրա մէջ այդ անյագ, անսահման, մըշ-
տինջենական ձգտումը, որը ոչ այլ ինչ է, եթէ
ոչ նոյն ինքը կեանքը, նոյն ինքը ոէրը:

Սէրլ,—զա աստւածային ներշնչութիւն է

մարդկային կերպարանքով։ Մէրը—դա անվերջ
ասլագայ է, որն անցնում է մի ժամանակա-
ւոր մահկանացուի աշքերի տուած։ Մէրը—դա
այն կրակն է, որ Պրոմեթէոսը փախցրեց եր-
կորից, այդպէս է գոնեայ իմ, դէպի բեղ ունե-
ցած սէրը։

Կեզուս չափագանց ազրատ է՝ արտայայ-
տելու քեզ այն ամենն, ինչ որ ես զգում եմ,
քեզ շրջապատելու այնպիսի մթնոլորդով, որը,
քանի դու Մագերայումն ես, գիշեր ցերեկ
քեզ առի. «Վիլեամն այստեղ է, միշտ րո մօան
է»։

Կեզուն կարող է ուզնորին ցոյց տայ
անապատի ճանապարհը, բայց ճանապարհոր-
դել կարեղի է միայն երեակայութեան թերով
կամ հրեղին ձիով։

Եթէ ճիշտ է, որ 36 տառը բաւական է
մեր մտքերն արտայայտելու, եթէ ճիշտ է, որ
հանճարն եօթը ձայնանիշներով կարող է ցոյց
տալ մեզ ներդաշնակութեան ամենաբարձր աս-
տիճաններն, եթէ ճշմարիտ է, որ եօթը գոյ-
ներով կարելի է նկարել ամբողջ տիեզերը,
ապա ճիշտ է և այն, որ արտայայտած մտքե-
րի, ձայնի ներդաշնակութեան, նկարչի պատ-

կերի միւս կողմը գտնուում է նոյնպէս մի խոր-
հըրդաւոր աշխարհ։ Մեր գիտակցութիւնն այդ
աշխարհն իրանն է համարում, բայց մինչեւ
այժմ դեռ ես ոչ մի երգիչ; ոչ մի կոմպոզի-
տոր, ոչ մի նկարիչ չի կարողացել արտայայ-
տել այդ։ Եւ մեր ճշմարիտ միջութիւնն էլ
հէնց այն է, որ մենք կրում ենք մեր մէջ մի
ամբողջ աշխարհ, որի սահմաններն անկարելի
է գտնել, որի մէջ զգացմունքն ու երեակա-
յութիւնը մոլորում են, չկապւելով ոչ ձեռով
և ոչ զիտութեան երկաթէ տրամբանութեամբ։

Մարդս աւելի շատ զգում է, քան խօսրե-
րով արտասանում. և աշխարհիս ոչ մի լեզու,
նկարչի ոչ մի վրձին, ոչ մի ներդաշնակութիւն
չի կարող արտայայտել այն, ինչ որ նա զգում
է արհամարհանքի կամ սիրոյ, ուրախութեան
կամ տրտմութեան միայն մի բավկում։

Ո՞հ, կմմա, միտքս ուր հասցրեց ինձ. ես
կամցայ չնորհաւորել բո Մագերա հասնելին,
իսկ այժմ գրում եմ քեզ նախանձի և ընազն-
ցական իրերի մասին։ Բայց գու, սիրելիս,
որ հասկանում ես ինձ, մինչեւ անգամ այն
ժամանակ, երբ ես լսում եմ, գու այժմ էլ
կհասկանաս ինձ։ Դու կհասկանաս իմ հա-

իսանձը, որի մէջ չկայ, որ վշտի սուէրն և ոչ,
հէնց նոյն իսկ, անմեղ եսականութեան հետքն
և կներես ինձ:

Գու իմն ես այնպէս, ինչպէս որ իմն են իմ
մտքերն, իմ աշքերը. զու կազմում ես իմ էու-
թեան կէսից աւելին և այժմ, երբ զու ինձա-
նից այգալէս հեռու ես, ես աւելի զօրեղ կեր-
պով զզում եմ, ինչպէս սերտ կերպով կապ-
ւած եմ ըեղ հետ:

Խանգն, ինչպէս ես եմ հասկանում, է
ինքնաճանաշութիւն, որ լցնում է մարդուն,
է ինքնասիրութիւն, ինքնապաշտպանութեան
քնազդ, ամենասուրբ և բնական իրաւունք:

Իմ էութեանս մեծագոյն մասը Մադերա-
յումն է և եռ նրան սւպեկցում եմ անհուն սի-
րով և շրջապատում եմ քաղցրասիր հոգմով,
որը նրան կպահի ինձ համար—կեցցէ նա,
որն իմն է իմն է յաւիտեան:

Տպամարդը շի կարող միայնակ ապրել, ես
առել եմ ըեղ այդ հազար անգամ. այգալէս էլ՝
կինը շի կարող գոյութիւն ունենալ մենակ.
տղամարդն և կինը կազմում են մի էութիւն,
որն ապրում է միենոյն կեանքով:

Եւ ալգալէս, սիրելի էմժա, ինձ համար

տեղ պահիր թէ կղզու մամուազատ բաղայլի
ժայռերի վրայ, թէ ծովի ափին, որտեղից զու
գւարճանում ես հիառքանչ տեսարանով և թէ
զու անուշաբոյր ծաղկների կողովի մէջ։ Թող
Մագերայի առողջարար օդը հանդարտ չնչէ քո
շուրջն և առողջացնի բեղ, որպէսզի շուտ և
շուտ վերադառնաս։ Թող մարգագետինները
ծաղկազարդ ձերերով գեղեցիկանան քո կոչիկնե-
րի տակ և պուրակների ծառերը թափեն քո
զլխին ծագիէ անձրե. Ժող Մագերան զառնայ
կատարեալ գրախտ—բայց և հէնց այդ գրախ-
տում զու տեղ որոնիր քո սիրահար Վիլեամի
համար։

Էմման Վիլեամին

Մադերա, հոկտեմբերի 3-ին 18...թ.

Մի ըանի օր շաբունակ, Վիլեամ, ես ինձ
շատ յոպնած էի զգում և ըէֆո տեղը շէր
ամենափոքր շարժումն անգամ յոպինցնում էր
ինձ, իսկ հանգստութիւնն ինձ շէր տալիս ցան-
կալի անդորրութիւնը։ Ես ամբողջ ժամեր անց-

կացրի յարմար տեղաւորւած միծ բազկաթոռի
մէջ, լուսամուտի մօտ և ամբողջ ժամանակը
կարդում էի քո նամակները. գա իմ ամենա-
լաւ գւարճութիւնն է՝ երբ ուրախ եմ և միակ
միթարութիւնն՝ երբ տիպուր եմ. նւրաքան-
չիք նամակ վերջացնելիս, հայեացրս ակամայ
թափառում էր ծովի վրայ, որ մշտնջենական
դարձութիւնն է մտախոհ մարդու համար և
դանդաղ սահուր էր ամենամօտիկ առարկանե-
րից դէպի ամենահուաւորները, ներկայից դէպի
հեռաւոր անցեալն և ապագայի անյայտ սահ-
մանը: Առաջին մասում—ծովի հարթութիւնը,
որի վերայ ակոսներ էին ձեացրել սպիտակ
առագաստները, ճեղքում էին բարձրացող ու
ցածացող թիակները, ծփում էին հազարաւոր
ալիքներ, գործունեայ կեանքն իւր ազմուկով,
ահագին շարժումնով, իւր պարզ ու խիստ սահ-
մանափակող գծազրութեամբ: Հեռում—կա-
պոյտ ու խաղաղ ծովը, կարծես մի հեռաւոր
քող անհետանում էր այդ ջինջ հորիզոնում և
ձեանում, ինչպէս անյայտ ծովային թռչունի
թերեր: Դա մաքի էմբեմա էր, որն իր ոյժը
բազում է իրական կեանքից, բայց վերանում
է արդէն անփախճանի թափաւորութիւնը, այն-

տեղ որտեղ չկան այլնս որոշ սահմաններ,
չկայ աղմուկի և մնում է միայն յարատի հո-
սանք, որը երբէք չի գագարում, երբէք չի
ընդհատում: Բայց իմ հայեացրս ուղղում էր
աւելի հսուն և հանգչում էր գորշ ծովի վրայ,
որն անհետանում էր մառախլապատ հորիզո-
նում. այնտեղ թէն չկար գրգռիչ աղմուկի,
բայց չկար նաև այն պարզ անգործութիւնը,
որը բարձրացնում է մարզուն. այնտեղ նկար-
ում էր մի ինչ որ անհաստատ, տատանեալ
պատկեր, մի անօահման, խորհրդաւոր անա-
պատ: Եւ յատկագէս պատկերի այդ մասին
ամենից աւելի սիրով ուղղում էին իմ թախ-
ծալի և անհանգիստ մտքերը: Այդ գորշ վիճն
երբեմն ինձ թւում էր անշարժ, երբեմն զան-
գաղ բարձրանում էր, ինչպէս մշուշի քուլաներ
և ձեակերպւում էր արդէն իրրե մի անշատ-
ւած աշխարհ, աշխարհ յարատի յուսոյ և ան-
սահման անուրջների: Այնտեղ՝ այն միգապատ
հեռաւորութեան մէջ, չկան ոչ գոյներ, ոչ
ձեեր. գա միայն մի քառս է, որից Աստւած
ստեղծեց կարգաւորութիւն, իսկ մարդը բա-
նաստեղծութիւնն. այնտեղ թագաւորում է
մշտնջենաւոր շարժում, մշտնջենական, անփո-

փոխ, անզաղար միապատճաղ հոսանք, որի խորբեռում ապաստան էն գտնում մանրադիտային կենդանին և ահազին կետը — հոսանք, որը գտնւելով իւր յարատև անյայտութեան մէջ, առանց խորութեան ծածկում է սատկած ծովաշան ոսկորներն և աճիւնը նաւարեկեաների: Այստեղ տիրում է անչափելի դորշ մառախուղ. նա չի ուրախացնում, չի հանդրստացնում, բայց դիւթում է մարդուն, որը անփերջ ձգուում է գէպի նա, թէի ոչ մի ժամանակ չի կարող գրիել նորան, որովհետև շարունակ ըննում է և իսկապէս երբէք չի հասկանում. նա կախարդում է մարդուն յատկապէս նրանով, որ մնում է յաւէտ անմերձենալի նոր սիրատենչ գրկախառնութիւններին:

Դորանից յետոյ, երբ եռ այդ գրութեան մէջ անցկացրի մի քանի օրեր, գրեթէ ուժասպան և թուլացած, միտո եկաւ, Վիլեամ, ըստորեն և ես մտարերեցի, որ ծովութիւնն ամենամեծ մեղրերից մէկն է: Անմիջապէս ոյժերս հաւաքեցի և խնդրեցի մօրաբրոջն ինձ հետ մի զրօսնը կատարելոյում: Ինձ պատմեցին մի սրտառուչ պատմութիւն, որը կապ ունի այդ ամբողջ կատարել Մախիկոյում:

ամենից աւելի նկարչական տեղի հետ և ես ցանկանում էի մի տլուր ուխտագնացութիւն այստարեկ այստեղ: Իմ քարի մօրաբօյրը, ուրականական այստարեկ: Իմ քարի մօրաբօյրը, ուրականական այստարեկ: Իմ քարի մօրաբօյրը, ուրականական այստարեկ: Այստեղ առաջուց գրել էի քեզ, որ այստեղի տեղափոխութեան այս սովորական միջոցն ինձ գուր չէր գալիս, որովհետեւ իւրաքանչիւր շարժման միջոցին ես ակամայ մտարերում եմ, որ երկու մարդ շարշարւում են իսպատճառով և անմիջապէս ինձ հարց եմ տալիս, «Ինչու Աստւած մարդկանց այնպէս է ոտեղծել, որ նոցանից մէկը պարտաւոր է միւսին ծառայեր»: Մօրաբօյրս մի քիչ հանգստացրեց ինձ, ցոյց տալով երկու արհակէզ և ուժեղ երիտասարդներ և ասաց, որ նոցա համար ըստ ընթոյշ և թոյլ էմման շարտրեգէգնից էլ թեթէ է: Մախիկօ տանող ճանապարհը ձգուում է օձապտոյտներով կանաչապատ ու բերկալի մարգագետնի միջով, ծածկւած ու, անկիւնաւոր բազալի ժայռերով, որոնք խորը շերտերով, կտրուած են և նայում են ինչպէս հինա-

ւուրց ամբոցի ատամներ։ Փոքրիկ և ուշախ դաշտակիները, որոնք խաղաղ տարածւած են այդ ու հսկաների մէջ, նմանում են հանգած հրաբուխի բաժակում զբած սոխակի բնի։ Ելդ վայրի, ահռելի ժայռերից բոլորից վեր բարձրացնում է իւր գլուխը Կոստանիսօ որածայլ գագաթը։

Պատգարակի շափաւոր ճոճումն ինձ այնպէս օրօրում էր, որ ես երրեմն ննջում էի և այդ ժամանակ ինձ այնպէս էր թւում, թէ ես ձգւած—պառկած եմ պերօյեան ճլորթիում։ Կապւած երկու արմաւենիների մէջ, ինկ երկու ու հայութիւնը կանգնած մի ոտիր վրայ ճլորթիի երկու համազատասխան կողմերում, երգում են իմ խաղման երգը։ Հազի ձայնը յանկարծ ինձ սթափիեցրեց և ես արթնացած ահ ու դողով սկսեցի որոնել բազմերին։ բայց իմ առաջ տեսայ միայն պատգարակակրիս ծիծազելի գլխարկը, որը մի ալինթարթում ցրւեց իմ թախծալի մտրերը։

Երբ Մախիկօ հասանը ես արագութեամբ գուրս թռայ պատագարակից և ինձ աւելի լաւ էի զգում, բան Փունգալոյից գուրս գալիս։ Մի չիւանդ սէր։

ըանի ժամւայ շարժումներն և օգափոխութիւնն անտգին փոփոխութիւն յառաջացրեց իմ մէջ։

Մախիկօն մի բոլորովին ազքատ գիւղ է, բայց նա մի այնպիսի սրտառուշ տեսք ունի, որ ակամայ սկսում ես մտածել մի ինչ որ վէպի կամ էլեգիայի մասին։ և իսկապէս էլեգիան այստեղ տեղ ունէր։ Զմայլելով ափերի լայն տարածութեամբ և նայելով ծավի մօտ եղած փոքրիկ բերդիկին, որին տեղական բնակիչներն անւանում են «desembarcadouro» ես դիմեցի գէպի եկեղեցին և այնտեղ տիրացուի ինձ հետեալ սրտաշարժ պատմութիւնն արեց։

«XIV դարում, հիմայ լաւ շեմ լիշում ճիշտ որ տարում, այդ ափի մօտ կանդ առաւ մի ոչ մեծ անգլիական նաւ և ափը գուրս հանեց մի տղամարդի ու կնոջ, երկու գեղեցիկ, ջանիլ անգլիացիների, որոնք գատալարտւած էին ապրել և մեռնել Մագերայում։ Նոցա անունն էր Մախիմ և Աննա։ Յայտնի չէ, ինչ մեղք էին գործել նորա, բայց, ըստ երեսոյթին, նա շատ աննշան պիտի եղած լինէր, կամ դատաւորը նոցա հետ շատ բարեսրտութեամբ էր վարւել, եթէ նոցա պաժել էր միայն նրանով, որ

ստիպել էր տպրել և մեռնել միասին այդ
գրախտում:

Ծովի ափից մի քանի քայլ հեռաւ զտնը-
ռում էր մի մայրի ծառ նոյնքան հին, որը ան-
պակ իսկ կղզին. Նա ներկայացնում էր մի ամ-
բողջ անտառ իր մութ կանաչաւուն գմբէթով,
ճուղբերի և տերեների լաբերինթոսով, որոնց
միջից հաղիւ էին թափանցում արեգակի ճա-
ռագայթները: Այդ մայրին կարողանում էր մա-
րառել նոյն իսկ փոթորկի հետ: Նորա հիւր-
ընկալ յարկի տակ ամառնային խորշակը վիսո-
ւում էր բարեխառն տաքութեան, իսկ ձմբան
հիւսիսային բամբին դառնում էր զովաշունչ
զեփիւո: Այստեղ երկու արսորականները շինե-
ցին իրենց համար խոճիթ և ապրում էին նորա
մէջ երկար, երկար տարիներ բազդաւոր, բայց
առանց որդիների:

Աւանդութիւնն ասում է, որ նորա երբէք
չեռացան Մախիկօյից. Նորա ապրում էին
առանց որդիների, առանց բարեկամների և
առանց թշնամիների. Նոցա համար գոյութիւն
ունէր միայն մի տաճար—նոցա մայրիի մշտըն-
ջենաւոր կանաչ յարկը, մի հորիզոն—ծովի յա-

վիտենական կապոյտ հորիզոնը, մի սէր—նոցա
փոխագարձ սէրը:

Անհան էր, որ առաջինը մեռաւ և Մա-
խիմը նորան թագեց մայրիի տակ, նա մի ճիւղ
կտրեց և նրանից մի այնպիսի զեղեցիկ խաչ
շինեց, որի նմանը մինչև այն ժամանակ գեռ
տեսնւած չէր: Ցետոյ նա շինեց մի երկրորդ
խաչ, բոլորովին նման առաջինին և իւր սի-
րունու գերեզմանի կողքին փորեց մի ուրիշ
զերեզման: Նա մեռաւ հազիւ վերջացնելով
այդ նախապատրաստութիւնները:

Հարեաններից ոչ ոք, Աննայի մահից յե-
տոյ, չլսեց և ոչ մի խօսք Մախիմի բերանից: Մի
առաւոտ նորան գտան մեռած. Նա պարկած
էր գետնի վրայ և իւր գրկում այնպէս ամուր
սեղմել էր խաչը, որ միայն ուժով կարելի էր
դուրս հանել: Մախիմին թագեցին իւր ուղեկ-
ցունու կողքին:

Այնուհետե երկար, երկար տարիներ այդ
մայրին համարում էին սիրոյ նւիրւած ծառ:
Սիրոյ մէջ խաբւածները զնում էին նրա մօտ,
որպէս զի ողբան իրանց անբաղդութիւնը. թըշ-
ւառ սիրահարներն այդտեղ էին զիմում, որ-
պէս զի խնդրեն փոխագարձ սիրոյ բազգաւո-

բութին. իսկ բազգաւորները թափնւում էին նորա հովանու տակ, որպեսզի լուսնի աղօտ լոյսի տակ շնչան սիրոյ խօսրեր: Այդակղ կանգնած երկու խաչերն էլ ոչ ոքի վրայ ծանր տպաւորութին չեն թողնում. նոքա ներկայացնում էին բազգաւոր սիրոյ սեպան: Քամին մեղմ շնչում էր մայրիի տերենների մէջ, իսկ ծովի ալիքները տիսուր ադմկում էին խաչերի պատւանդանները:

Մի անգամ Tristaô Vaz Teixeira բազրապետն, այն, որ Զարկի հետ բնակութին հաստատեց Մագերայում, հրամայեց կտրել այդ մայրին և նրանից եկեղեցի շինել Մալսիմի և Աննայի գերեզմանների վերայ:

Սիրոյ տաճարի վրայ կառուցւեց Աստուծոյ տաճար և սուբբ բանաստեղծութիւնն յինւեց սրտի ընթաց բանաստեղծութեան վրայ:

Ենցել է հինգ զար: Մախիմից և Աննայից մնացել է միայն ազքատ գիւղին գրւած Մախիկո անունն և մի խաչի կտոր, որը Մախիմը շնեց Աննայի գերեզմանի վրայ, մի կտոր, որը տիրացուն ցոյց է տալիս այցելող ճանապարհորդներին:

Ես համբուրեցի մայրի ծառի կտորը, թահ-

կազին Վիլեամ և ինքս ինձ հարցրի. «Ազգեօք մենք էլ, մեր մահից յետոյ, միմիանց մօտ թագւած կլինենք»:

Պատպարակավ ճանապարհորդելի ինձ յոդնեցրել էր և որովհետեւ ծովը խազաղ էր, ինչպէս հայելի, մենք Մախիմոյից մի փորբիկ նաւակ վերցրինք և ճանապարհ ընկանք դէպի Կանիսալա, որը մի շատ խղճալի գիւղ է, բագրացած մի բանի խրճիթներից և մի տիուր, ոչ գեղեցիկ եկեղեցուց: Մենք այցելեցինք մատուն և ապա ծովով վերագարձանք Փունզալօ:

Իմ լետարգիան փոխւեց խազաղ մելամակձոտութեան, շնչառութիւնս սկսեց աւելի ազատ կտարւել և ես ուրախանում էի, որ գտայ բանաստեղծութեան մի թանկազին յիշատակ, որի մասին կտրող եմ յայտնել իմ Վիլեամին:

Էմման Վիլեամին.

Մազերա հոկտեմբերի 19-ին 18...թ.

Տասն և չորս օրվայ ընթացրաւմ ես միտյն Մախիմոյի մասին էի մտածում: Ես ցանկանում

էի լինել բանաստեղծ, որպէսզի ծաղիկներից
պսակ գնէի Մախմճի և Անհայի գերեզմանի
վրայ. ես կամենում էի ոյժ և իշխանութիւն
ունենալ ամմահ գարձնելու համար այն երկու
բազգաւոր աքսորականներին, որոնք հինգ գար
է արդէն հանդչում են փառահեղ մայրիի ար-
մատների մօտ: Բայց ամենից աւելի ես ցանկա-
նում էի, որ մենք էլ լինէինք այդպիսի բաղ-
զաւորներ:

Բայց ինչու թագյնել այս բոլոր գող-
տրիկ բանաստեղծութիւնն իրական կեանքից,
անմխիթար պատկերի առաջ: Ինչու հարկաւոր
էր թւում ծածկել ջինջ, որպէս կապուտակ
երկինքն, անցեալի բանաստեղծութիւնը ներ-
կայի թագման վարպաւրի տակ: Ես բեղ խօսք
եմ տւել շծածկել բեղանից իմ ամենաաննշան
ուրախութիւնն և շժարցնել փորրիկ հոգսն ան-
պամ: Գու կտեսնես, ինպէս ազնութեամբ
կպահեմ ես իմ խօսքը:

Բացի զսրանից, ժանկապին Վիլեամ, ինձ
պիտի հարւածէր և այն ցաւը, որ ես զգացի
այսօր, եթէ շկարուղանայի բեղ ինձ հետ նորան
մասնակից անել: Բայց այդ, միննոյն ժամանակ,
տմենաբարձր աստիճանի կրթիշ և մարգուս

բարձրացնով ցաւ էր և ես չնորհակալ պիտի
լինեմ նրանից: Դա մի բժիշկ է, որը կտրում
է, գաղում, բայց, դորա փոխարէն, առաջա-
ցնում է: Ո՞հ, պարտականութիւնն, զու անո-
գոք աստւած ես, զու բովում ես հոգին, զու
անգութ ես, բայց միայն զու ես ամրացնում
մեր մէջ հպարտ գիտակցութիւնը, որով մենք՝
թէի մի փոքր, բայց բարձր ենք այն արա-
բածներից, որոնք միայն ծնւում են, ուտում և
մեռնում: Եթէ կայ մի բան մեր մէջ անմահ, գա
միայն օրինակն է, որն աւանդում են ապրող-
ներն ապագայ սերնդին. մեր պարտականու-
թիւնը մարդկութեան արժանաւորութեան պար-
ուածն (ի ու մն*) է, որը անցնում է սերնդէ սերունդ
և մենք միշտ պիտի լինենք նրա արթուն պահ-
պանները, նրա հաւատարիմ բուրմերը: Թէ որ
բարտը այնպէս չերմագին խոնարհէին այդ
աստուծոյ տռաջ, ինչպէս ես մանկութիւնից
սկսած, ինչ տեսակ գրախտ պիտի լինէր եր-
կրի վերայ:

* Պալլագա աստւածունու արձանը, որն բատ աւանդու-
թեան երկնքից ընկաւ ծրոյեա քաղաքն, իբր գրաւական այդ քա-
ղաքի անվանութ մնալուն:

Այժմ ականջ գիր ինձ, թանկապին Վիլեամ, երեկ առաւտեանից ես ինձ շատ առողջ էի զգում, ամբողջ գիշերւայ ընթացրում ընդ ամենը մի անգամ միայն հագացի: Ես այնպէս զբաղւած էի իմ առողջութեամբ և այնպէս ձգում էի հաւաքել նոր ոյժեր ըս բաւականութեան համար, որ վճռեցի ահմիջապէս փորձել ինձ:

Եւ այսպէս, վազ առաւտեան, երբ զնում օրաբոյրս քնած էր, մնն մենակ զուրս եկայ տանից և, զինւած զնութիւնվ (նա իմ թոյլ ոտների համար ծառայում է աւելի շատ իրրի օդնական, բան արեից պաշտպանելու համար) քայլերս համարձակ ուզգեցի գէպի այն պառիւթեր ճանապարհը, որը տանում է Փունզալօյից գէպի հիւսիս, գէպի փորբիկ Կուրալը: Այդ ճանապարհը մի շատ գեղեցիկ, բանաստեղծական անուն ունի Նրան անւանում են «саминхօ до fogue» կամ «փամփուշալ» ճանապարհ:

Եւ ահա քո կմման կամենում էր բարձրանալ այս փամփուչտի ճանապարհով, որպէսզի քննել թորերն և իւրաքանչիւր քայլ նուանում էր գէպի Վիլեամն ունեցած սիրուց:

Բայց մննը ի՞նչ ահսակ եսականենք ենք

զանում, երբ սիրում ենք և մանաւանդ երբ մեր սէրը կարիք է զգում մեր առողջութեանը: Ես նայեցի զառ և վեր բարձրաւանգակին և սարսափեցի, բայց անյապակ աշքերս խոնարհեցրի և, բայլերս չնշառութեանս հետ յարձարեցնելով, սկսեցի զանգակ բարձրանալ. այդպէս զրիթէ ուզիկ հարիւր քայլ անցայ տանց նեզւելու և հազարու: Ի՞նչպէս բազգաւոր էի, որ հասայ հնատեաների, ի՞նչպէս հպարտանում էի, որ նպատակիս հասայ, «փամփուչտի ճանապարհ» մի մասն անցնելով: Եւ այս բայր հերոսութիւնը բեզ համար է, թանկապին Վիլեամ:

Ճանապարհն այնուհետեւ փարք ինչ հարթէ է, երկու կողմից նրան շրջապատում են բարէ պատեր, — նա ունի առւալի կերպարանը, սուլայատակւած քարերով և շրջապատած հողարլուրներով, արհածագիկ ամբողջ թփեր կախւած էին այդ պատերից. նորա այնրան գեղեցիկ էին, որ ձեռքս ակամայ մեկնեց գէպի նոցա: Սակայն զու գիտես իմ սափարութիւնն, ես չեմ կարող ծագիկ քաղել զաշտում, կամ անտառակամ ճիւղ կարել, տռանց տիրոջից թոլլատութիւն խնդրելու: Միթէ մեր պար-

տականութիւններից մէկն էլ այդ չէ:

Տիրոջն երկար վիտրելու հարկ շեղաւ:
Ես մի քանի քայլ էլ առաջ գնացի և պատի
մէջ տեսայ մի փորբիկ կանաչ գոնակ. նա կի-
սաբաց էր, իսկ նորա յետեւմ երեւմ էր սի-
մինզրի արտը: Բարձր, ստերաշատ բանանների
մէջ ընկած ճանապարհը տանում էր գէպի հա-
մեստ, բայց գեղեցիկ, կանաչագոյն փեղկերով
և բաց մոխրագոյն պատերով տեսակը:

Տան առաջ երեւմ էր մի փորբիկ բակ,
որտեղ մի բանի հաւեր ագահութեամբ քըցցում
էին իրենց նախաճաշն, իսկ մի կողմում բու-
ռած էր բարձր թղթնին, որը տարածել էր,
բաւականին մարուր տեղի վրայ, զովարար
ուաւեր: Յենւելով գուանն ես կանգնեցի ոտիս
թաթերի վերայ, որպէս զի տեսնեմ այնտեղ
արդեօք մարդկացին շունչ չի երեւմ և հենց
իսկոյն տեսայ այն, ինչ որմում էի:

Թզենու տակ, ծփստի բաղկաթոռի վե-
րայ, մէջքն ինձ գարձրած, նստած էր մի հա-
սակաւոր մարդ՝ շապկանց: Նա, ըստ երկոյթին,
ուշի ուշով նայում էր մի ինչոր բանի, պար-
կած նոցա ծեկների վերայ, որին սակայն ես
չէի կարողանում տեսնել:

Եթէ ես տեսնէի նորա երեսը, հէնց իս-
կոյն կորոշէի, կարող եմ արգեօք զիմնլ նորան
ծաղիկներ խնդրելու համար. բայց ոչ նորա
ուսերը, ոչ անդրավարտիքի զոյնն և ոչ նորա
կոչիկների ձեր չէին տալիս ինձ բաւականին
հիմք, որ եղրակացութիւն զուրս բերէի, թէ
ինչպէս կհանդիպի նա ինձ: Այդ պատճառով
ես գանդապում էի և զօնտիկիս ծայրով ուշի
ուշով աւազի վրայ նկարում էի բազմաթիւ մեծ
ու փորբ «Վ» յուսալով, որ շուտով այդ մարդին
երեսը գէպ ինձ կդարձնի և ինձ կնկատի:

Բայց արեածագիկները չափազանց գեղե-
ցիկ էին, իսկ ես գտնւում էի ուրախ և չա-
րաձնի զրոյթեան մէջ, ինչպէս փորբիկ երե-
խայ: Այդպէս զրոյել էին ինձ առաւտեան օդն
և բլրի վրայ յաջողակ բարձրանալը: Ես չկա-
րողացայ ինձ զսպել և վատ փորթուգալեան-
լեզով, զոգոշին ձայնով վերջապէս սիրո-
արեցի խօսիլ այդ անշարժ մարդու հետ.—

«Ներեցէր, յարգելի պարտն».

— Ո՞վ է այդտեղ:

Հարց տալով նա զարձաւ և ինձ նայեց.
Նորա ծնկների վերայ կար մի տասը տարեկան
երեխայ, որն ըստ երեսյթին քնած էր:

«Ի՞նչ հստաւէտ և գեղեցիկ արևածադիկ-ներ կան ձեր այդու, պատի վրայ. նորա ինձ գալթակղեցրին և ես եկայ ձեզ հարցնելու, արդեօք կարմղ եմ բազել մի բանի ծաղիկ»:

—Նոքա բոլորը ձեզ են պատկանում, օրիսրդ, ես մինչեւ անզամ շպիտէի, թէ նորա ծագիկ են. բազեցէք նոցանից, որքան ցանկանում էր:

Այդ ժամանակ ես ուշադրութեամբ նայում էի ինձ հետ խօսող մարդուն և երեխային, և իմ կայտառ ուրախութիւնն արագ փոխւեց խոր տխրութեան: Իմ առաջ, անկասկած, մի մեծ գժրազգութեան պատկեր կար:

Արևածադիկների տէրն, ինչպէս երեսում էր, Մաղերայի հոգագործ էր. դա մի լայնաթիկունք տղամարդ էր. նորա գէմքի տարչնի գոյնը սաստիկ տարբերում էր նորա աւելի տարշինագոյն պարանոցից, որը ոչնչով չէր փաթաթւած: Բաց օձիքն և բաց շապիքը ցոյց էին տալիս, որ նա ոչ մի ժամանակ չէր վախսենում արեից: Նորա երկարածկ գէմքը սկ մորուրով և արծւի բթով, ունէր բաց արտայայտութիւն. իսկ ինձիւներն, յատկապէս ճակատի վրայիններն, աւելի բազմաթիւ էին, բան սպիտակ

մազերը: Բնաւորութեան կողմից նա, անկառիած, ուրախ և միամիտ մարդ պիտի լինէր, բայց այժմ նորա վերայ զրօշմւած էր խորը հոգսի կնիքը: Նորա կնծիւները, որոնք խոր ակուներով զուգահեռարար բարձրանում էին սնըերից գէպի ճակատի մէջ տեղն, երբէք չէին հարթւում: Բայց և այնպէս, ոչ այդ ակոսներն և ոչ այդ ահուելի կնծիւները չէին արգելում նորան լինել բազարավարի:

—Նոտեցէք ահա այստեղ, օրիորդ: Երիի գուր յոգնել էր: Գուր այնպէս ծանր էր շընչում, կամ, գուցէ, ձեր կմւրծքն է ցաւում:

Մի բանի րոպէից յետոյ, նա, այնպէս էր թւում, արգէն նկատեց իմ ինչ հիւանդութիւն ունենալս. Նորա ձայնն սկսեց աւելի մեզմանալ և նա աւելի ուշադրութեամբ սկսեց վերաբերւել գէպ ինձ: Նա իմ առաջը զրեց մի տվոռ, որը զրւած էր հինց այնտեղ կարգով, առանց վերցնելու երեխային իր ծնկներից, որին նորա ուժեղ և մազրտ ձեռները բռնել էին ինչպէս մի տիւնիկ: Ինձ ակամայ քաշում է այն տեղը որտեղ ես տեսնում եմ չարշարւողի, որտեղ հոգս եմ ինքանառաւ և ես մնում եմ, ինչպէս մեխւած մի ինչ որ անյազգթելի, ձգողական ոյժից:

Ես նստեցի և մոռացայ արևածաղիկները,
որոնք շուրջու տարածում էին հրաշալի անու-
շահստութիւն:

«Այն իմ կուրծքը ցաւում է. ես հիել եմ
Մագերա—բժշկելու. գրեթէ մի ամբողջ տա-
րի է արդէն, որ ես այստեղ եմ և զգում եմ,
որ բաւական լաւ եմ այժմ»:

Նա, հաւանական է, չսեց իմ այս վերջին
խօսքերն և ձախ ձեռքով խփելով խոր ճակա-
տին, բարձր զոռաց.—

—Ո՞հ անիծեալ հիւանդութիւն. ամեն ժա-
մանակ և ամեն տեղ թորախտ: Ինչու ամենատ-
կարող, իմաստուն Ստեղծույթը տւեց մեղ թո-
րեր ծծող թղթից տւելի թոյլ: Դուք, օրիորդ,
կառողանար, զրանում կասկած չկայ, բայց
ես, ես...

Նա հոգոց հանեց և նայեց երեխային,
որին, նրան հետեւելով, նայեցի և ես: Երեխան
միայն լոկ շապիով էր, զուհատ, լուար. նորա
մարուր ձեռքերն ընկած էին կրծքի վրայ, որը
ուժգին ցածրանում ու բարձրանում էր զժւար
շնչառութեան պատճառով: Նորա հրեշտակա-
յին դէմքը ներկայացնում էր լատինական և
անգլիական ցեղերի գեղեցկութեան խառ-

նուրդը. վորբիկ, կլորիկ գնչիկ, վարդաղոյն,
բայց չոր ու կիսափակ չըթունքներ, նուրբ քիթ,
սև, նկատելի խիտ յոնքեր և երկար արտիա-
նունքներ, որոնք երբեմն փակում էին, եր-
բեմն բացում, ցոյց տալով սև, տեսորիչն
թափառող, աշքերը: Ջէկ մազերի մի ամբողջ
հեղեղ թափւած էր ճակատից ցած: Այդ բոլորը
միասին ներկայացնում էին ներկերով հարուստ
մի պատկեր, որն ակամայ և երկար ձգում, բե-
ւեռում էր խոր վրայ մարզու հայեացըրը:

—Ահա, իմ Գոլորէսը, մերջինն է, նա մի-
ակն է, որ մնացել է ինձ մօտ: Ես նորան
անւանեցի Դոլորէս, որովհետև նա աշխարհ
եկաւ մօր մահից մի բանի օր առաջ: Այն,
օրիսրդ ես կորցրի կեռջո, երեր որդիներիս
և երկու աղջիկներիս, նորա բոլորը թորախ-
տից մեռան:

—Ես շկարողացայ ուզարկել իմ որդիներին
Մագերա, որպէս զի նորա առողջանան, աւե-
լացրեց նա զարհուրելի ծիծաղով: Նորա ծըն-
ւեցին իմ տան մէջ Մագերայում և Մագերա-
յումն էլ մեռան:

Այդ ժամանակ յանկարծ զարթնեց Գոլո-
րէսն խոր տենդային քնից, նոտեց հօր ծնկե-

րի վերայ և սկսեց հազար, և հազում էր այն-
քան ուժով, որ նորա թշերը կարմրեցին, իսկ
չարշարւող աշքերը լցւեցին արտասուրով:

«Նայեցէք, սա էլ է դնում նոցա յետելից,
անիծեալ թշւառութիւն»:

Բայց երեխայի տանջանքն այնքան մեծ
էր, որ հօր բարկութիւնն երկար չէր կարող տե-
ւել. թշւառը թերւեց գէպի այդ հրեշտակալին
դէմքն և սկսեց այրւած համբուրել... երբ նա
բարձրացրեց զլուխը, նորա աշքերը կարմրել
էին և լիբն էին արտասուրով:

«Ես տգէտ մարդ եմ, գիւղացի մէկը, որ
կարող է տնկել խաղողի որթեր և գետնախնձոր.
տասներկու տարի է արդէն, որ իմ տանից հի-
ւանգներն ու մեռելներն անպակաս են. բայց
երբում եմ Աստուծոյ մէկ անունով, իմ սիրոց
(և նա այնպէս ուժգին խփեց բռնուցրով իւր
կրծքին, որ ըիշ մնաց ճարէր) գեռ չի բարացել,
ես գեռ ևս կարող եմ արտասուել»:

— Գուր շատ անրազդ էք, բարի մարդ,
առացի ես, բայց Գոլորէսը կառողջանայ: Թո-
քախոտտ ընտանիքում մեռնում են ոչ բոլորը:
ես էլ ունեի տասնումէկ եղբայրներ ու բոյրեր,
չիւտնդ սէք:

որոնիք բոլորը մեռան թոքախտից. բայց ես ար-
դէն քսան և հինգ տարեկան եմ և յուսով եմ,
որ կառողջանամ: Դոլորէսը թոյլ կլինի և յա-
ճախ կհազար, բայց նա կառողջանայ, նա, հա-
ւատացէք, կառողջանայ:

«Յուսով եմ, որ ալգոլէս կլինի: Ինձ հա-
մար շատ խիստ կլինէք, եթէ սոտիպւած լինէի
զրկւել իմ բոլոր որդիներից:

«Եթէ ես սոտիպւած լինեմ թագել և սորան,
այն ժամանակ ես կայրեմ տունս և նաւաստի
կգրւեմ հէնց առաջին պատահած նաւում, որը
կրողայ գէպի Ըմերիկա, Փորթուգալիա, կամ,
ըստ յիս, թէկուզ նոյն խոկ գժոխը... ներո-
գութիւն օրիսրդ»:

— Բայց ինչպէս պատահեց, որ գուը, ապ-
րելով մի այնպիսի երկրում, որտեղ թոքախտ
շատ հազիւ է լինում, մանեւանդ ըիշ թէ շատ
հարուստ մարդկանց շրջանում, գուը այդրան
թշւառութիւններ կրեցիր:

«Գա մի շատ տիսուր պատմութիւն է, իմ
բարի օրիորդ և, տեսնում էք արդեօր, ես այդ
պատմում եմ բոլոր պատահողներին, որպէսզի
նա կարողանայ օգուտ բերել նոցա, որոնց հա-

մար նա կարող է դեռ խրատ լինել: Դուք ի՛լ
դեռ ամուսնացած չեք:

— Ոչ:

«Ճատ լաւ, այն ժամանակ իմ պատմութիւնը կարող է իրրեզաս ծառայել և ձեղ համար: Տեսնում էք, զուք ունեք նեկ կուրծք և նուրբ կազմւածք: զա իմ սիրտը միանգամից փափկացրեց, որն երբեմն անմատչելի է մնում ամբողջ օրերի, շաբաթների և մինչև անգամ ամիսների ընթացքում: Յաճախ իմ զարտի հետ փակւում եմ տանին և ման եմ զայխ Դոլորէսի հետ, բոնած նորա ձեռքից և յաճախ ձեռներիս վրայ առած, զատարկ սենեակներում: Իմ տանս մէջ տասներկու սենեակ կայ և նորա բոլորն էլ զատարկ են, բացի այն սենեակից, որի մէջ քնում եմ ես աղջկանս հետ, ուտում եմ և ընդհանրապէս ասլրում: Դուք հասկանում էք ինչ տեսակ անհապատում եմ անցկացնում իմ ժամանակը: Եւ ինձ շատ ախործելի է, որ ձեր մէջ գտնում եմ այն էտիճին, որին կարող եմ հազորգել իմ զարտերը:

Գիտէք, ես գեռ ևս բառասուն տարեկան եմ, չնայելով իմ սպիտակ մազերին և խորշոներին. շատերն ինձ համարում են յիստն տա-

րեկան և դեռ աւելի: Եւ ես գորա վերայ չեմ զարմանում. աւելի տարօրինակ է այն, որ ես դեռ ապրում եմ. իհարկէ զա միայն Դոլորէսն է, որ չի թողնում ինձ մեռնելու:

Ես էլ երբեմն բսան տարեկան էի և հեծնում էի Մագերայի ամենավառվոռն ձիերը. ինձ շատ զւարճութիւն էր պատճառում առանց թամբի թռչկոտել հինգ անգունդների եղերների շաւիզներով և քեկ, որրան բէֆդ կտայ, դէսի ներբեկ, թիք զառիվայրով, մի ձեռքով բնած բաշից իսկ միւսով-պոչից ես հաւատցած էի, որ շեմ ընկնի: Ինչը այս ուրախանում ես, երբ զլուխս սկսում էր պատյա զալ, իսկ բամին ցրւում էր մազերս և չչւացնում էր ականջներում: Ես ուժեղ էի, այնպէս որ յաճախ, խլելով մշակի ձեռքից բահն, ինքս սկսում էի աշխատել, մինչև որ բրտինքն առափներով թափւում էր իմ ուսերից: Հօրիցս ես ժառանգեցի սէր դէսի աղատ դաշտային կեաները: Ես ատում էի բաղարն և զիւղն և անգագար դիմում էի մայիսեան զաշտերը կամ դափնիների ստւերները:

Ինձ երբէք չէին հրապուրում կանացի գէմքերը. ես, շգիտեմ ինչն, մէկին զուր զայը

համարում էի յետեից քաշ գալ և բաղը ի
կոտրատւել։ Իմ ջդերը կարծես տենդի մէջ
էին գտնուում և պահանջում էին անընդհատ
գործունէութիւն։ Իմ ուժեղ կուրծքը ճանաչում
էր միայն ամենամարօւր օդը։ Ամենաբարձր
լեռների կզզիացած գագաթներն ինձ չէին սար-
սափեցնում, իսկ մի քանի ժայռերի վրայ եղել
եմ միայն ես և մէկ էլ արծիւր։

Մէրն ինձ ընդգրիեց յանկարծ, ինչպէս
փայլակ, ինչպէս մի գնդակ, որ թափանցում է
ուզիղ կրծքի մէջ։

Մի անգամ ես զնացի Փունգալօ և ման
էի գալիս նաւահանգստում, սպասելով բարե-
կամիս, որի հետ մտագիր էինք ծովով զնալ
Պօրտօ—Սանդօ։ Ինձ տանջում էր անհամբե-
րութիւնը, որ բարեկամս ստիպում էր ինձ այդ-
պէս երկար սպասել իրեն և ես ոկսեցի շւշւա-
ցնել, երբ յանկարծ տեսայ իմ առաջ մի փոք-
րիկ կառք։ Նարա մէջ նստած էր մի ինչ որ
գունատ մարդ, որին ես անպատճառ մեռած
պիտի կարծէի, եթէ նորա աշբերը բաց չլինէ-
ին։ Կառքիկը յետեից հրում էր մի ջահիլ աղ-
չիկ։ Նա յաճախ թեքւում էր և սիրով հարց-

նում էր թշւառ մեռնող կիոջն՝ արգեօք մի
որեէ, բան չի ցանկանում։

Այդ աղջիկը գուցէ տղախին էր, բայց ինձ
համարէ բալորը մէկ էր։ Ես յիշում եմ միայն,
որ տեսնելով նորան, ես ինձ զպացի երկինք
տարւածի նման։ Ես միանգամից սիրահարւեցի
նորա կապոյտ աշբերի, խիտ, չէկ մազերի,
վարդագոյն այտերի վրայ, այնպէս որ, երբ իմ
բարեկամն եկաւ հրացանը ձեռին, ես լոել ան-
գամ չէի ուզում մեր որսի մասին։

Այդ առաջին կինն էր, որի աշրերի մէջ
ես ուզիլ նայեցի և ինձ թւում էր, որ չեմ
կարող այլիս առանց նորան ապրել։ Իմ ուրին
այնքան բուռն էր, այնքան վարակիչ, որ ութ
օրից յետոյ Զէսսին, էլ սիրահարւեց ինձ վերայ։

Նա աղախին էր, բայց անզլիացի աղախին,
խօսնում էր երեր լիզով և շատ կարգացել ու
զրել էր։ Նորա սիրտը շատ բարի էր և նա
թափառում էր իսր տիրուհու յետեցից, որին
չէր թսդնում ոչ ցերեկն և ոչ գիշերն և, որի
վրայ, բառացի ասած, սիրահարւել էր։ Այս-
տեղ՝ մեզանում բոլորն այն կարծիքին են, որ
թոքախտը տարափախիկ չէ, բայց ես զիտեմ,
որ իմ Զէսսին, զեղեցիկ և թարմ ինչպէս

վարդ, Զեսսին, վարակւեց իւր տիրուհուց և
գիտեմ նոյնպէս, որ երբ նա մնուաւ ես կամե-
նում էի ամուսանանալ Զեսսի հետ, այդ ժամա-
նակ նա հիւանդացաւ և Փունքալոյի բժիշկները
նորա հիւանդութիւնն անուանում էին կըծքային
փողացաւ. բայց դա իսկապէս թորախտ էր:
Նա այդ ժամանակ հիւանդ պառկեց երկու
ամիս և այդ օրւանից երբէք չուզվեց. նա
ուտում էր, ման էր զալիս, բայց միշտ մնում
էր սաստիկ լրար ու թոյլ և երբէք չէր դա-
դարում հազարուց:

Չնայելով այս բոլորին, Զեսսին միշտ
կայտառ էր, ինչպէս ձուկ և անդադար ասում
էր ինձ, որ նորա լզարութիւնը կանցնի նրա-
նով, որ ինձ սիրում է: Իմ հայրը միշտ պնդում
էր, «Սերաստիան, Սերաստիան, այդ աղջիկը
բեղ համար չէ ստեղծւած, նա շատ բնըոյշ է,
զա չուտով նորան կկորցնեն և բո երեխա-
ները հիւանդու կլինեն: Սերաստիան, զնա
Լիսոսքոն հօրեղբօրդ մօտ, մոռացիր Զեսսին.
Ես տասն անդամ սիրահարւել էի, նախ քան
բո մօր հետ ամուսնանալը. և միթէ, զու
իրաւ ցանկանում ես ամուսնանալ բեղ պատա-
հած հէնց առաջին աղջկայ հետ»:

Հայրս ճշմարիտ էր ասում. և նոյն իսկ ոչ
մի բժիշկ խորհուրդ չէր տալիս ինձ այդ
ամուսնութիւնն իրավործել: Բայց ինչ օգուտ
են բերում մեզ այդ բժիշկները: Նորա ասլրում
են, կարծես միայն նրա համար, որպէսզի շար-
շարեն հիւանդներին և ոչ թէ նրա համար, որ
պահպաննեն առաջների առողջութիւնը:

Մենք սաստիկ սիրում էինք միմեանց:
Մենք պսակւեցինք: Զեսսին իսկոյն յղացաւ,
հազի ընդհատւեց և նա մի փորր ուզգւեց. ևս
ինձ մահկանացուներից ամենաերջանիկն էի հա-
մարում. բայց ահա սկսւեց ծնունդներն և այդ
ժամանակից Զեսսի կհանրը ներկայացնում
էր մի գանգաղ կռիւ մահւան հետ:

Իսկ ես, նկատելով որ նա աւելի լաւա-
նում է յգութեան շրջաններում, հա ուզում էի,
որ շատանան երեխսէրո: Ոչ, մի բժիշկ չասաց ինձ,
թէ իւրաբանշւեր երեխսայ նորան նոր հարւած
է բերում և մօտեցնում զերեզմանին:

Մաղերայի առողջ կլիման պահեց նորան.
Նա ինձ հետ միասին ալրեց ութ տարի: Ան-
գլիայում նա կմեռնէր անկասկած, հէնց մի
րանի ամսից յետոյ. մեր կզզու երկինքը պար-

գեռւմ էր նորան երկարատև և տանջանքներով
լի ճգնաժամ:

Եւ ոչ միայն իմ Զեռսին, բայց և իմ բո-
լոր որդիները կորան... Նորա բոլորն էլ մօր
նման էին, նոցանից ոչ մէկը չունէր իմ ուսերն
իմ երկաթէ թօրերը:

Եթէ զուր նրանց տեսնէիր: Ինչպէս զե-
ղեցիկ էին նորա: Նորա բոլորը նման էին Դո-
լորէսին, իսկ մի բանիոք զեռ աւելի զեղեցիկ,
շէկ, վարդապոյն, խելօք, սիրելի:

Ահա արդէն քսան տարի է, ինչ ես ամսու-
նացել եմ. այդ քսան տարւայ ընթացքում
կարգով իմ տունը ներկայացնում էր հիւան-
դանոց և զերեզմանատուն: Ես հիւանդապահ
էի կնոջս ու երեխաներիս մօտ, ես լիրս էլ
թագել եմ նրանց բոլորին...

Հասկաննմւմ էր զուր, ինչ է նշանակում
ունենալ մի մեռնող երեխայ անկողնում, իսկ
միւսն արիւն թրող, պառկած այգում, ծափ
տակ, որսինետե նա այնքան ոյժ չունի, որ
կարսդանայ տեղից շարժւել: Գիտէք զուր,
ինչ է նշանակում նստել սեղանի առաջ և կար-
դալ, յուսահատ դէմքով, օրհասական հիւան-
դութեան տռաջին նշաններն իւր որդոց դէմքի

վերայ: Հասկաննմւմ էր արդեօք ինչ է նշանա-
կում զիշերը ընած, լսել լանկարծ իւր որդի-
ներից ամենապնդակազմի հազը, նորա հազը,
որն, բատ երեցթին, ընդհանուր ազետից ազատ-
ւելու բոլոր նշաններն սնէր: Դուք պարզ երե-
ւակայթւմ էք այն կրութեան սարսափն՝ ապ-
րել կենդանիների և մեռնողների մահու տան-
ջանքների մէջ, ծիծազել, որպէսզի հանգստա-
նան վախկոտներն և ստել, խափել այսօր,
խափել վազը, խափել օրէցօք, խափել և՛ հի-
ւանդներին և՛ տռազ որդիներին, որսվհատե
վերջինները սկսում են վախենալ, որ իրանք
էլ հիւանդ են և խրաքանչիւր օր հնարել նոր,
զեռ աւելի սոսկալի ստեր:

Հասկաննմւմ էր զուր այս բոլորը: Կարգա-
ցել էք արդեօք հին զրբերում ոորմնից աւելի
սարսափելի տանջանքների մասին:

Մէկ անգամ, ես զեռ լաւ յիշում եմ, այդ
զեկոտեմբեր տմոին էք, յորդ անձրի էք զալիս
և խոնաւ ցուրտն անցնում էք մինչև ոսկոր-
ներն, ես որդիներիս հետ վերադառնում էի
զերեզմանատնից, ուր մենք տարել էինք թա-
զելու մեր փոքրիկ սիրուն Եղիսարէթին, տասն-
հինգ տարեկան աղջկան: Այդ ժամանակ մենք

չսրս հսգի էլինք՝ ես, Պորինիան, Թոլորէսը և
Միքայէլը, Մեր վրայի հագուստներն այնպէս
թրչւեցին, որ կարելի էր մզել, բայց ոչ որ
մի խօսք անդամ չէր ասում: Հէնց այն ժամա-
նակ, երբ մենք բարձրանում էինք նոյն իսկ
ճանապարհով, որով դուք էլ եկաք, Միքայէլը
յանկարծ սկսեց հաղալ. հաղը չոր էր և տես-
պական. նա թաշկինակը գրեց շրթունքներին,
նայեց և գունաթափւած, բայց ծիծաղելով,
ցոյց տևեց քրոջը՝ Պորինիային. թաշկինակն
ամբողջ արիւն էր դարձել:

Ես դալիս էի յետից և բոլորը տեսայ:
Պորինիան անակընկալ դարձաւ ինձ և լացով
ու հառաջանքով բացականչեց—«Հայրիկ, հայ-
րիկ, միթէ մենք բոլորս պիտի մեռնենք, մի-
թէ ճշմարիտ մենք բոլորս կմեռնենք»:

Ես ինձ շկարսպացայ պահել և ընկայ այն
պատի վրայ, որ պատում է ճանապարհը: Պո-
րինիան, Միքայէլն և փարրիկ Թոլորէսը շրջա-
պատեցին ինձ և դրկեցին իմ ծնկները. Թոլո-
րէսը լալիս էր, չիմանալով ինչնւ, իսկ Միքա-
յէլը համբուրում էր ինձ և ասում. «Հայրիկ,
էղ ոչինչ, ես վիրաւորեցի յնդերս, արիւնը
միայն ինդերբիցս է»: Բայց անցաւ մի տարի,

բարի օրիորդ և մենք թաղեցինք նոյնպէս և
Միքայէլին և տուն վերադարձանք արգէն
երերով:

Թող անիծւած լինեմ ես, երիցս անիծեալ:
Այժմ մնացել է մօտս միայն Պոլորէսը, բայց
նորան էլ կթագեմ Զեսսիի կողքին և հրամա-
յում եմ ինձ կենդանի թաղել իմ սրդիների
մօտ: Թող անիծւած լինեմ ես: Ոչ ոք իրաւունք
չունի աշխարհ դուքս բերել հիւանդոտ երեխա-
ներ: Ո՛չ ոք իրաւունք չունի կեանք տալ այն-
պիսի էակների, որոնք մեռնում են մանուկ,
ջահիլ, ուրախութեան և յայսերի հասակում:

Ո՞հ, կեանք: Դա մի սոսկալի բեռ է: Պէտք
է ունենալ ոյժ և առողջութիւն, որ կարելի
լինի տանել նորան: Կեանքն ամենեին բարի
պարզե չէ, այլ բեռ և տանջանք...

Իսկ դուք, բարի օրիորդ, դուք գուցէ
նոյնպէս թորախառտ հօր կամ մօր աղջիկ էր»:

Թանկագին Վիլեամ, ալս խօսքերի միջո-
ցին ես վեր թռայ և ինչպէս խելազար, գոռա-
ցի. «Յաւական է բաւական. դուք կուպանէք
ինձ ձեր երեխաների հետ»:

Եւ ես արագ փախայ այդ այգուց դէպի

տուն և հեկեկալով բնկայ մօրաքրօջս զիրկը
որը զուրս եկաւ իմ հանդէպ:

Վիլեամ, ես ցանկանում էի այս բոլորը
քեզ հազորզել և ինձ պարականութիւն եմ
համարում անել այդ:

Միսս Աննան Վիլեամին.

Լոնգոն օգոստոսի 3-ին 18..թ.

Վիլեամ մեր էմման մեռաւ: Ես չեմ կա-
րողանում գտնել մի ուրիշ արտայայտութիւն,
չեմ կարողանում մտածել մի որեէ ցաւակցա-
կան նախագասկութիւն, որպէսզի ծածկեմ քե-
զանից այս սարսափելի եղելութիւնը:

Ո՞հ, Վիլեամ, զու, որ այնպէս սիրուա
էիր նորան, զու, որ յաւիտեան պիտի ապրես
այդ հրեշտակի մասին ունեցած յիշովութիւն-
ներով, կրմրոնես իմ կոպտութիւնը: Ինչու հա-
մար տողերի մէջ ծածկեմ սարսափելի յուրը:
Ինչու լուս նրա մասին մինչեւ նամակիս վեր-
ջին երեսը: Ես հաւատացած եմ, որ զու, նա-
մակը բանալով, զերեզմանի հստ կզկառ և միե-

նոյն է՝ ինձ չվ յաջողվիլ քեզ խափել:
Գուցէ ես կարողանայի գեռ էլի մի քանի
ամիս թափնել քեզանից այդ սարսափելի
լուրը, բայց յուութիւնն աւելի մեծ անդժութիւն
կլինէր իմ կողմից: Նա խոստացել էր քեզ
ճշտութեամբ: առաջ տանիլ նամակագրութիւնն,
այն ինչ զու ոչ մի տող չէիր ստանայ նորա-
նից: Կայ մի ուրիշ աւելի զարհուրելի բան,
հինգ նոյն իսկ մահւանից՝ դա ենթատրութիւնն
է մահւան մասին: Մեր էմման, արդէն տասն
և չորս օր է, հանգչում է մայրիների անտա-
ռում, մի փորրիկ կամքջի մօտ և միայն այսօր,
աշրի առաջ ունենալով թղթատար չոգենաւի
մեկնելին, ես, երկար կուից յետոյ, գրիչն առայ
ձեռու, որպէսզի զբեմ քեզ, Վիլեամ: Ով որ
չի հաւատում Աստծոն, նա ի՞նչպէս կարող
է ապրել: Մենք ի՞նչպէս կարող էինք ապրել,
զգալով որ մեր սրտից կտրում են մի կտոր.
ինչպէս կարող էինք մենք քաշ տալ մեր զո-
յութիւնն, եթէ շյուսայինք, որ մի ժամանակ
պիտի տեսնենք մեր մերձաւորների և սիրե-
լիների հետ:

Ես կարգացել եմ, որ հարեշները ողջ
կենդանիներից պոկում են մոի ամբողջ կտորներ

և գործ ածում իբրև կերակուր. այսպէս նորա
խեղճ կենդանիներին ամենայն օր մաս մաս
կտրատում են և տանջում, մինչեւ որ նոցանից
մնում են կիսամեռ—կիսակենդան ոսկորներ և
փորոտիք: Բայց միթէ մեր կեանքում
բալորովին նման չենք հարեշտանի այդ եղնե-
րին: Զե՞նք կորցնում մեր աստիճանաբար մեր
ամենասուրբ մտերմական կապերը: Միթէ նա,
որ երկար ժամանակ ապրում է, աստիճանա-
բար շի գառնում մի կմախը, առանց մսի և
կենդանի սյժի, կմախը, որ միայն, ըստ իւր
հին սովորութեան, քաշ է տալիս իւր սղոր-
մելի գոյութիւնը:

Վիլեամ, լաւ միտի պահիք, քո էմման
մեռաւ հաստատ համոզած, որ քեզ կտեսնի
մի աւելի լաւ աշխարհում: Նա փակեց իւր
աշքերը հանգիստ և զւարթ: Նա հաստատ հա-
ւատում էր, որ դու կդիմադրես այդ սարսափե-
լի ցաւին, որ գու ինքնակամ ոչ մի բովէ չես
կարճի քեզ նախասահմանւած կեանքը:

Ես ընդ միշտ կողբամ իմ էմմային, որին
հարազատ ազգկանս պէս սիրում էի, բայց, ար-
տասուր թափելով հանդերձ, ևս միշտ կպա-
հմ պայծառ յոյս, որ մի ժամանակ կտեսնեմ

նորան: Գու հո, Վիլեամ, ովհան ողբառ նորան,
նոյնապիսի յոյս տածելով: Վերադարձիր Անզիա,
որպէսզի համբուրես նորա գերեզմանը, դար-
ձիր մեղ մօտ:

Ես մենակ մնացի՝ շառաւիզ այն բաղմա-
թիւ տոհմի, որ ոչնչացաւ մի բանի տարւայ
մէջ: Դու իմ սրդեղիրն հօ, ապրիր այսուհետե
ինձ հետ: Արի միթիժարելու թշւառ պառաւիս,
որը մէն մենակ ապրում է ամայի պարատում
և, իւր բայլերի ձայնը լսելով, վախենում է:
Ամբողջ տարիներ արդէն այստեղ չէր լսւում
երեխաների ուրախալի աղմուկներ ու աղաղակը:
Բայց մի տարի սրանից առաջ տունը լցւեցաւ
նոր կեանքով: այնտեղ, ուր շարժւում էր այդ
հրեշտակն, ուր նա չնշում էր, այնտեղ մշտա-
գալար այգի էր:

Նորա բերանից արտասահմած իւրաքան-
չիւր խօսրը բանաստեղծութիւն էր, նորա
շրթունքների իւրաքանչիւր ժպիտը մի համբոյր
էր: Նորա, այդ տիսուրի, հիւանդի և տանջուղի
միակ զւարճութիւններն, ընդհանուր էին այն
ամենքի համար, որոնք մօտենում էին նորան...

Արի, Վիլեամ և ժառանգիր սէրին ու
վիշտը: Նա քեզ և միայն քեզ է պատկանում,

մինչև քո գալլ նորան ոչ որ չի կարող պլզել:
ես արգելեցի տունը մատք գործել բոլոր հետարրիբներին, բայս հետաւոր աղքականներին և բարեկամներին։ Եյն տունը, որի մէջ ապրեց քո Էմման իւր վերջին օրերում՝ թեզ և միայն թեզ է պատկանում։ Թոյլ տուր ինձ միայն, որ քո գերեզմանատան պահապանը լինեմ։
Դու կդանես նորա բօեալլ բաց և պիւպետրի վերայ այն պիեսը, որ նա նւազեց վերջին անգամ։ Դու կդանես նորա մահճակալի մօտ, որի մէջ նա մեռաւ, բաժակում նորա թառամած,
բայց դեռ ևս անուշաբոյր ծաղիկները։ Դու կտեսնես նորա ժամացոյցը, որը կանգնել է նորա մահւանից 7 ժամ յետոյ, դու դեռ կենդանոյն կդանես նորա գեղձանիկը։ Նորա մօլքերտի վերայ դու կտեսնես դեռ չվերջացրած նկարը։ Դու կդանես անձեռնամուխ եղած նորա շորերը, նորա սիրած գրքերը, բոլոր այն գեղեցիկ առարկաները, որոնցով նա սիրում էր շրջապատել իրան... դու կդանես ամեն բան, միայն ոչ մեր Էմմային, որը խաղաղութեամբ հանգչում է պարտիզում, հօր կողքին։

Արի, Վիլեամ, շինի թէ կամենաս մեռնել
չիւսնդ սէր

հետու երկրում, օտարների մէջ, որոնք թեզ չեն հասկանում, այն մարդկանց մէջ, որոնք շէին ճանաշում նորան։ Արի, ներչնչիր քո էմմայի վերջին շունչը. նա ապրում էր միայն քս սիրուն, միայն թեզ համար։

Մեր Էմման զգում էր մահւան մօտենալին և վախենում էր նրանից, չնայած իւր բոլոր հաստատամտութեանը։ Վերջին օրերում նա խոյս էր տալիս մենակ մնալուց, բարկանում էր ամեն մի շնչին բանի համար աղախնի վրայ. իւր ընկերունու վրայ և շարունակ զրուած էր։ Նա, որ սովորաբար այնպիս համբերուի էր, սաստիկ հայնոյում էր աղախնին, բայց գորանից յետոյ զզում և թողութիւն էր խնդրում։

Նա պնդում էր, որ լաւ է զգում իրան, բայց հաղում էր առաջւանից շատ և ախորժակը կորցրել էր։ Նա մի քանի խօսք ասելով յոգնում էր, ամենաաննշան բարձրութեան վրայ ենելիս շնչասպառ էր լինում։ Ես առաջարկեցի նորան՝ կանչել թժկին. բայց նա բարկութիւնից կորցրեց իրան, ամբողջ երեսը բոպէապէս կարմրեց և ևս վախեցայ, մի գուցէ չերմն արդէն բռնել է նորան։ Բարկացած, անհանգիստ և ամեն բանից անբաւական, նա պառկեց ան-

կողինում։ Յանկարծ անակընկալ կերպով բարձրացաւ և նորից ընկաւ գլուխը բարձերի մէջ, մի ինչ որ սարսափով։ Մի ժամւայ ընթացքում նա բազմաթիւ գործ էր կատարում, կարգում էր, գրում, նւազում էր դաշնակի վրայ, փորձում նկարել, լրագիր էր պահանջում, քրքրում էր մատենադարանը։ Բայց նորան ոչինչ չէր բաւականացնում։

Օրւայ ամենաշոսկ ժամերին նա այնպէս էր
յոզինում, որ դուրս չէր գալիս սեննեակից. ևս
տեսնում էի, որ նա տանջում է, բայց չէի կա-
րողանում մխիթարել նորան. Ես փորձեցի ամեն
քան, որպէսզի պահպանեմ նորա մէջ բացու-
թիւնը, բայց նորան ներսից մաշող վիշտը սար-
սափելի զօրեղ էր, այդ պատճառով վերջապէս
ես թողի հարցերով և խորհուրդներով նրան
ձանձրացնելը. Նա, որ միշտ կարողանում էր
գուշակել ծածուկ մաքերն ու զգացմունքներն,
առանց խօսքելի, չիորհակալ էր լինում ինձա-
նից լուսթեանս համար:

Մի անդամ, այս նրա կեանքի վերջին
օրումն էր, զգալով ինձ ոչ բոլորովին առողջ
և տեղեկանալով Եմմայի մասին, իմացայ, որ
նա շատ վազ վեր էր կացել և փաթաթւելով

ծածկոցով դուրս էր գնացել տանից, գոռալով
աղախնին. «Ասացէք մօրաբրոջս, որ հս ուղեար-
ևցի Բաղ, առաջին գնացքըով, որպէսզի այցե-
լիմ հօրս գերեզմանին, և կդառնամ ճաշին:

Ամբողջ օրին ես անհանգիստ էի լինում և
շարունակ նայում էի ժամացոյցին. ինձ թւում
էր թէ ժամանակը շատ դանդաղ էր անցնում:

Վերջապէս, մօտ ժամը չորսին, նա վերա-
դարձաւ, ես վաղեցի նորա գէմ. նա զուհատ
էր՝ ինչպէս մահ և սարսափելի չնշարգելութիւ-
նից չէր կարողանում ոչ մի խօսք արտասանել:
Նա փորձեց ժպտալ, իբրև պատմութան այն
հարիւրաւոր հարցերի, որոնք նա կարդում էր
իմ երեսին. յետոյ շտապեց նեչարան և պառկեց
գահաւորակի վրայ, հասակով մէկ ձգւելով,
առանց հանելու ծածկոցը, գլխարկին և ձեռնոց-
ները: Նորա ձեռներն սառցի նման ցուրտ էին
և միայն անընդհատ դրողից ու խորը հաառ-
շանքներից հասկացւում էր, որ նա զիռ կեն-
դանի էր:

Ես այնպէս ուժեղ զանգահարեցի, որ
լարը կտրւեց և հրամայեցի, ըստ կարելոյն,
շուտ կանչել տնային բժշկին և լետոյ, աթոռ-
ներին ու պատերին յինւելով, հազիւ հազ դուրս

եկայ սենեակից, հիւանդին մի ճար անելու
նպատակով։ Ես ուզում էի մի անգամից հա-
զար բան անել, վրայ էի ընկնում մանանեխի,
կրակի, էսսենցիայի, պահանջում էի հրաւիրել
բոլոր բժշկներին, Լոնգոնի բոլոր գեղագործ-
ներին և, ամենից առաջ Վիենամին էի փնրում.
Ես կարծում էի, որ այդ վայրկեանին դու և
միայն դու կարով ես օգնել մեր էմմային։

Մի քանի բավեց յետոյ ես նորից մտայ
սենեակին և լսեցի ինչպէս Զեսովին աղաղակում
էր՝ «Օրիորդը վաղճանում է, միսս Էմման
մեռնում է»։

Ես մօտեցայ մահճակալին և ահօայ, որ
Էմման մեղրամոմի նման գունատւել է, նորա
արինեագուրկ շրթունքներն արինաշաղախ էին
եղել. նա պարկած էր քարձի վերայ, լճացած
արեան մէջ, որը թափւած էր նաև մահճակալի
ու գորգի վրայ; Նորա շրթունքները բաց ու
խուփ էին լինում, վերջին հառաշանքներն ար-
եան հետ խառնում էին; Ես յարձակւեցի գէ-
պի նա, պինդ գրիկեցի նորան և գուացի «Էմ-
մա, Էմմա» այնպէս բարձր, որ ինքս իմ ձայ-
նից վախեցայ։

Էմման բացեց աշրերը, փորձեց խօսել և,

բարձրացնելով ձեռքը, ցոյց աւեց գրասեղանը.
յետոյ հաւարելով իւր վերջին ոյժերը, մօտե-
ցրեց շրթունքներն իմ ականջին և պարզ ու
որոշ արտասանեց քո անունը—օ, Վիլեամ։
Գորանից յետոյ նա ընկաւ դէպի յետ և ուշըր
կորցրեց։

Երկու օր ու զիշելի ես, նիրելի Վիլեամ,
խելագարի նման էի. ես բաց էի անում աշքերս
միայն նրա համար, որպէսզի լամ, միայն այն
պատճառով, որ համոզւեմ թէ, ես թշւառ եմ
և միայնակ։

Մի քանի օրից յետոյ, յիշելով ձեռքի վեր-
ջին շարժումը, որով էմման ցոյց էր տւել գրա-
սեղանը ես մօտեցայ նրան սրբազն ռարսու-
ով և արկող բաց արի։ Եյսանդ աշքիս ընկաւ
քո հասցէսի կիրւած նամակը։

Վիլեամ, ես այն քեզ եմ ուղարկում, ծած-
կելով ծրարն անվերջ համբոյներով։

Ես նախազզում եմ, որ մեր հրեշտակն
աւանդել է քեզ այդ թերթում մի սրբազն
միտք, որ քո հոգու համար բալասն պիտի
լինի։ Ես նախազզում եմ, որ այդ թերթը քեզ
քաջութիւն կտայ կեանքի համար, ոյժ կտայ

յաւսոյ համար և չեմ կարող բաժանել այդ
վերջին գանձից. ես սաստիկ վախենում եմ, որ
մի գուցէ, նա կորչի երկարատես ճանապարհոր-
դութեան միջոցին. Թող հրեշտակը նորան իւր
հովանաւորութեան տակն առնի և ամբողջու-
թեամբ քեզ հասցնի ծովերի ու ովկիանոսների
վրայով:

Վիլեամ, ես գիտեմ, որ իմ նամակով քեզ
համար մի այնպիսի սարսափելի տանջանք եմ
պատրաստում, որպիսին միայն կարող է տանել
մարդկային սիրտը, բայց չէ որ ես ես նոյնպէս
լալիս եմ և տանջւում և ապրում եմ միայն
նրանով, որ սպասում եմ քեզ: Ես կհամարեմ
օրերն ու ժամերը, քանի որ գիտեմ, որու ինձ
մօտ կաս հէնց առաջին փոստային շսպենաւով,
որ գուրս կգայ Պահամայից: Իսկ մինչև այն
ժամանակ բոլոր հետարքրիներին ու բարե-
կամներին հեռու կպահեմ այն տանից, ուր մեր
էման էր ապրում: Ոչ ոք չի պիտի դիպչի
այն զրքերին, ծաղիկներին, նորա պիանոյին,
այն բոլորին, որ նորան էր պատկանում:

Ոչ ոք չպէտք է ման գայ այն մայրիների
տակ, որտեղ նա հանգչում է իւր հօր հետ: Նա
ինձ յաճախ տօսում էր, որ կցանկանար իւր

ժամանակին պառկել այստեղ. այստեղ էլ թա-
ղեցի ես նորան ընդ միշտ:

Արի, ըստ ծեր մօրաքոյը Անհայի հետ միա-
սին լալու մեր թանկագին գերեզմանի վրայ:
եկ, Վիլեամ, շնուր եկ, ես սպասում եմ քեզ:

Յետոյ յաջորդում են ամենապեղեցիկ և
ամենասուրբ արարածներից մէկի վերջին խօս-
քերն, այնպիսի արարածի, որպիսին միայն ծի-
ծաղել և լացել է երբեկցէ մեր երկրի վերայ:
Էմմայի վերջին նամակի թիւն է յուլիսի
14, նորա մահան նախընթաց օրը:

Էմման Վիլեամին.

Լոնդոն, յուլիսի 14-ին 18..թ.

Վիլեամ, ես գգում եմ, որ պիտի մեռնեմ:
Ես այդ մասին չեմ ասել ոչ մօրաքոյը, ոչ
քժշկին, որպինետե զիտեմ՝ բոլորն անօպուտ է:
Մագերայի բաղցը կլիման իմ վէրքի վրայ թե-
թի ծածկոց քցեց, բայց Լոնդոնի մասախուզ-
ները նորից բայրայեցին նորան և նա աւելի
սոսկալի գարձաւ, բան երբ և իցէ: Ես ոյժ չու-

նեմ այլ ես ապրելու և ինձ համար մեծ ցաւ
է այն միայն, որ պէտք է մեռնեմ՝ առանց ըեղ
վերջին անգամ տեսնելու։ Եւրաքանչիւր ժամ,
ամեն մի բաղէ դարձնում եմ հայեցքս դէպի
քո պատկերն և նայում եմ այնպիսի ցանկու-
թեամբ, որ կարծես, զու պէտք է պառ վեր-
ջին անգամ ինձ տեսնելու։ Բայց զու շետ
գալիս։

Եւ յետոյ ինձ ստրափեցնում է այն
միտրը, որ ես այսպէս յանկարծ պէտք է մեռ-
նեմ։ Ես զգում եմ կրծքս մէջ բորբոքող հուրը։
Ինձ թւում է, որ ահա—ահա, բոպէ առ բոպէ
այնտեղ մի բան պիտի պայիթի։

Այդ բոլորը ոշինչ, իմ Վիլեամ, բոլոր մարդիկն
էլ մեռնում են. մեռնելը գուցի, շատ հեշտ է։

Ես իմ մէջ զգում եմ մի աստւածային ցրե-
ծութիւն, որն ինձ արիութիւն է տալիս, որն
ստիպում է ինձ հապրտանալ նրանով, որ ես
ապրել եմ, որ ես ծանօթացել եմ քեզ հետ,
որում էի քեզ և որ զու ինձ սիրում էիր։

Բայց որբան եսական ենք մենք։ Իմ մահը
մօտ է և ես ուրախանում եմ, ինչպէս փոքրիկ
աղջիկ, այն երջանիկ միամտութեամբ, որ զու
չես պատկանի այլես ուրիշ ոչ մի կնոջ, որ զու

միայն իմ էիր և իմ էլ կմնաս մինչև վերջը։
Դու չափազանց սիրում էիր ինձ։ Ես թող-
նում եմ քեզ յիշողսւթիւնների չափազանց հա-
րուստ զանձ, չափազանց շատ կենդանի զգաց-
մուներներ, որպէսզի զու կարողանաս պատկա-
նել ուրիշին։ Այդ միտրն արբեցնում է ինձ
ուրախութեամբ։ Միրտս այնպէս ուժգին է
խփում, որ կարծես ուզում է ինձ անշնչացնել։
Ես ձեռներով բռնում եմ իմ անբաղդ կուրծքն
և խխոտ ճնշում եմ նորան... Իմ, դէպի քո
ուշն ունեցած հաւատն այնքան անդրգւելի է,
ինչպէս հաւատո առ Աստւած։

Հայր իմ, ես կատարեցի իմ պարտքը։
Վազր ես կայցելեմ քո զերեզմանին, կշշնչամ
քո ականջին, որ քո էմձան պահեց իւր խօսքը,
որ նա արժանի է քեզ, որ նա մեռնում է, չը
թողնելով աշխարհում ուրիշ դժբաղդ արա-
րածներ, որոնք հալւէին աստիճանաբար այն-
պէս, ինչպէս ենա, բայց որոնք, կարող է պատա-
հել, պիտի անիծէին իրենց ծնողների կեանքը։

Իմ ծնւելու միզրը քո վերայ չի ընկնում,
թանկագին հայր. զու շգիտէիր, որ հիւանդ
ես, երբ ինձ կեանք տւիր։

Տեսնում ես, թանկագին Վիլեամ, ես իրա-

Հունքը ունէի հակառակել քո սիրաւն և շմաս-
նակցելու քո յօյսերին։ Մագերայի կլիման օպ-
նեց իմ վերքին միայն ձգձգւելու, բայց չբժշկեց
ինձ։ Եթէ դու ամուսնանայիր ինձ հետ, մենք
կունենայինք անբազդ զաւակներ։ Յաւիտենա-
կան խղճի խայթը պիտի թունաւորէր մէր սէ-
րը, ես չի պիտի կարսդանայի մոտածել հօրու
մասին։ Դա մի դժոխը կլինէր։

Բայց դու պէտք է ապրես, թանկապին
Վիլեամ։ Դու պէտք է երգւես այս բանի վերայ,
այստեղ ներքւում, այս ճիւղի վերայ, որին
վերջին անգամ կպել է քո էմմայի դժոյն,
լզար ձեռքը, դու պէտք է այդ մասին ինձ
գրաւոր երգում տաս։ Դու պէտք է երգւես այն
առաջին ծագիսվ, որ բազեցիր ինձ համար
Բատ պուրակում, երբ առանց խօսրերի խոս-
տովանեցիր քո սէլլը։ Դու պէտք է երգւես
այն մագերի «հուսով», որը մի անգամ համբու-
րեցիր դու սիրուց յափշտակւած։ Սորա—յիշա-
տակներն են քո էմմայի։ Երբ կհամնի քո վեր-
ջին օրը, հրամայիր թաղել դոցա քեզ հետ։
Պահիր այդ բոլորը, մինչև մեր միմեանց երկըն-
քում հանդիպելը։

Սիրելի Վիլեամ, դու ոչ ո՞՛ պէտք է

ապրես, ոչ, դու պէտք է լցնես քո կեանիքն
արիական և աղիիւ մեծագործութիւններով։

Քո վայրուն միտքը կարող է ամեն տեղ
գտնել քեզ համար զարծունէսութեան առպարեզ։
Դիտութեան մէջ, նոր և վտանգաւոր ճանապար-
հորդութիւններում, բազարականութեան առ-
պարիզում դու կարող ես և պէտք է լինես
միծ, օգտակար և զօրաւոր։

Արա այն բոյոր լաւ բաները, որ ես մե-
նակ, որսնը մենք միասին չակրողացանք անել։
Արա և այն ժամանակ ես ինքս կզգամ, որ
իզուր չապրեցի, որովհետեւ իմ լիշատակը միշտ
կուղելցի քեզ՝ քո պատերազմներում, աշխա-
տանքներում և հոգսերում։ Ես մեռնում եմ այն
հալարտ գիտակցութեամբ, որ քեզ թելատրեցի
բարձր և աղնիւ զգացմունքներ, որ քեզ մզեցի
գէպի վեհ և օգտակար գործունէութիւն։

Երբ քո միտքն առանձնառնեալի լուռ-
թեան մէջ կթափանցէ աշխարհի ծածկւած
գաղտնիքներում և կպանի մարդկանց համար
բարձր ճշմարտութիւններ, յիշիր, որ քո էմմա-
յի ստուերը քեզ մօտ է, որ նա նայում է քեզ
և դւարձանում։

Երբ Վանիկուես ազատաւթեան համար,

բազարական ձգտումների բացերի մէջ, երբ քս
վերայ ուղղւած կրինին ահապին բանակութեամբ,
ցնծութեամբ վաւող աշըեր, միտդ բեր, որ
քո էմմայի ուրականիր հէնց այնտեղ, ամբոխի
մէջն է, որ նա հրճւած ծափահարում է քո
տրիումֆը* և ուրախութիւնից լալիս է:

Եւ եթէ զու կմոնես ազրատի խրճիթն և
կարբես տանջւողի արցունքները, կամ եթէ զու
ամբողջովին կնւիրես քեզ ազրատութեան և
թշւառութեան վշտալի հարցերի մշակմանը,
այն ժամանակ իմացիր, որ ես քեզ տեսնում
եմ, որ ես լուս եմ քեզ, որ ես լալիս եմ և
ուրախանում քեզ հետ միասին:

Եւ երբ զու կոփտես բնութեան զեզեցկու-
թիւնը, որով մենք այնքան յաճախ զւարճանում
էինք, կապոյտ փայլը ջինչ երկնքի, լուսնի թափ-
ածալի լոյսն, անտառի խորհրդաւոր լուսութիւնը,
առւակի ալիքների ծփանքը կամ ծովի մորի-
չիւնը, իմացիր, որ ես քո կողքին եմ, անտես-

* Τρίυμφος—triumphus. յաղթսպ հերո-
սի հանդիսաւոր զնացը:

նելի և լոիկ, բայց տանջւած ցանկութիւննե-
րից ու բազդից...

Նւիրիր ինձ քո լաւ զործերը, քո սուրբ
սկզբունքները, քո սուրբ սգհարութիւնը, քո
էմման կհպարտանայ գորանով:

Նա սպասում է քեզ, այս, նա սպասում է,
որպէս զի սեղմի քեզ յաւիտենական գրկում
իւր որտին:

Քո էմման բաժանեում է քեզանից և սպա-
սում է քեզ մի այլ աշխարհում:

Մնաս բարեաւ: Եղիր մեծ, եղիր օգտա-
կար և ոգի ներշնչիր տանջւողներին տպնջան-
քի մէջ: Ասլրիր և սիրիր ինձ, ինչպէս ես, որ
յաւիտեան պիտի սիրեմ քեզ:

— օ ժ ո ւ —

Նամակի վերջում կարելի էր նշմարել հետե-
ւեալ տողերը, որ գրւած էին գողգոչին ձեռքով:

«Երգւում եմ քեզ, ես օգտակար կլինեմ,
ես կզործեմ: Երգւում եմ այս բանում քս սի-
րոյ անունով»:

Վիլեամ.

Կոփտո, հոկտեմբերի 27.

Էմմայի և Վիլեամի նամակներն ստանալուց
յիտոյ ուեռ երեար ժամանակ ես սպասում էի

աւելի հեռաւոր տեղեկութիւնների իմ՝ անբազդ
բարեկամի մտսին, բայց իզուր:

Տասը տարին արդէն անցել է և ես իրա-
ւունք ունիմ հրատարակ հանել այդ ջերմ սի-
րահարական նամակներն երկու ազնիւների այն
արարածներից, որոնց երբ և իցէ ես ճանա-
շել եմ:

Վճռելով այդ, ես նախորօք մի քանի ան-
գամ գրեցի Անգլիա—Վիլեամին և Աննա մօրտ-
քրոջը. բայց իմ նամակներն անպատճախան
մնացին: Վիլեամի նշանակած ժամանակին անցել
է արդէն և դորա համար ես իրաւունք ունիմ
հրատարակել այն թերթերը, որ նա ուղարկել
էր ինձ:

Ես հաստատ համոզւած եմ, որ այդ նամակ-
ների ընթերցումը ոչ սրի չի վնասի, այլ շա-
տերին կարող է նոյն իսկ օգուտ բերել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0318348

8105

85

U-27